


Հ. Ստեփանյան

ՀԱՅ  
ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԵՐԸ  
260 ՏԱՐԻՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

2002 46 Уральская степь

Бородавчатник

буме

1957

Документ №

Новосибирск



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
АРМЯНСКОЕ ГЕОГРАФИЧЕСКОЕ ОБЩЕСТВО

И. С. СТЕПАНЯН

АРМЯНСКИЕ  
КАРТОГРАФИЧЕСКИЕ ИЗДАНИЯ  
ЗА 260 ЛЕТ  
(1695—1955)

КРАТКИЙ ОЧЕРК

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1957

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԴ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

912

Հ. Ա. ԱՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
260 ՏԱՐՈՒՄ

(1695—1955)

ՀԱՄԱՊՈՏ ԱԿՆԱՐԿ

12165 14184

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԴ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ

1957

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի  
Խմբագրական-հրատարակչական խորհրդի ոռումամբ:

## Ն Ե Բ Ա Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Հայ քարտեզագրական հրատարակություններ» մեր հասմառուա ակնարկը գրելիս ելակետ ենք ընդունել այն կարևորագույն փաստը, որ անմահ Աբենինը քաղաքացիական կոիվները՝ վերջանալուց հետո (դեռևս 1921 թվականին) սովետական գիտնականների ուշադրությունը հրավիրեց աշխարհագրական քարտեզների, առավել տնտեսական ատլասի հրատարակության անհրաժեշտության վրա, միաժամանակ նշելով սովետական քարտեզագրության զարգացման ուղիները, կազմակերպութիւն ու նպատակադրումը:

Գիտության կորիֆեյ Անինի ցուցումները քարտեզագրության խնդիրների մասին մեզ համար հանդիսանում են տեսական և գործնական հիմնական դրույթներ:

Քարտեզագրական հրատարակությունների նշանակությունը ժողովրդական տնտեսության զարգացման, երկրի կառուվարման ու պաշտպանության, գիտությունների առաջադիմության, մասսանների լուսավորության, ինչպես և, ընդհանրապես, մարդկային կուլտուրայի համար ակնհայտնի է:

Անցյալում «Հայ քարտեզագրական հրատարակություններ» աշխատություն, որն ընդգրկեր ընդարձակ ժամանակաշրջան, չի եղել: Այդ աեսակետից այս աշխատությունը հանդիսանում է առաջին փորձը, և որպես այդպիսին, անշուշտ, չի կարող լինել լրիվ և անդերծ թերություններից:

Հայ քարտեզագրական հրատարակությունների մասին մեր ակնարկը պարունակում է չորս հիմնական մաս՝ 1) Ընդհանուր գիտողություններ, 2) Հայ քարտեզագրական հրատարակությունների ցուցակ, 3) Հայ քարտեզագրական հրատարակությունների առանձին նշանագոր համարվող նմուշների զննությունը (անալիզը) և 4) Սովետահայ քարտեզագրության խնդիրները:

Այս աշխատությունն ընդգրկում է հայ քարտեզագրական հրատարակությունների ավելի քան երկու և կես դարի պատմությունը: Սկսվում է 1695 թվականից, երբ Ամստերդամում Վանանդեցի Թոմաս, Դուկաս, Միքայել Նուրիջանյանների և Մատթևոս Հովհաննիսյանի ջանքերով լույս է ընծայվել առաջին տպագիր հայերեն քարտեզը՝ «Համատարած աշխարհացոյցը» (աշխարհի քարտեզը կիսագնդերով), մինչև մեր օրերը՝ 1955 թվականը:

Այս աշխատությունը նկատի չունի հայ ձեռագիր քարտեզները, քարտեզներ, որոնց XIII, XV, XVI դարերից մնացած նմուշները կարելի է գտնել Երևանի պետական մատենադարանում: Հայ ձեռագիր քարտեզների ուսումնասիրությունը մի այլ կարեռը խնդիր է, որով զբաղվել է աշխարհագրական գիտությունների թեկնածու Հովհ. Հովհաննիսյանը:

Մեր նպատակն է կազմել հայ քարտեզագրական հրատարակությունների ցըված օրինակների ցանկը, զննել նրանցից մի քանի կարեռը նմուշները, նշել հայ տպագիր քարտեզագրության արդի խնդիրներ:

I U A U

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՑՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՀԱՅ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

---

Խ՞ՆՉ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ. «ՀԱՅ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԱՆՎԱՆ ՏԱԿ

«Հայ քարտեղադրական հրատարակություններ» անվան տակ նեղ իմաստով կարելի է հասկանալ միայն այն քարտեղադրական հրատարակությունները, որոնք լույս են տեսել հայերենությաց այդ սահմանափակ կլինիք: Հայերեն լույս տեսած քարտեղադրական օրինակներին անհրաժեշտ է ափելացնել նաև Հայաստանում հայերի ուժերով այլ լեզուներով տպագրված զանազան քարտեղագրական հրատարակություններ: Սակայն, հիմք ունենք կարծելու, որ այդ լրացումը ևս բավական չէ: Մեզ հայտնի են քարտեղագրական հրատարակություններ, որոնք լույս են տեսել Հայաստանից գուրս և ոչ-հայերեն, որոնց նախաձեռնողները կամ հրատարակիչները, կազմողները կամ խմբագիրները, մասնակցողները կամ գիտական խորհրդատունները եղել են հայերէ Օրինակ, Ա. Խուդաբաշյանը 1858 թվականին Պետերբուրգում հրատարակելով „Օբօզրենիա Արմենիա“ աշխատությունը, կցել է նրան Հայաստանի և հարևան երկրների քարտեղները ուռուսերեն. կամ թէ Փարիզում 1920 թվականին Զ. Խանզադյանը հրատարակել է Հայաստանի Ասլասը պատմական քարտեղներով (գլւխավորապես 18 տախտակից), հայերեն, Փրանսերեն և այլ լեզուներով: Այսպիսով, քիչ չեն նման հրատարակություններ, որոնք հայ գիտական մտքի և աշխատանքի արգասիք են: Ուստի, մենք հակում ունենք կարծելու, որ այդ հրատարակությունները ևս կարելի է պայմանական կարգով, որոշ հիմունքներով, համարել հայկական քարտեղագրական հրատարակություններ:

Հայ քարտեղագրական նախկին հրատարակությունների նպատակն է եղել բավարարելու առաջին հերթին հայ առևտրական խավի և ապա մասամբ ընթերցաներ հասարակության կուլտուրական պահանջները: Այլ է սովետական ժամանակի հրատարակությունների իմաստը: Իսկ թէ ինչու են մինչ Հա-

յաստանում սովետական կարգերի հաստատումը հայ քարտեզագրական, ինչպես և հայ այլ հրատարակությունները հայաստանից գուրս տեղի ունեցել, այդ պայմանավորված է եղել ժողովրդի անցյալի պատմությամբ, երբ երկիրը նվաճված լինելով, ժողովուրդը ստիպված էր իր գործունեությունն այլ երկրներում ծագմալել:

### ՀԱՅ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԶԱՐԴԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆԵՐԸ

Չի կարելի զննել հայ քարտեզագրական հրատարակությունները և դիտել նրանց երկու և կես դարի զարգացման ուղիները, առանց ստորաբաժանելու այն՝ ըստ ժամանակագրական կարգի:

Պատմական ակնարկի ժամանակագրական ստորաբաժանումները անհրաժեշտ են ոչ միայն նյութի ուսումնասիրությունը դյուրին գարձնելու համար, այլև դրանք կարեոր են ըստ էության: Երկու և կես դարը ներկայացրել են տարրեր ժամանակներ, ընդգրկել են զանազան պատմա-քաղաքական միջավայրեր և ունեցել են տարրեր սոցիալ-տնտեսական կարգեր:

Խնդրի կարեռությունը թերևս այն չէ, թե հարկավոր է ստորաբաժանել երկու և կես դարը ժամանակաշրջանների, այլ այն՝ թե ի՞նչպես բաժանել, ի՞նչը հիմք ընդունել այդպիսի ստորաբաժանման համար:

Հետեւելով վերջերս Հայկական ՍՍՌ գիտական հրատարակություններում կատարված փորձերին, մենք համամիտ ենք այդ երկու և կես դարը՝ 1695 թվականից մինչև 1955 թվականը, ստորաբաժանել երեք հիմնական ժամանակաշրջանների, որոնք սակայն, համաչափ չեն ըստ իրենց տեսողության և միակերպ չեն ըստ իրենց բովանդակության՝ թե պատմա-քաղաքական ու սոցիալ-տնտեսական տեսակեաններից և թե հայ տպագիր քարտեզագրության զարգացման տեսակեամբ:

Այդ ժամանակաշրջանները հետեւյալներն են՝  
ա) Հայ քարտեզագրական հրատարակությունները մինչև Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելը, ը) Հայ քարտեզագրական հրատարակությունները Ռուսաստանում մինչև Հոկտեմբերյան ռեվոլյուցիայի հաղթանակը, գ) Սովետահայ քարտեզագրական հրատարակությունների ժամանակաշրջանը:

Ա) ՀԱՅ ՔԱՐՏԵԶԱԿՐՄԱԿԱՆ ՀԲԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՒԶԵՎ, ԱՐԵՎԱԼՑԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՅՎԵԼԸ

Այդ ժամանակաշրջանը տևել է 133 տարի, XVII դարի վերջից մինչև XIX դարի առաջին քառորդը ներառյալ, այսինքն՝ 1695 թվականից, երբ լույս է տեսել առաջին հայերեն տպագիր քարտեղը, մինչև 1828 թվականը, երբ Արևելյան Հայաստանը միացվել էր Ռուսաստանին։ Այդ ժամանակաշրջանում երկրի և ժողովրդի վրա ծանրացել էր թյուրքական և պարսկական բռնակալական ծանր լուծը։ Արևմտյան Եվրոպայում սկսել էր զարգանալ կապիտալիստական հասարակարգը, մինչդեռ բռն Հայաստանում տիրում էին բացարձակապես ֆեոդալական կարգերը։ Հայաստանը տնտեսապես և կուլտուրապես հետամնաց երկիր էր, աշխատավոր ժողովուրդը ճնշված և հալածված էր. շատ թե քիչ աչքի էր ընկնում վաճառական դասը և որոշ գեր էր կատարում հոգմորականությունը։ Այդ ժամանակ հայ կուլտուրական կենտրոնները, քարտեզագրական հրատարակությունների վայրերը գտնվում էին հայրենիքից շատ հեռու՝ Ամստերդամ, Վենետիկ, Վիեննա, Փարիզ։ Այդ ժամանակաշրջանը հայտնի է հայ քարտեզագրական առաջին հրատարակություններով, որոնք լույս են ընծայվել արտասահման մեկնած հայերի և Միսիթարյան միաբանությունների կողմից։

Բ) ՀԱՅ ՔԱՐՏԵԶԱԿՐՄԱԿԱՆ ՀԲԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ  
ՄԻՒԶԵՎ, ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Այդ ժամանակաշրջանը տևել է XIX դարի 2-րդ քառորդից մինչև XX դարի առաջին քառորդը, այսինքն՝ 1828 թվականից մինչև 1920 թվականը (92 տարի տեղողությամբ)։ 1828 թվականից Արևելյան Հայաստանի զգալի մասը ոռւս մեծ ժողովրդի օգնությամբ ազատագրվել է պարսկական լծից, իսկ 1877 թվականին մի այլ փոքր մասը՝ Թուրքական լծից։ Հայաստանի մասերը մըտնում են համեմատաբար ավելի կուլտուրական պետություն հանդիսացող Ռուսաստանի տերիտորիայի կազմի մեջ։ Այդ ժամանակ հայ ժողովրդի մեջ սկսում է ավելի զարգանալ առեւրական դասը, առաջանում է հայ բուրժուական դասակարգը, որի հենակետը հետագայում հանդիսանում է արդյունաբերությունը։

Անգրկովկասում սկսում են զարգանալ կապիտալիստական կարգերի առանձնահատկությունները։ Աստիճանաբար հայ ժողովրդի առաջադիմական տարրերը համախմբվում են Ռուսաս-

տանի կուլտուրական կենտրոններում՝ Պետերբուրգում ու Մոսկվայում, առավել ևս Թիֆլիսում ու Բաքվում։ Հայ քարտեզագրական հրատարակություններն հիշյալ ժամանակից սկսել են լույս տեսնել այդ քաղաքներում։

Բայց հայ ժողովրդի արևմտյան հատվածի կյանքում դեռևս շարունակում են կուլտուրական որոշ գեր խաղալ վենետիկը, Վիեննան, Փարիզը և այլն։

Վերսիչյալ երկու ժամանակաշրջաններում, 225 տարվա ընթացքում Հայաստանի տերիտորիայում լույս չի տեսել և ոչ մի հայ քարտեզագրական հրատարակություն։ 2-րդ ժամանակաշրջանում կարող ենք միայն նշել, որ քարտեզագրական կենտրոնները մոտեցել են Հայաստանին։

Իսկ XX դարի 1918—20 թվականներին, դաշնակների տիրապետության օրերին, հայ ժողովրդի կյանքը դառնում է դժբնողակ։ Պատերազմների և սովոր մատնված հայ ժողովուրդը ժամանակ և հնարավորություն չուներ մտածելու քարտեզագրական հրատարակությունների մասին։

#### Գ) ՍՈՎԵՏԱՀԱՅ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո, ինչպես հայ ժողովրդի կյանքում, այնպես էլ հայ քարտեզագրության ընագավառում, սկսվում է մի նոր լուսավոր դարաշրջան, որը Հայաստանում սովետական կարգերի հաստատվելու 36-ամյակին, բոլորում է 33 տարին։

Հայաստանը դառնում է սովետական, ազատ և անկախ երկիր ու միանալով եղբայրական սովետական սոցիալիստական ռեապուրիկաններին, նրանց հետ կազմում է 15 իրավահավասար ՍՍՌ-ների Միություն՝ ՍՍՌՄ։

Հայ ժողովուրդը դառնում է սոցիալիստական ազգ, ձեռք է բերում ձեռվ ազգային և բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրա։

Երեանը դառնում է հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական և կուլտուրական կենտրոնը։ 1923 թվականին Հայաստանի տերիտորիայում (Երեանում) առաջին անգամ հրատարակվում է հայերեն քարտեզը՝ Սովետական Հայաստանի քարտեզը։ Հայաստանի այդ ժամանակաշրջանում լույս տեսած հայ քարտեզագրական հրատարակությունները մի քանի անգամով գերազանցում են

նախորդ՝ առաջին երկու ժամանակաշրջանների հրատարակություններին թե անունով ու քանակով, և թե տեսակներով ու բնույթով:

Սովետական ժամանակաշրջանի հայ քարտեզագրական հրատարակությունները դասնում են մասսայական-ժողովրդական, բովանդակությամբ՝ բազմապլան:

Այժմ՝ Սովետական հայաստանում հայ քարտեզագրության առաջ ծառանում են գիտական և կազմակերպչական նոր կարևոր խնդիրներ:

### ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱԽՈՒՄՆ ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻՑ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՍՏԻճԱՆԻՑ

Քարտեզագրության զարգացումն ընդհանրապես, և հայ տպագիր քարտեզագրության զարգացումը մասնավորապես, կախումունի մի շարք պայմաններից:

Առաջին հերթին քարտեզագրության զարգացումը սերտութեն կապված է աշխարհագրական գիտության զարգացման աստիճանի հետ: Քարտեզագրության մեջ արտացոլվում է Երկրի աշխարհագրական հայտնագործությունների չափն ու ծավալը, Երկրի աշխարհագրական ուսումնական միջոցների միջոցով կարելի է համարյա անսխալ կերպով եզրակացություններ անել աշխարհագրական գիտության վիճակի մասին տվյալ ժամանակամիջոցում և տվյալ երկրում:

Քարտեզագրությունը սերտորեն կապված է նաև տեղագրության (տոպոգրաֆիայի) և գեոդեզիայի հետ. անվիճելի է այս գիտությունների գերը քարտեզագրության նկատմամբ, այսինքն՝ թե որ չափով են տարածությունները հանութի վերածված և թե ինչ պրոյեկցիաներով է գնդաձև Երկրի ամբողջ, կամ մի որևէ մասի մակերևույթը անցկացվել հարթ թղթի վրա: Այդ բոլորը մեծ նշանակություն ունեն քարտեզագրության համար:

Ոչ պակաս կարենու են քարտեզների ձեւավորման խնդիրները, տպագրական տեխնիկան, քարտեզագրական հրատարակությունների պատրաստման ամրող պրոցեսը:

Մինչ Սովետական իշխանության հաստատվելը մեղ մոտ, Հայաստանում չի եղել ոչ մի գիտական հիմնարկություն և չի եղել քարտեզագրական հրատարակությունների համար որևէ հիմնարկ, գիտական և տեխնիկական բազա:

Ուստի և մինչեւ 1920 թվականը հայ տպագիր քարտեզագրությունը ամբողջապես դանվել է օտար, հեռավոր կամ մոռակա վայրերում:

Հայ տպագիր քարտեզագրությունը գիտական և տեխնիկական տեսակետից առաջին ժամանակաշրջանում (1695—1828) կը ել է հոլանդական, գերմանական, ավստրիական, ֆրանսիական, իտալական քարտեզագրության ազդեցությունը:

Երկրորդ ժամանակաշրջանում (1828—1920) հայ քարտեզագրության պատմության մեջ մեծ դեր է կատարել սուսական (արևելակելքովական) միջավայրը՝ կապիտալիստական հասարակարգին համապատասխան:

Վերջապես երրորդ ժամանակաշրջանում հանդես է գալիս ըուն Հայաստանը, որը իր վրա կրում է սովետական-սուսական կուլտուրայի բարերար ազդեցությունը:

Ոչ մի ըստե մոռացության չենք տալիս այն, որ և՛ աշխարհագրական գիտության և՛ քարտեզագրության տեխնիկայի վիճակը վերջին հաշվով պայմանավորված են եղել արտադրողական ուժերի զարգացումով, կախում են ունեցել տիրող դասակարգի շահերից և ուղղություն են ստացել հասարակական կարգերին համապատասխան:

Զարմանալի չե, որ առաջին ժամանակաշրջանում հայ ցրված վաճառականության տնտեսական պահանջները բավարարելու համար տպագրվել են աշխարհի քարտեզներ, իսկ այն ժամանակված կրթված հոգկոռական դասի գաղափարախոսության համապատասխան՝ լույս են ընծայվել «Աւետեաց Երկրի», «Սուրբ Երկրի» քարտեզները: Տուրք տալով քաղաքական իշխանության, մոմենտի պահանջներին՝ ապագրել են Օսմանյան պետության և այն ժամանակ նրան ենթակա՝ Ոսփորի, Ղրիմի, Սև ծովի քարտեզները, ինչպես և պատմական Հայաստանի քարտեզները:

Հետագայում, երբ ոռւսական իշխանության տիրապետության ժամանակ՝ Անդրկովկասում զարգանում է արդյունաբերական կապիտալը, տեսնում ենք ինչպես այդ դասակարգի շահերին համապատասխան և ազգայնական նպատակներով տպագրվում են ժամանակակից Անդրկովկասի, Հայաստանի և հարևան երկրների (որպես տնտեսական շուկաների) քարտեզները:

Վերջապես, երրորդ ժամանակաշրջանում, Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ուկոյուցիայից հետո, պրոլետարիատի հաղթանակի և Սովետական իշխանության հաստատման շնորհիվ,

ինչպես Ռուսաստանում, այնպէս էլ Հայաստանում ստեղծվում է նոր հասարակարգ՝ նոր պահանջներով:

Սովետական Հայաստանի աշխատավոր ժողովրդին աջակցելու, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, Հայաստանի բնական հարստություններն օգտագործելու համար անհրաժեշտ էր բարձրացնել աշխատող ժողովրդի բուսավորությունը, հաստատել գիտական հիմնարկներ, ուսումնասիրել երկրի արտադրողական ուժերը և արտադրական հարաբերությունները:

Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության ջանքերով Հայաստանում ստեղծվել են Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան իր ՅՅ գիտահետազոտական հիմնարկներով, Երեանի պետական համալսարանն ու 14 այլ բարձրագույն ուսումնական հիմնարկներ, որոնք բազմակողմանի ուսումնասիրում են երկրի բնական հարստությունները: Մեր ժամանակաշրջանում ուսումնասիրության, ինչպես նաև քարտեզագրության օրյեկտներ են հանդիսանում Հայաստանը, Սևանա լիճը, Հրազդան գետը, Արագած լեռը, Արարատյան գաշտը, Հայկական ՍՍՌ արոտները, հանքերը, անտառները, կուրորտները և այլն, նաև ՍՍՌՄ (և նրա մասերը), որպես մեր մեծ Հայրենիք: Իսկ ընդհանուր կրթության տեսակետից ուսումնասիրվում և հրատարակվում են նաև գլոբուսներ, աշխարհի, աշխարհամասերի քարտեզներ և այլն:

Արդի հայ քարտեզագրությունը սերտորեն կապված է սովետական-ուսումնական քարտեզագրության և աշխարհագրական գիտության հետ:

### ՀԱՅ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայ տպագիր քարտեզագրությունը, սկսած 1695 թվականից մինչեւ մեր օրերը, հայտնի է բազմապիսի տեսակներով: Այդ բազմապիսությունն աշքի է ընկնում առավելապես երրորդ՝ սովետական ժամանակաշրջանում:

Հայ քարտեզագրական հրատարակությունների մեջ, որպես ընդհանուր կարգ, հայտնի են հիմնական երեք տեսակներ՝ գլուխուններ, առլասներ և առանձին քարտեզներ:

Պատրաստված գլոբուսները, թե՛ շարժականը (պորտատիվ)՝ (25 սմ տրամագծով) և թե՛ մեծադիր թանգարանայինը՝ (60 սմ տրամագծով), թե՛ առանցքով են, ունեն աշխարհագրական առտիճանացանց, գունավոր են, հենված են պատվանդի վրա: Քար-

տեղադրական հրատարակությունների շարքում սովորաբար գլուրունները սակավաթիվ են:

Աշխարհագրական ատլասները\* տարբեր չափսի են, սկսած գրպանի ծավալից մինչև սեղանինը՝ պարունակում են 3-ից մինչև 20 և ավելի քարտեզագրական թերթ (կամ ինչպես արևմտահայերեն են առում, հետևելով այլազդիների օրինակին, տախտակ): Ատլասի քարտեզները զանազան մասշտաբի են, գուշակողը, երբեմն նրանց կցված է տեքստը՝ բացատրականը, հաճախ կազմով են: Ատլասները նմանապես շատ չեն:

Առուններով ու տիբաժով շատ են և խիստ բազմազան սուանձին քարտեզների հրատարակությունները: Այս տիպի քարտեզներից փոքրերը գրքի էջի մեծության են, երբեմն էլ ավելի փոքր, իսկ մեծերը՝ դպրոցական-դասարանական, պատին կախովի քարտեզներ՝ 2 մ × 1,5 մ չափսի: Հենց առաջին հայերեն տպագիր քարտեզը, որը լույս է տեսել 1695 թվականին Ամստերդամում, եղել է այդ մեծության:

Առանձին քարտեզները երբեմն եղել են սև կամ մեկ-երկու գույնի (դարչնագույն և կապույտ), հաճախ մի քանի՝ երեքից ավելի գույնով, հազվագյուտ դեպքերում՝ բազմագույն, մինչև իսկ 14 գույնի, ինչպես, օրինակ՝ 1938 թվականին Երևանում տպագրված 1 : 1.000.000 մասշտաբի «Սովետական Հայաստանի» գիպսառմետրիկ տնտեսական քարտեզն է: Առանձին քարտեզներ տըպված են, մեծ մասամբ, մեկ թերթի վրա, երբեմն 2, 4, 6, թերթերի վրա. մի քանիսը փակցված են կտավի վրա և ամրացված երկու (վերին և ներքին) ծայրերին կոր փայտերով:

Բարձրաքանիզակ քարտեզները թվով սակավ են, բայց բավանդակությամբ հետաքրքիր: Դրանք ունենակի կերպով պատկերացնում են տվյալ վայրի, երկրի մակերենույթը՝ լեռնաշղթաները, լեռնագագաթները, հովիտները, սարահարթերը, գոգավորությունները, ջրային տարածությունները, բնակավայրերը և այլն:

\* Աշխարհագրական քարտեզների ժողովածուները անվանվել են «Աշխատայն պատճառով», որ առաջին ժողովածուն՝ Գ. Մերկատորի ատլասը, որը լույս է տեսել 1595 թվականին, շապիկի վրա նկարված են ատլասները՝ ուսերին պահած ունենալով երկրագունդը: Հունաբեն ատլաս (սեռ. հոլով ատլանտոս) անվանում էին հսկաներին, որոնք ըստ հին հույների պատկերացման իրենց ուսերի վրա պահում էին երկրամասերի ծայրերը՝ Աֆրիկայի արևմտյան եղրին, որտեղ Ատլասի լեռներն են:

Առավել պատկերավոր են գունսովորները: Քարձրաքամովակ հայ քարտեզները սովետական ժամանակաշրջանի արտադրություններ են, մեծությունը գրքի մեկ էջից մինչև մեծ սեղանի չափսի — 2 մ × 1,5 մ: Փոքրերը պատկերացնում են ուեսպուրլիկայի որևէ գետի ձորը կամ Սևանա լճի ավազանը, մեծերը՝ ամբողջ Հայկական ՍՍՌ-ն:

Զափազանց դժվար է կատարել գրքերի մեջ գետեղված, զանազան աշխատություններին կցված, հայերեն քարտեզների ցուցակագրումը. դրա համար հարկավոր է երկար ժամանակ, լայն հնարավորություններ, կողմնակի մեծ աջակցություն, որպեսզի աշխարհում լույս տեսած նման բոլոր հրատարակությունների հայ քարտեզները մի ցուցակի վերածել և դրի առնել: Մենք այս աշխատության մեջ քարտեզագրական հրատարակությունների ցանկում այդ տիպի քարտեզները չենք նշել, դրանցից միայն տեքստում նշել ենք շատ սահմանափակ օրինակներ, որպես նման կարգի քարտեզների նմուշներ:

Քարտեզագրական մյուս կարգի տպագրական հրատարակությունները սոսոկ Սովետական իշխանության ժամանակված արգասիքներ են: Քաղաքների հատակագծերը (պլաններ), օրինակ, Երևան քաղաքի հին և նոր հատակագծերը, հրատարակվել են Հայկական ՍՍՌ մայրաքաղաքի շինարարության համար, կամ թե տուրիստական նպատակներով: Սովետական Հայաստանի ուրվագծային (սխեմատիկ) քարտեզները (1-ից 3 գույնի), 1:1.000.000 և 1:500.000 մասշտարով, հրատարակվել են գիտական աշխատանքների համար: Հրատարակվել են աշխարհագրական անքարեր՝ համը քարտեզներով, դպրոցական պարագմունքների համար. Կազմվել և տպագրվել են քարտոգրամներ՝ տնտեսական աշխատագրության ձեռնարկների համար. վերջապես լայն մասսաների համար լույս են ընծայվել զանազան երկրների քաղաքական քարտեզներ, քարազ-բացիկներ՝ Սովետական Հայաստանը իր վարչական ստորաբաժնումներով: Հրատարակվել են նաև քարտեզ-պլակատներ:

Հայ տպագիր քարտեզագրությունն, առավել սովետահայկականը, այդպիսով, իր տեսակների նմուշներով ետ չի մնացել ուռական և սովետական քարտեզագրական հրատարակություններից:

ՀԱՅ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՀՏԱԲՆԵՐԸ,  
ՊՐՈՅԵԿՑԻԱՆԵՐԸ, ԱՍՏԻՃԱՆԱՑԱՆՑԸ, ՏԵՐԻՏՈՐԻԱՆԵՐԻ  
ԸՆԴԳՐԿՈՒՄԸ

Մասշտաբների տեսակետից ընդհանուր քարտեզագրությանը համապատասխան հայ քարտեզագրական հրատարակությունները բազմազան են: Խոշոր տերիտորիաներ ընդգրկող հայ քարտեզները փոքրամասշտար են, օրինակ, աշխարհամասերի համար՝ 1 : 10.000.000, 1 : 22.000.000, 1 : 30.000.000 մասշտաբներով: ԱՍՄԾ և առանձին պետություններ ընդգրկող քարտեզների մասշտաբները՝ 1 : 5.000.000, 1 : 2.500.000 են: Հին Հայաստանի և ՀՍԽՌ տերիտորիաներն ընդգրկող քարտեզները 1 : 1.000.000, հաճախ խոշորամասշտար են՝ 1 : 500,000 և 1 : 200.000: Ավելի խոշորամասշտար են, օրինակ, Սևանա լճի քարտեզները՝ 1 : 100.000, կամ Երևանի և շրջակայքի քարտեզները (հատակագծերը)՝ 1 : 20.000: Այդպես են հայ քարտեզների թվային մասշտաբները: Գծային մասշտաբների երկարության չափերը այլ կարգի տարրերություններ ունեն: Օտարերկրյա հայ քարտեզագրական հրատարակություններում գծային մեկ սանտիմետրին համապատասխանում են խտալական կամ անդլիական մղոններ. ցարական թուսաստանի ժամանակվա հայ քարտեզագրական հրատարակություններում — 1 մատնաչափը հավասար է իրական վերստին. իսկ սովորանայ քարտեզներում 1 սանտիմետրը հավասար է կիլոմետրի:

Բարձրաքանդակ քարտեզները հորիզոնական մասշտաբի հետ միատեղ ունեն նաև ուղղահայաց մասշտաբներ, որոնց հարաբերականը, օրինակ, ՀՍՄԾ բարձրագիր քարտեզներում եղել է 1 : 5, 1 : 6, 1 : 7, 1 : 10:

Պրոյեկցիաների խնդրում հայ քարտեզագրական հրատարակությունների հեղինակները կամ խմբագիրները, կազմողները կամ գծագրողները չեն հորինել և ոչ մի նոր պրոյեկցիա, այլ հետեւել են ընդունված և ժամանակին տիրող պրոյեկցիաներին: Հաճախ ընդօրինակել և արտագծել են գոյություն ունեցողը: Կիսագնդերի քարտեզներում գործադրվել են օրթոգրաֆիկ, համաճախ ստերեոգրաֆիկ պրոյեկցիաներ. աշխարհի բացված քարտեզներում կիրառվել են՝ Մերկատորի գլանային պրոյեկցիան, վերջերս առավել ՑՆԻԻԳԱԻԿ-ի\* հաջող պրոյեկցիան: Եվրոպայի,

\* Центральный научно-исследовательский институт геодезии, аэросъемки и картографии.

Ռուսաստանի, ՍՍՌՄ-ի քարտեզներում տիրողը կոնական պրո-  
յեկցիան է, Հայաստանի, ՀՍՍՌ-ի մեծամաշտաբ քարտեզնե-  
րում — բազմակողանի (մհօգորհնակ) պրոյեկցիաները և այլն:

Այս կամ այն պրոյեկցիային հատուկ շեղումներն ու տերի-  
տորիաների գծագրման աղավաղութերը համապատասխան կեր-  
պով արտացոլվել են նաև հայ քարտեզագրական հրատարակու-  
թյուններում: Պրոյեկցիաների զանազան թերություններից մի-  
անգամայն զերծ են ինչպես մյուս լեզուներով, այնպես էլ հա-  
յերեն գլոբուսները:

Բազմազանություն են ներկայացնում հայ քարտեզագրա-  
կան հրատարակությունները նաև աշխարհագրական աստիճա-  
նացանցի տեսակետից:

Կիսագնդերի քարտեզներում աշխարհագրական լայնության  
աստիճանները նշանակված են՝ աջ և ձախ կողմերին՝ 10-յակ  
աստիճաններով. աշխարհամասերի, Ռուսաստանի, ՍՍՌՄ քար-  
տեզներում՝ 2-ական աստիճաններով, Հայաստանի և Հայկական  
ՍՍՌ քարտեզներում՝ 30 կամ 15 լոպեներով: Երեանի հատակա-  
գծերում նշված են միայն աշխարհի (հորիզոնի) կողմերը, գրե-  
խավորապես սլաքով՝ հյուսիսն ու հարավը:

Հայ քարտեզագրության օրինակներում միշտ վերեի կող-  
մում հյուսիսն է, քանի որ այդ քարտեզները լույս են տեսել  
XVII դարի վերջերից: Հայտնի է, որ ավելի հին քարտեզներում,  
հասկանալի կերպով, հարավը է եղել դարձված դեպի վերե:

Երկայնության հաշվումները գլխավոր կամ 0 (պայմանա-  
կան) միջօրեականից նույնպես տարբեր են: Օտարերկրյա հայ  
քարտեզներում գերակշռողը, աշխարհագրության մեջ ընդունվա-  
ծը Ֆեռոյի միջօրեականն է, որի գծման դեպքում Եվրոպան,  
Աֆրիկան, Ասիան լինում են Արեկյան կիսագնդում իսկ Ամե-  
րիկան Արևմտյան կիսագնդում: Օտարերկրյա հայ քարտեզնե-  
րում տեղ են գտել նաև Փարիզի և Գրինիչի միջօրեականները:  
Ինչպես հայտնի է, Փարիզի միջօրեականը գործ է ածվել մեծ  
մասամբ Ֆրանսիայում և եվրոպական երկրներում, իսկ Գրինի-  
չինը (Լոնդոնի արվարձանը) ծովային (նավագնացության) քար-  
տեզներում: Ռուսահայ և սովետահայ քարտեզներում աշխարհի  
և կիսագնդերի համար գործ է ածվել Ֆեռոյի միջօրեականը, իսկ  
աշխարհամասերի, Ռուսաստանի, ՍՍՌՄ, Հայաստանի, Հայկա-  
կան ՍՍՌ-ի քարտեզներում՝ Պուլկովյի (Լենինգրադի մոտ աստ-  
ղադիտարան) և Գրինիչի միջօրեականները: Միիթարյանները,  
որպես փորձ, մի քանի քարտեզներում աշխարհագրական երկայ-

նությունը նշել են Արարատ (Մասիս) սարից, սակայն այդ հետաքրքիր փորձը, հասկանալի է, մնացել է առանց ընդօրինակման։ Աշխարհագրական երկարության աստիճանները, սովորականի նման, հայ քարտեզագրական հրատարակություններում նըշված են քարտեզների շրջանակների վերի և ցածի մասերում, իսկ կիսագնդերի քարտեզներում՝ հասարակածի վրա։

Տերիտորիայի (երկրների) ընդգրկման հարցում հայ քարտեզագրական հրատարակությունները նմանապես ներկայացնում են մեծ դիապազոն։ Երանց բովանդակությունն են կաղմում Երևան քաղաքի տերիտորիան, Սևանա լիճը, Նոր Բայազետի գավառը, Ղրիմը, Կովկասը, Օսմանյան պետությունը, Բալկանյան թերակղզին, ՍՍՌՄ Եվրոպական և Ասիական մասերը առանձին կամ միասին, աշխարհամասեր՝ Եվրոպան, Ասիան, Ամերիկան, Աֆրիկան, Ավստրալիան, կիսագնդերը. վերջապես ամբողջ աշխարհը (կիսագնդերով կամ բացված պլոյեկցիայով)։

### ՀԱՅ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ-ՏԱՐԱԳՈՅՆԻ ԿԻՐԱՌՈՒՄՆԵՐԸ

Հայ քարտեզագրական հրատարակությունները մեծ մասամբ լույս են ընծայվել հայերեն, մասամբ՝ ռուսերեն, երբեմն հայերեն-ռուսերեն, հայերեն-ֆրանսերեն, հայերեն-թուրքերեն, հազվագյուտ դեպքերում՝ ֆրանսերեն, իտալերեն, թուրքերեն, քրդերեն։

Հայերի հրատարակած ռուսերեն, ֆրանսերեն, իտալերեն, թուրքերեն քարտեզներում աշխարհագրական անունների տառադրձության հարցում հետեւ են այդ լեզուներով գործածվող աշխարհագրական անուններին։

Մինչդեռ հայ քարտեզագրական հրատարակություններում գործածված աշխարհագրական անունների հայերեն տառադրձության խնդիրը հանդիսացել է խիստ ուրույն, բարդ և գծվարին։ Այդ հարցում հայ քարտեզագրական հրատարակություններ կազմողները, խմբագրողները, խորհրդատունները, նախաձեռնողները, քարտեզագրիրները աշխատել են մեծ մասամբ ինքնուրույնաբար և հարկադրված են եղել հաղթահարել լեզվական բավական դժվարություններ։

Համեմատաբար ավելի դյուրին է եղել այդ հարցը լուծել մեկ լեզվով գրված առանձին երկրի քարտեզների աշխարհագրական անունները հայերենի վերածելու կամ թարգմանելու ժամանակ։ Օրինակ՝ «Ոսկորի» քարտեզը հայերենի վերածելու կամ թարգ-

մանելու ժամանակ հայ աշխարհագետ հեղինակը, կամ գծագրով քարտեզագիրը գործ ուներ թյուրքական, հունական, բուլղարական աշխարհագրական անունների հետ, «Ղրիմի» քարտեզում՝ ոռոսական և թաթարական անունների հետ, «Պահեստինի» քարտեզում՝ հրեական և արարական անունների հետ, «Անդրկովկասի» քարտեզում՝ ավելի բարդ էր: Վրացական, հայկական, աղբյուրեջանական աշխարհագրական անուններից բացի, գործ են ունեցել նաև արխազական, օսմական անունների, ինչպես նաև իրանական, թուրքական և այլ անունների հետ: Առավել բարդ է աշխարհագրական անունների հայերեն տառագրաձության խնդիրը «Խուսաստանի, ՍՍՌՄ» քարտեզներում (քանի որ Խուսաստանի, ՍՍՌՄ ժողովուրդների թիվը հարյուրից ավելի է). բայց այդաեզ օգնության է գալիս ոռուելեն լեզվով գործածված տառագրաձությունը: Այնուհանդերձ, ՍՍՌՄ մի շարք ժողովուրդներ, հայերի նման ունեն հ, ք, փ, թ, ձ, ջ, ձ, դ, հնչյունները: Հասկանալի է, որ պետք է օգտագործել այդ տառերը համապատասխան երկրների աշխարհագրական անուններում, օրինակ՝ Թիոդոսիա, Տաշքենդ, Թայմիր, Աղդամ, Ճիաթուրա, Բաքու, Փոթի և այլն: Նմանապես դժվար է «Եվրոպայի» քարտեզում մի քանի տասնյակ ժողովուրդների աշխարհագրական անունները հայերենի վերածելը:

Սակայն, չափազանց բարդ է «Աշխարհի» կամ «Կիսագնդերի» քարտեզում աշխարհագրական անունների հայերեն թարգմանելը կամ տառագրածելը: ՍՍՌՄ (այդ թվում Կովկասի) աղդություններից բացի, աշխարհագրական անուններ գործ են ածվում առնվազն հետեւյալ լեզուներով՝

Հեռավոր Արևելքում՝ չինարեն, ճապոներեն, կորեական լեզվով և այլն:

Մերձավոր և Միջին Արևելքում՝ արաբերեն, պարսկերեն, թուրքերեն և այլն:

Հնդկաստանում՝ հնդկական, բենգալյան, դրավիդյան լեզուներ:

Եվրոպայի Միջերկրականի երկրներում՝ ոսմանական լեզուներ՝ իտալերեն, ֆրանսերեն, իսպաներեն, նաև հունարեն և այլն:

Եվրոպայի մյուս մասերում՝ սլավոնական՝ լեհական, չեխական, բուլղարական, հարավ-սլավոնական և այլն, գերմանական, անգլիական, սկանդինավյան ժողովուրդների, կելտական՝ բասկերի (Բասկանիայում), իռլանդական, նաև մի շարք այլ ժողովուրդների լեզուներով:

Ամերիկայում՝ հնդիկների, անգլոսաքսոն, ռոմանական պորտուգալականը՝ Բրազիլիայում, խալանականը՝ Լատինական Ամերիկայի մյուս երկրներում), ինչպես և էսկիմոս ժողովուրդների լեզուներ (Հյուսիսային Ամերիկայի ծայրը հյուսիսում):

Աֆրիկայում՝ եթովպական (հարեշական), նեղրական ժողովուրդների, արարական ցեղերի լեզուներ և այլն:

Աշխարհի և կիսագնդերի քարտեզները աշխարհագրական անունների տեսակետից ներկայացնում են խիստ ճոխ պատկեր: Այդ տեսակետից պատկերացնում ենք Ամստերդամում 1695 թվականին հրատարակված աշխարհի առաջին հայերեն քարտեզի տեքստի տառագարձության խնդրի բարգությունը վանանդեցիների համար:

Աշխարհագրական անունների տառագարձության խնդիրը, մասնավորապես հայերեն տառագարձնելու հարցը, առանձին ուսումնասիրության նյութ կարող է ծառայել: Անհնարին է այս աշխատության մի փոքր գլխում՝ յուծել այդ բարդ և բազմակողմանի, երկար պատմություն ունեցող և հետաքրքիր խնդիրը: Մենք կարող ենք միայն շոշափել այն՝ մասնակի կերպով և, թերևս, նշել մի քանի աչքի ընկնող օրինակներ, քանի որ ստորև, առանձին հայերեն քարտեզագրական հրատարակությունները զննելիս, տեղում հիշատակելու ենք տառագարձության փաստեր:

Օրինակ, գերմանական ժողովուրդների աշխարհագրական անունները հայերեն տառագարձնելիս գործ ենք ածում «ք», «թ», «փ» հնչյունները՝ Քյոլն, Թյուրինգիա, Սաքսոնիա: Մինչդեռ լատինական ժողովուրդների աշխարհագրական անունների նկատմամբ հայերենում այդ չի արվում: Մենք արեելահայերս, այսպես, գործ ենք ածում և գրում ենք՝ Կանն այլ ոչ Քանն, Տուլուզ այլ ոչ Թուլուզ, Պրովանս այլ ոչ Փրովանս. ճիշտը պետք է լինի նաև Պարիզ, այլ ոչ Փարիզ (վերջինը տրադիցիս է դարձել):

Մի այլ օրինակ. «զ» հնչյունը և տառը գործ ենք ածում ադրբեջանական անունները հայերեն տառագարձնելիս՝ Աղդաշ Աղստափիա, Ղուրա և այլն: Իսկ թուրքմենական տառագարձությանը համապատասխանում է «կ» հնչյունը՝ Կարակում, Կղըլ-Արվատ, Կարա-Բոգազ գոլ և այլն:

Աշխարհագրական անուններ կան, որ սովորաբար տրվում են քարզմանությամբ: Օրինակ, հայ քարանզագրական հրատարակություններում հայերեն տրվում են այսպես՝ Արևելա-եվրոպական կամ Մեծ Ռուսական հարթություն, Հրո Երկիր, Բարեհուսո հըր-

վանդան, Արջի կղզի, Կանաչ հրվանդանի կղզիներ: Այն ծովերը, որոնք կրում են գլխավոր գույների անուններ, թարգմանաբար անվանում ենք՝ Սև, Սպիտակ, Կարմիր, Դեղին:

Աշխարհագրական անուններ էլ կան, որ չեն թարգմանվում, այլ հայ քարտեզագրական հրատարակություններում հայերեն սովորաբար տառադարձվում են:

Օրինակ, Նովգորոդ (ոռուսերեն—Նոր քաղաք), Բաբելոնանդերի նեղուց (արարերեն—Արտասուքի, որովհետեւ այդտեղ լինում են խիստ փոթորիկներ և եղել են նավերի խորտակութեաներ մարդկային դոհերով, այդ պատճառով արարներն անվանել են Արտասուքի նեղուց), Նյուֆառնդենդ կղզի (անգլերեն—Նոր հայտնարերված երկիր), Հոռնգեն կամ Խոանիսի գետ (չինարեն—Դեղին գետ), Փիսենյան (կորեական լեզվով Հարթ վայր), Կարակում (թուրքմեներեն—Սև ավազ) անապատ, Վիգօգերո լիճ (Սովետական Կարելիայում), Մոն-Բլան լեռնագագաթ (ֆրանսերեն—Սպիտակ սար, Ալպյան լեռների ամենաբարձր գագաթը), Պամիր լեռնաշխարհ (Երկնքի տանիք) և այլն և այլն. այս թվարկումը կարելի էր շարունակել:

Հայ քարտեզագրական հրատարակություններում կան աշխարհագրական անուններ, որոնք դորձ են ածված տարակերպ այդպիսիների թվին են պատկանում հետեւյալ անունները՝

Նոր երկիր կղզին երբեմն գրվել է Նոր Զեմլյա (արևմտահայերը՝ երբեմն Զեմլյա) կղ., կամ Նովյայա Զեմլյա կղ. (Ռուսաստանում, ՍՍՌ-ում):

Հյուսիսային ծով, որն առաջներում անվանվել է Գերմանական ծով (Եվրոպայում):

Կարմիր գետ, մի այլ քարտեզում Ռեդ ովվը գ. (Հյուսիսային Ամերիկայում):

Նոր Օոլեան (քաղաք է)՝ Նյու Օոլեան ք. (Միացյալ Նահանգներում):

Լա-Մանշ նեղուց, երբեմն՝ Անգլիական նեղուց (Եվրոպայում):

Սևծովյան տափաստան, կամ թե Սևծովյան ստեղներ (Ռւկը բաինայում):

Նման երեսոյթը վերջերս շատ է նշվել կորեական աշխարհագրական անունների նկատմամբ, Կորեայի քարտեզներում:

Սեուլ կամ Կեյձո (մայրաքաղաք):

Փուսան կամ Ֆուզան (նավահանգիստը):

Նակտոնգան գետ կամ Ռոկոտուկո գ.:

Չեչսուզու կղ. կամ Սայսյու կղ. (նույնիսկ երբորդ անունը կվելպարտ կղ.).

Պակտուսան լեռ կամ Բագրոշան լեռ և այլն:

Կորեական անուններին զուգահեռ գործ են ածվել չինական, նաև ճապոնական անուններ:

Ոչ պակաս օրինակներ է տալիս այդ տեսակետից Սովետական Հայաստանը.

Արագած լեռ (առաջ Աղագյաղ, Աղագյող):

Գեղամա լեռնաշղթա (Աղմաղանի լշղթա):

Հրազդան գետ (Զանգու գետ):

Որոտան գետ (Բարգուշատ գետ, Բազարչայ գ.):

Մեանա լիճ (Դյուկչա լիճ), Գեղամա ծով:

Այդ կարգի անունները կարելի է հասցնել Հայաստանում հարյուրի:

Արևմտյան Հայաստանի աշխարհագրական անուններում պահպանվել է թուրքական տառադարձությունը:

Հայկական ՍՍՌ կառավարության որոշմամբ Սովետական Հայաստանի աշխարհագրական օտարոտի անունները այժմ դարձված են հայ ժողովրդի համար հարազատ: 1949թ. Թրիլիսիի քարտեզագրական գործարանում հրատարակված Հայկական ՍՍՌ ռւսության փիզիկական քարտեզում (մ. 1 : 600.000) նըշված են աշխարհագրական գլխավոր օրյեկտների ցուցակով ճշշտված անունները: 1951թ. լույս է տեսել Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիային կից Հայկական աշխարհագրական ընկերության կողմից կազմված «Հայկական ՍՍՌ աշխարհագրական անուններ» գիրքը հայերեն և ռուսերեն:

Ոչ պակաս լուրջ խնդիր է հանդիսանում Հայաստանի և հայկական աշխարհագրական անունների թարգմանությունը և տառադարձությունը ռուսերեն կամ օտար լեզուներով, երբ Հայաստանի քարտեզները լույս են ընծայվում ռուսերեն կամ օտար լեզուներով:

Բերենք մի քանի օրինակներ:

Հայերեն թ տառը տառադարձում է Երևան:

Թալին — Талин.

Հայերեն ծ տառը — Առևլ:

Ծաղկաձոր — Цахкадзор.

Հայերեն ճ-ն ռուսերեն Վոլգա:

Ճավախոտ — Чавахот.

Հայերեն ջ-ն ոռւսերեն դժ-ի.

Ջրվեժ — Джырвеж.

Բայց Դիլիջանը գրվում է ըստ սովորության՝ Դիլիջան, իսկ  
Եղմիածինը — Էջմիածին (պետք է ճիշտը գրվեր — Էջմիածին):

Հայերեն դ տառը — ոռւսերեն Ր-ով.

Գեղամա լ-շղթա — Гегамский хребет.

Երբեմն Խ-ով — Պահակն — Пахакн.

Աղբրեջանական Աղբուլաղ անունը տառադարձիլ է զա-  
նազան կերպով՝ Արбулаг, Ակбулак, Ախбулах.

Հայերեն հ-ն ոռւսերենում հիմնականում գուրս է ընկել:

Հոկտեմբերյան քաղաք — г. Октябрьян.

Հալիձորի լիճ — оз. Алидзор.

Հալավար գետ — р. Алавар և այլն:

Այս առթիվ Սովետական Ռուսաստանի տառադարձական  
հանձնաժողովի կողմից մշակված է համապատասխան հրահանգ,  
որին մասնակցել են Սովետական Հայաստանի լեզվաբանները և  
աշխարհագետները:

Սովետական Հայաստանի բնակվայրերի և, առհասարակ,  
վարչական օբյեկտների անունների ճշտման գործը պատկանել է  
Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի վերահսկությանը և կա-  
տարվել է նրա Տառադարձական հանձնաժողովի կողմից:

Սովետական Հայաստանի ֆիզիկո-աշխարհագրական օբյեկտ-  
ների (լեռների, գետերի, լճերի և այլ) անունները ճշտվել են ՀՍՍՌ  
Գիտությունների ակադեմիայի Աշխարհագրական հանձնաժողո-  
վում, ընդունվել են Ակադեմիայի Նախագահության նիստում և  
հավանություն ստացել Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի  
Նախագահության կողմից: Այդ հանդամանքը երբեմն աշքաթող  
է արգում մասնագետների կողմից:

Հայաստանում միայն սովետական օրոք է այդ գործը գլուխ-  
բերվել կազմակերպված ձեռվ, գիտական հիմունքներով ու մե-  
թոդներով, գիտնականների կողեկտիվ ուժերով:

ՀԱՅԵՐԵՆ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼՈՒՅ  
ԸՆԾԱՅԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայ քարտեզագրական հրատարակություններ լույս ընծա-  
յելու նպատակներն ու խնդիրները, ընդհանուր քարտեզագրու-  
թյան համապատասխան, տարբեր են և բազմազան: Այդ նպա-

տակներն ու խնդիրները կախում ունեն ոչ միայն քարտեզագրական հրատարակությունների տեսակներից ու բնույթից, նրանց կազմողներից ու խմբագիրներից, նախաձեռնողներից ու հրատարակիչներից, այլև առավելապես ժամանակի պահանջներից, քաղաքական կարգերից, տիրող դասակարգի շահերից:

Առաջին հայերեն քարտեզները վերաբերվել են «Աւետեացերկրին», Պաղեստինին՝ հայ հոգևորական դասի կրոնական նպատակները բավարարելու համար: Ապա Աշխարհի քարտեզների ճանապարհների քարտեզների հրատարակման նպատակն է եղել ընդառաջել հայ առեւրական դասակարգի շահերին՝ աշխարհի զանազան մասերը, երկրները ճանաչելու, առեւրական ուղիներին տեղյակ լինելու: Այդ մասին պարզ ասված է 1849 թվականին Վենետիկում Մխիթարյանների հրատարակած Ատլասի տեքստի նախազավիղում՝ «աշխարհագրութեամբ արվեստներն ու վաճառականութիւնն ալ շատ կը յառաջանան»:

Արևմտահայերի հրատարակած՝ Ոսփորի, Ղրիմի քարտեզները համընկել են Ղրիմի 1855—1856 թթ. պատերազմին:

1848 թ. ֆրանսիական փետրվարյան բուրժուական ռեսուլցիան Եվրոպայում ալեկսանդր հասարակության լայն խավեր: Վենետիկի և Վիեննայի հայ Մխիթարյանները, հետևելով ժամանակի ոգուն, տուրք տվեցին աշխարհիկ գիտության և լուսավորության պահանջներին: 1849 թվականին Վենետիկում հրատարակեցին հայերեն առաջին մեծադիր (սեղանի) աշխարհագրական ատլասը («Աշխարհացոյց պատկերաց ատլասը»): Իսկ 1850 թվականին Վիեննայում լույս ընծայեցին առաջին հայերեն մեծադիր գլորուսը («Երկրագունդը»): Այդ Ատլասի և Երկրագոնդի տիրածը խիստ սահմանափակ և գներն ել շատ բարձր էին, ուստի այդ քարտեզագրական հրատարակությունները կամ ունեոր դասակարգերի համար եղան միայն մատչելի, կամ թե դարձան թանգարանային առարկաներ: Ինարկե, եղել են նաև հրատարակություններ, որոնք օգտագործվել են նաև ուսուցողական նպատակով: Մխիթարյանների քարտեզագրական հրատարակությունները սպասարկել են Վենետիկի և Վիեննայի Մխիթարյանների և այլ գպրոցների կարիքները՝ «ի պետք ազգային դպրոցաց» (օրինակ՝ Ա. Ավագյանի 1860 թ. կազմած ատլասը, հրատարակված Վիեննայում):

Հայերի հրատարակած Բալկանյան թերակղզու, Օսմանյան կայսրության քարտեզները նպատակների տեսակետից համապա-

տասխանել են Բաղկանյան պատերազմի այն ժամանակվա պահանջներին:

Խուսական կայսրության ժամանակվա հայ քարտեղագրական հրատարակությունները՝ թե XIX դարի հիսունական թվականների Խուզաբաշյանի կազմած ոռուերեն քարտեղները (Պատմական Հայաստան, Հայաստանը և հարևան երկրները), թե XX դարի սկզբներին և թե 1-ին իմպերիալիստական պատերազմի ժամանակ լույս տեսած քարտեղները (Անդրկովկասի ազգագրական քարտեղը՝ ոռուերեն, Հայաստանը և հարևան երկրները՝ հայերեն) հետապնդել են ազգայնական քաղաքական պահանջներ, ձգտել են բավարարել գլխավորապես հայ բուրժուազիայի շահերը (հրատարակվել են Անդրկովկասի հայ կապիտալիստների միջոցներով):

Միանգամայն այլ կարգի նպատակներ և խնդիրներ են եղել առաջադրված սովետահայ քարտեղագրական հրատարակություններին:

Այս աշխատության վերջում կցված Սովետական Հայաստանի քարտեղագրական հրատարակություններ լույս ընծայող Հայկական ՍՍՌ բազմաթիվ հիմնարկների ցանկը և տեքստում նշված սովետահայ քարտեղագրական հրատարակությունների տեսակներն ու բնույթը վկայում են հետեւյալի մասին:

Հայ քարտեղագրական հրատարակությունների ճնշող մեծամասնությունը՝ գլորուսները, ատլաները, առանձին քարտեղները, աշխարհագրական տետրերը, բարձրաքանդակ քարտեղները՝ Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրության պատվերով լույս են ընծայվել ուսումնական նպատակներով, դպրոցական աշխարհագրության դասավանդման, կրթության և աշխատավոր մասսաների ընդհանուր լուսավորության համար. այդ են ապացուցում նաև տասնյակ հազարներով տիրաժները:

Երեան քաղաքի հատակգծերի հրատարակությունները հիմք են ունեցել Սովետական Հայաստանի մայրաքաղաքի արժատական վերաշինությունը:

Հայկական ՍՍՌ մասնագիտական, սխեմատիկ քարտեղները, նաև Սևանա լճի, Արարատյան դաշտի և Հայաստանի այլ մասերի քարտեղներ հրատարակվել են Հայկական ՍՍՌ գիտահետազոտական հիմնարկների աշխատանքների համար:

Հայկական ՍՍՌ մի շարք վարչական քարտեղները հրատարակվել են պետական և անտեսական հիմնարկների համար,

որոնց գործունեությունը ծավալվում է Սովետական Հայաստանի այս կամ այն վարչական շրջանում:

Քաղաքական-մասսայական քարտեզներ են լույս ընծայվել աշխատավորների լայն զանդվածների աշխարհագրական գիտեալիքները խորացնելու նպատակով, ժամանակակից քաղաքական աշխարհը լավ ճանաչելու, քաղաքացիական գիտակցությունն է՝ լավելի բարձրացնելու համար:

Սովետահայ քարտեզագրությունը աշխատել է իրականացնել Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության լուսավոր առաջադրանքները:

### ՀԱՅ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Մեծ քաղմազանություն են ներկայացնում հայ քարտեզագրական հրատարակություններն ըստ իրենց բնույթի, ուստի և այլ կարգի են նրանց խմբավորումներն այդ տեսակետից:

Հիմնական խմբերն են կազմում՝

Ֆիզիկական քարտեզագրական հրատարակություններ

Քաղաքական

"

"

Տնտեսական

"

"

Պատմական

"

"

Այսպես, օրինակ, հայերեն գլոբումները ֆիզիկական են (Վիեննայում հրատարակված գլոբումներից մեկը — քաղաքական է), իսկ հայերեն ատլասները՝ ֆիզիկական են, քաղաքական, պատմական և մասամբ տնտեսական:

Առանձին հրատարակված հայերեն քարտեզները ըստ բնույթի խիստ բազմազան են: Նշված չորս հիմնական բնույթից բացի, քարտեզները ստորաբաժանվում են նաև բազմաթիվ այլ մասնագիտական անսակների. այդ առավելապես վերաբերում է սովետական ժամանակաշրջանի քարտեզներին:

Հայերեն քարտեզների տարերություններն ըստ նրանց բնույթի նկատվում են նաև զանազան ժամանակաշրջաններին համապատասխան:

Մինչսովետական ժամանակաշրջանում օտար երկրներում լույս տեսած հայերեն քարտեզները գլխավորապես, պատմական և քաղաքական են, մասամբ ֆիզիկական, երբեմն՝ կրոնական բնույթի:

Խուսական տիրապետության ժամանակ լույս տեսած հայերեն քարտեղները նույնպես քաղաքական, պատմական են, մասամբ փիզիկական և ազգագրական:

Սովետական ժամանակաշրջանի հայ քարտեղագրական հրատարակությունները իրոք դառնում են խիստ բազմազան և ճշիւ, այնպիսի բնույթի՝ որպիսին նախկինում երբեք չէր կարելի երևակայել:

Սովետական հրատարակությունների ընդհանուր ֆիզիկական քարտեղների շարքում մենք տեսնում ենք նաև մասնագիտական՝ ֆիզիկական քարտեղներ՝ գիպսոմետրիկ, գեոմորֆոլոգիական, երկրաբանական (գեոլոգիական), կլիմայագիտական, հիդրոգրաֆիկ, հողագիտական, բուսաբանական, ընական շրջանացման և այլն:

Քաղաքական բնույթի քարտեղներն էլ իրենց հերթին ստուրաբաժանվում են՝ զուտ քաղաքական, վարչա-քաղաքական և զուտ վարչական:

Պատմական բնույթի հայերեն քարտեղները ստորաբաժանվում են՝ զուտ պատմական, պատմա-քաղաքական, ուկոլյուցիոն-կենսագրական և այլն:

Տնաեալական բնույթի հայ քարտեղագրական հրատարակությունները, բացի ընդհանուր տնտեսականից, նաև նեղ մասնագիտական են, օրինակ, էլեկտրիֆիկացման, տրանսպորտային, ոռոգման, արոտների, արդյունաբերության, գյուղատնտեսության ձյուղերի և այլն:

Սովետական ժամանակաշրջանում հրատարակվել են նաև տուրիստական, առողջապահական (բժշկական) և այլ բնույթի քարտեղներ:

Երբեմն քարտեղները հրատարակվել են խառը բնույթի:

Օրինակ՝ Փիզիկական-քաղաքական-տնտեսական, քաղաքական-տնտեսական, պատմա-քաղաքական, պատմա-տնտեսական, գիպսոմետրիկ-տնտեսական և այլն:

Մազմական բնույթի քարտեղները առաջներում սովորաբար զատում էին ըստ հատուկ տեսակների՝ օրինակ, տեղագրական (տոպոգրաֆիկ) քարտեղների, գաղտնի համարված համը քարտեղների, բերդերի (կրեպոստ) քարտեղների և այլն:

Այժմ հաստատված է, որ անխորիր բոլոր բնույթի (գլխավորապես խոշորամասաշտաբ) քարտեղներն ունեն ուղղմական նշանակություն. բոլոր կարգի, տեսակի, բնույթի քարտեղները,

որոնց վրա ցույց են տրված՝ բնակչության կազմը, հացարույսերի տեսակները, կենդանիները և առնասարակ ամեն ինչ, կարող են օգտագործվել երկրի պաշտպանության նպատակներով։ Ուրեմն չկա մի վորեէ քարտեզ, որը չունենա ուղղմական նշանակութուն։

Այդ պատճառով է, որ մենք, խմբավորելով հայ տպագիր քարտեզագրական հրատարակություններն ըստ բնույթի, չզատեցինք առանձին ուղղմական քարտեզների խումբը. բայց զուտ այդպիսիք առհասարակ հայերեն չեն եղել։

### ՀՐԱՏԱՐԱԿՁԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ

Հրատարակչական կարգի խնդիրներից են՝ քարտեզագրական (կազմողական) հիմնարկների առկայությունը, քարտեզագրական գործարանների (տպագրության) վիճակը, քարտեզագրական կադրերի պատրաստումը, հրատարակության վերահսկությունը, հրատարակության տիրածը և այլն։

Մինչսովետական ժամանակաշրջանում՝ քարտեզագրական (կազմողական)\* հիմնարկ ունեցել են Մլսիթարյանները՝ թե Վենետիկում և թե Վիեննայում, որոնք երբեմն առ երբեմն լույս են ընծայել հայ քարտեզագրական հրատարակություններ։ Բոլոր մնացած գեղքերում օտարերկրյա հայ քարտեզագրական հրատարակությունները կազմվել են և լույս ընծայվել տարբեր երկըրների քարտեզագրական հիմնարկներում, զանազան եղանակով՝ հայերի անմիջական մասնակցությամբ։

Ռուսական կայսրության տիրապետության ժամանակ հայերը օգտվել են գոյություն ունեցող ռուսաց քարտեզագրական (կազմողական) հիմնարկներից։

Հայաստանում հայ ժողովուրդը ունեցել է քարտեզագրական (կազմողական) հիմնարկներ միայն սովետական ժամանակաշրջանում։ Սկզբի շրջանում այդպիսի բաժիններ ունեցել են՝ կենտրոնական վիճակագրական վարչությունը, Հողագործության ժողկոմատը, Երևանի քաղաքային Սովետը, այնուհետեւ կենտրոնական Գործադիր Կոմիտեն, Հայկական Խորհրդային Հանրապետականի, Ժողովրդի կազմությունը, Հայկական լուսավորության կոմիսարիատը։ 1943 թվականից գիտականորեն կազմակերպված ձեռվ՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի սխտեմում, նրա գիտական հիմնարկներ՝ Գեղողդիական, Բուսաբանական, Տնտեսագիտության,

\* Ռուսերեն՝ Картосоставительские.

Պատմության ինստիտուտները, նաև Հայկական ՍՍԻ Գիտությունների ակադեմիային կից Հայկական աշխարհագրական ընկերությունը: Սովետական Հայաստանում կան նաև մի շարք այլ հիմնարկներ, որոնք կատարում են նման աշխատանքներ և այդ բոլորն էլ գտնվում են Երևանում: Հարուստ ցանկը, որը որպես համագույնության համբեկված կցված է այս աշխատության վերջում, վկայում է այն մասին, թե որքան քարտեզագրական գիտական-կուլտուրական ուժեր են կենտրոնացած Սովետական Հայաստանում վերջին 30 տարվա ընթացքում:

Այլ պատկեր է ներկայացնում քարտեզների տպագրության գործը, քարտեզագրական գործարանների խնդիրը:

Մինչսովետական ժամանակաշրջանի և սովետական ժամանակաշրջանի միջև այս խնդրում նաև կան տարրերություններ:

Առաջին հայերեն քարտեզը՝ հոչակավոր «Համատարած աշխարհացոյցը» տպագրվել է հոլլանդական քարտեզագրական գործարանում:

Վեհետիկի Մխիթարյանների քարտեզագրական հրատարակությունները փորագրված են ֆրանսիական քարտեզագրական գործարանում և տպագրված Վեհետիկում: Վիեհնայի Մխիթարյանների քարտեզագրական հրատարակությունները՝ առաջին հայերեն գլոբուսը և այլ քարտեզներ պատրաստվել են Մխիթարյանների միջոցով ավտորիական (ուղղմական) քարտեզագրական գործարանում:

Նման կերպ է նաև կատարվել հայերեն մյուս քարտեզների հրատարակությունը:

Ուստանական կայսրության ժամանակ հայ քարտեզագրական հրատարակությունները տպագրվել են ուստական պետական քարտեզագրական գործարաններում՝ Պետերբուրգում, Թիֆլիսում, Բաքվում:

Սովետական ժամանակաշրջանի հայ քարտեզագրական հրատարակությունները լույս են ընծայվել մեծ չափով սովետական գործարաններում, սովետական քարտեզագրական հրատարակությունների հետ: Քարտեզների հիմքերը, ուրվագծերը (կոնտուրները), գույները տպագրվել են միասին, և ապա ուստարեն տեքստը և հայերեն տեքստը (աշխարհագրական անունները) առանձին-առանձին: Հայերեն տեքստի ճշտելը, գրելն ու խմբագրելը կատարվել են հայերեն, հայերի կողմից: Լուսանկարումը, ցինկագրումը, փորագրելը կամ վիմագրական աշխատանքը կատարվել է սովետական-ուստական գործարաններում:

Սակայն, որպես նորություն հայ տպագիր քարտեզագրության 260-ամյա պատմության ընթացքում՝ 1923 թվականին լույս տեսած առաջին սովետահայ քարտեզը և մի շարք այլ սովետահայ քարտեզներ վիմագրվել եւ տպագրվել են Սովետական Հայաստանում, հայկական քարտեզագրական արհեստանոցում:

Հայաստանում այժմ կան մեկ վիմագրատուն և երեք ցին-կողբաֆիր: Ցինկոդրաֆիտաներում տպագրվել եւ տպագրվում են մեկ-երկու գույնի քարտեզներ, իսկ վիմագրատանը՝ մի քանի գույնի, երեխն բազմագույն: Օրինակ՝ 1938 թ. Հայաստանի քարտեզը նույն վիմագրատանը տպագրվել է 14 գույնի:

Հայերեն քարտեզների տպագրության հարցին մենք կանգ-րադառնանք աշխատանքի վերջում՝ այլ կարեոր խնդրի շոշափման կապակցությամբ:

Հաջորդ խնդիրները քարտեզագրական կադրերի հարցն է: Ո՞րչափ են եղել ապահովված հայ քարտեզագրական տպագիր հրատարակությունները հայ գծագրողներով, քարտեզագիրներով, փորագրողներով՝ վիմագրողներով, գրաֆիկ (տեխնիկական և գեղարվեստական) ձեւագորողներով, սրբագրողներով, կազմողներով, խմբագիրներով և այլն:

Մինչսովետական ժամանակաշրջանում թե օտար երկրներում և թե ցարական Ռուսաստանում հայ տպագիր քարտեզագրական հրատարակությունների վրա աշխատողները, օտարագրադիրներից բացի, եղել են քարտեզասեր հայ գործիչներ, որոնք գործել են իրենց կամքով և մեծ գժվարություններով, կամ թե հարուստ հայ մեկենասների աջակցությամբ:

Ինչ վերաբերում է սովետական ժամանակաշրջանին, ապա հայ քարտեզագրական կադրերը բազմացել են (թե քանակով և թե որակով): Մենք սույն աշխատության վերջին դլխում ըլուստաբանել ենք սովետահայ քարտեզագրական կադրերի տուաջ ժառացած խնդիրները:

Պարզաբանում ենք նաև հայ քարտեզագրական հրատարակությունների տիրածի խնդիրը:

Մինչսովետական ժամանակաշրջանի, առավելապես XVII—XVIII դարերի ընթացքում օտար երկրներում լույս տեսած հայ քարտեզագրական հրատարակությունների տիրածի մասին կարելի է եղբակացնել, ելնելով այդ ժամանակ հրատարակված հայ գրքերի տիրածից, քանի որ քարտեզների վրա համարյա չի նշվել լույս ընծայած քարտեզների քանակը, ինչպես այդ մեծ մասամբ արվել է և արվում է սովետական քարտեզների վրա:

Հաստ հայ գրքի պատմագիրների տվյալների\* առաջին հայերին գրքերը տպագրվել են 300 օրինակից ոչ ավել: Պետք է ընդունել, որ հրատարակված քարտեզները տպագրվել են ավելի պակաս օրինակով, կամ թե այդ չափով (300-ական օրինակ): XIX դարի ընթացքում և XX դարի սկզբին, մինչչովետական ժամանակաշրջանում, թե օտար երկրներում, և թե ցարական Ռուսաստանում, հայ քարտեզագրական հրատարակությունների տիրաժը եղել է՝ 500, երբեմն՝ 1000 օրինակ: Խոսքը, իհարկե, առանձին (հատով) քարտեզների մասին է: Առլասները հրատարակվել են ավելի պակաս տիրաժով, իսկ գլոբուլները, առավել ևս վիճնայում պատրաստած մեծ երկրագունդը, միայն մի երկու տասնյակ օրինակով:

Այդ ժամանակներում հայացրած տեքստով քարտեզագրական հրատարակություններ լույս ընծայելը հեռավոր կենտրոններում և՛ դժվարին էր և՛ շատ թանկ: Երբեմն միայն շքեղ և թանկարժեք հրատարակությանը զուգահեռ տպագրում էին փոքրամասշտաբ և ավելի էժանագին, հասարակ հրատարակություններ:

Տիրաժի հարցի վերաբերյալ գրությունը հիմնովին փոխվում է, երբ հայ ժողովուրդը ձեռք է բերում քաղաքական անկախություն, ստեղծում է իր ինքնուրույն պետությունը, աշխատավորների իշխանությունը, մանում է սոցիալիստական ազգերի շարքը և հզոր Սովետական Միության կազմի մեջ: Հայաստանում լայնորեն ընդարձակվում է դպրոցների ցանցը, բազմանում է աշակերտության և ուսանողության թիվը, բարձրանում է աշխատավոր մասսաների կրթության մակարդակը:

Դպրոցական գլոբուլը հրատարակվել է հայերեն, երեք անգամ, յուրաքանչյուրը 3000 տիրաժով — ընդամենը 9000 հատ:

Ուսումնական աշխարհագրական ատլասները հրատարակվել են՝ 1000, 3000, 10 000-ական տիրաժով, ընդամենը ավելի քան 30 000 օրինակ:

Գիտական աշխատանքների համար հրատարակված՝ Հայկական ՍՍՌ սխեմատիկ (ուրվագծային) քարտեզները տպագրվել են երեք անգամ՝ 1000—2500 և 3000 օրինակով — ընդամենը 8000 տիրաժով:

Մասսայական քարտեզները հրատարակվել են 3000-ից 5000-ական օրինակ, ընդհանուր առմամբ՝ 20—25 000 տիրաժով:

Գպրոցական պատի մեծագիր քարտեզները 2500-ից 5000 տիրաժով — ընդամենը 50 000 օրինակից ավելի:

\* Գ. Լոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, 1946:

Դասագրքերի ֆիզիկական, քաղաքական, տնտեսական քարտեզները հրատարակվել են 5, 10, 30-հազարական օրինակներով:

Իսկ ՍՍՌՄ պատմության դասագրքի հայերեն հրատարակության մեջ նրա 4 քարտեզները՝ 75-հազարական օրինակով:

Նույնիսկ Սովետական Հայաստանի առանձին — մեծամասշտաբ ֆիզիկական, վարչական, տնտեսական քարտեզները հրատարակվել են 3, 5, 10 և 15-հազարական օրինակներով, ընդամենը ավելի քան 80 000 տիրաժով:

Սովետական ժամանակաշրջանի հայ քարտեզագրական հրատարակությունների ընդհանուր տիրաժը ամենապակասը կազմել է կես միլիոն օրինակ:

Այսինքն՝ իրականացվել է մեծ նշանաբանը՝ զիառությունը հաղորդել ծողովրդական լայն մասաներին:

Հայաստանը, հայ ժողովուրդը երբեք իր պատմության ընթացքում չի տեսել քարտեզագրական հրատարակությունների նման մասսայականացում:

### ՀԱՅ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ԶԱՆԱԶԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

XVII դարի վերջերից, այսինքն, այն ժամանակաշրջանից, երբ Գողթանի հոչակավոր վանանդեցիները, մեծ գժվարություններ հաղթահարելով, ամիսներ ճանապարհորդելով, հասել են Հոլանդիա՝ Ամստերդամում աշխարհի քարտեզ հրատարակելու համար, մինչև Սովետական Հայաստանի 35-ամյակի լրանալը՝ 260 տարում, մեծ փոփոխություններ են կատարվել նաև հայ քարտեզագրական հրատարակությունների կենտրոնների հարցում։ Ամստերդամից հետո հայ քարտեզագրության հրատարակությունների կենտրոններ են դարձել և հաջորդել են Վենետիկն ու Վիեննան. վերջին երկուսն էլ եղել են գերմանական ազգեցության վայրեր ու կենտրոններ։ Մյուսիթարյանները սկզբից էլ գործ են ածում իտալերեն Վենետիկի փոխարեն գերմանական լեզվով Վենետիկ անունը, քանի որ այդ ժամանակներում Իտալիայի հյուսիսարենից մասերը, նաև Լոմբարդիան իր Վենետիկի կենտրոնով, մտնում էին նաև գերմանական (այսպէս կոչված «Սըրազան Հռոմեական») կայսրության կազմի մեջ, ապա ենթարկվում էին վերջինից անջատված Ավստրիային։

Վենետիկից և Վիեննայից հետո, հայ քարտեզների թափառական հրատարակիչները՝ շրջել են Արևմտյան Եվրոպայի երկրները, որտեղ հնարավոր էր հայերեն քարտեզ հրատարակելը։

Այդպիսի կենտրոններ էին՝ Փարիզը, Բելգինը, Բաղելը, Ժընևը և Կ. Պոլիսը:

Երբ Արևելյան Հայաստանը Ռուսաստանի օդնությամբ ազատագրվում և XIX դարի առաջին քառորդում՝ 1828 թվականից միացվում է ռուսական կայսրությանը, հայ քարտեղագրական հրատարակությունների համար բացվում են նոր հնարավորություններ՝ Մովկայից և Պետերբուրգից հետո, Թիֆլիսում և Բաքվում:

Ներջապես, երբ Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո Երևանը նախկին նահանգական փոքր քաղաքից դառնում է Սովետական Հայաստանի մայրաքաղաք, բազմաթիվ գիտական-հետազոտական, լուսավորական հիմնարկներով, քարտեղագրական-գիտական կադրերով, վիմագրական, ցինկոզրագիտական արհեստանոցներով լուսավոր կենտրոն, որտեղ հայժողովուրդը տեր է դառնում իր երկրին ու պետությանը, հայ տպագիր քարտեղագրական հրատարակությունները իրենց դաշնագան ահասկաներով, բազմապիսի բնույթով, գիտական-հաստրական-կրթական նպատակներով, մասսայական տիրաժներով հասնում են զարգացման աննախընթաց մակարդակի:

Սովետահայ մասսայական հրատարակված գրքի կողքին իր տեղն է զրավում սովետահայ տպագիր քարտեզը:

ՀԱՄԱՌՈՒԾ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐԻ  
ՀԱՅ ՏՊԱԳԻՐ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՀԲԱՏՄԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս աշխատության մեջ զետեղված և մեր կազմած հայ քարտեղագրական հրատարակությունների ցուցակի մեջ նշված օրինակների մեծագույն մասը անձամբ գիտել և հետազոտել ենք:

Ցուցակի մեջ նշված մինչսովուտական ժամանակաշրջանից այն հրատարակությունները, որոնք լույս են տեսել օտար երկրներում, գիտել ենք անձամբ ոչ բոլորը, այլ միայն մոտավորապես 50 տոկոսը: Այդ հրատարակություններից ամենագլխավորները՝ առաջին հայերեն տպագիր քարտեզը, առաջին հայերեն ատլասը, առաջին հայերեն դլորուսը, հայերեն գրամանի ատլասը և մի շարք այլ կարևոր քարտեղագրական հրատարակություններ զննել ենք մանրամասնորեն: Մասնավանդ, որ հիշած հրատարակությունների օրինակներից ունի Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիային կից Հայկական աշխարհագրական բնկերության գրադարանը, որի քարտեղագրական բաժինը աշխատել ենք հարստացնել նման եղակի հրատարակությունների օրինակներով, սկսած ընկերության հիմնադրման օրից՝ 1935 թվականի մայիս

ամսից: Այդ նույն նմուշներից ունի նաև Երևանի Մյասնիկյանի անվան Հանրային գրադարանի քարտեզագրական բաժինը: Օտար երկրներում լույս տեսած հայ քարտեզագրական հրատարակությունների մի քանի նմուշների հետ ծանոթ ենք նրանց արտալուսանկարումներից: Իսկ մի գգալի մասը մեր ցուցակի մեջ ենք մտցրել, քաղելով այլ ցուցակներից:

Մինչսովետական ժամանակաշրջանի հայկական այն քարտեզագրական հրատարակությունները, որոնք լույս են տեսել Ռուսաստանում և նշված են ցուցակում, համարյա բոլորի հետ մենք ծանոթացել ենք:

Ի՞նչ վերաբերում է սովետական ժամանակաշրջանի հայ քարտեզագրական հրատարակություններին, ապա ցուցակում նշվածների հետ ծանոթ ենք գրեթե ամբողջին:

Բացի հայկական քարտեզագրական հրատարակություններից, ծանոթ լինելով նաև տասնապատիկ ավելի թվով լույս տեսած ուռւերեն և Սովետական Միության ազգությունների, ինչպես նաև օտար՝ գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն և այլ լեզուներով քարտեզագրական հրատարակությունների, այդ հանգամանքը մեծ չափով օգնել է մեզ այս աշխատության գործում:

Պետք է ընդունել, որ մեր ցուցակում նշված հայ քարտեզագրական հրատարակությունները, որոնց քանակը մոտ հարյուր ութսունից քիչ ավելին է, անշուշտ, սպառիչ չէ:

Եթե վսահորեն կարող ենք ասել, որ այդ ցուցակի սովետական ժամանակաշրջանի հայ քարտեզագրական հրատարակություններից նշված են համարյա բոլորը, ապա նույնը մինչսովետական ժամանակաշրջանի հրատարակությունների մասին ասել չենք կարող: Առավել այդ վերաբերում է օտար երկրներում լույս տեսած հայ ապագիր քարտեզագրական հրատարակություններին, որոնց մի մասը անմատչելի է եղել մեզ համար, առավել վերջին տարիների հայ քարտեզագրական հրատարակությունները: Այդ պատճառով ցուցակն ընդհատվում է 1920 թվականով:

Սովետական ժամանակաշրջանի հայ ապագիր քարտեզագրական հրատարակությունների անունները 100-ից ավելի են, միջին մինչսովետական հրատարակությունների քանակը գրանցից պակաս է:

Սակայն, չպետք է մոռացության տալ, որ մինչսովետական ժամանակաշրջանը իր տեսողությամբ շատ և շատ ավելի է: Այսինքն՝ միչսովետական ժամանակաշրջանն ընդգրկում է 225

տարի, մինչդեռ սովետահայ ժամանակաշրջանը բոլորեւ է միայն  
35 տարին:

Այնուհետև, ընդհանուր ամփոփման կարգով, անհրաժեշտ  
է նշել, որ հայ քարտեզագրական հրատարակությունների վրա  
շատ գեղքերում նշված չեն լույս տեսնելու վերաբերյալ և այլ  
տեղեկություններ:

Կան հայ այնպիսի հրատարակություններ, առավել օտար  
երկրներում լույս տեսածները, որ չունեն հրատարակման տարե-  
թիվ: Այդ սովորությունը կիրառվում էլ մեծ մասամբ գերմանա-  
կան, ֆրանսիական, անգլիական և այլ քարտեզագրական մի  
շարք հրատարակությունների կողմից: Նման դեպքերում քար-  
տեզի բովանդակության քաղաքական նշաններից (պետություն-  
ների սահմաններ, քաղաքներ, աշխարհագրական անունների տա-  
ռադարձություններ) մեղ հաջողվել է պարզել, թե տվյալ քար-  
տեզը երբ է տպագրվել: 1856 թվականի Դրիմի պատերազմի,  
1877 թվականի ոռւս-թուրքական պատերազմի, 1912 թվականի  
Բալկանյան պատերազմի կամ 1914 թվականի առաջին համաշ-  
խարհային պատերազմի հետևանքներով սահմանային և այլ փո-  
փոխություններից կունել ենք թե այս կամ այն քարտեզը երբ  
է հրատարակվել:

Կան նաև հայ քարտեզագրական հրատարակություններ, որ  
չունեն հրատարակման վայրի անունը, իսկ ավելի հաճախ քար-  
տեզագրական գործարանի անունը, երբեմն չկա թվային կամ  
գծային մատչապը, հաճախ՝ տիրաժը: Էլ ավելի հաճախ այդ հրա-  
տարակություններում չեն նշվում կազմողի կամ խմբագրի անու-  
նը, գծագրողի կամ քարտեզագրի անունը:

Այդ է պատճառը, որ հայ տպագիր քարտեզագրական հրա-  
տարակությունների ցուցակում նշված համառոտ տվյալները  
միակերպ չեն, կամ պակասավոր են:

II    U    U

ՅՈՒՅԱԿ ՀՈՅ ՔԱՐՏԵԶԱԳԻՄԿԱՆ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1695—1955

Այս աշխատության երկրորդ մասում գետեղված հայ քարտեղագրական հրատարակությունների ամբողջական ցուցակն ունի իր ուրույն պատմությունը:

Հայ քարտեղագրական հրատարակությունների մասին տեղեկություններ համարելը եղել է երկարամյա գործ, իսկ ժամանակագրական կարգի սկզբունքով ցուցակ կազմելը, ըստ ժամանակաշրջանների խմբավորելը կատարված է Հայկական ՍՍԾ Գիտությունների ակադեմիայի սիստեմում մեր կողմից այսթեմայի կատարման կապակցությամբ:

Հայ քարտեղագրական հրատարակությունների ցուցակը կազմելիս օգտվել ենք Երևանի Մյասնիկյանի անվան Հանրային գրադարանի քարտեղագրական կատալոգից և ժողոված քարտեղագրական հրատարակություններից, ապա Հայկական ՍՍԾ Գիտությունների ակադեմիայի և Հայկական աշխարհագրական ընկերության տրամադրության տակ գտնվող աղբյուրներից, և 1947 ու 1949 թթ. Թրիլիսի, Մոսկվա, Լենինգրադ կատարած գիտական ուղևորության ժամանակ Վրաստանի Աշխարհագրական ինստիտուտի և Վրացական աշխարհագրական ընկերության արխիվային աղբյուրներից, Մոսկվայում՝ ՍՍԾՄ Գիտությունների ակադեմիայի Աշխարհագրական ինստիտուտի գրադարանում ժողոված քարտեղագրական ցանկից և նյութերից, նաև Լենինի անվան Պետական գրադարանի քարտեղագրական տվյալներից, Լենինից գրադարանի անվան Հայություններից, ՍՍԾՄ Գիտությունների ակադեմիայի Լենինգրադի գրադարանի նյութերից, Համամիութենական Աշխարհագրական ընկերության գրադարանի քարտեղագրական աղբյուրներից և այլն:

Մեր այս աշխատության մեջ գետեղված ցուցակում ձգտել ենք ըստ հնարավորին տալ հայ քարտեղագրական հրատարակությունների մասին անհրաժեշտ տեղեկություններ, թե ի՞ր և ո՞ր

տեղ է լույս տեսել, ի՞նչ տեսակի հրատարակություն է, ապա աշխատել ենք մատնանշել՝ ի՞նչ լեզվով է հրատարակվել, հրատարակության բնույթը, մասշտաբը («աստիճանքը»), վերջապես ում, որ անձի կամ հիմնարկության աշխատությամբ, որքան օրինակով, ինչ գնով, եթե միայն վերջին տեղեկությունները հաջողվել է քաղել հայ քարտեզագրական հրատարակություններից:

Չնայած մեր գործադրած ջանքերին, տալ ամբողջական և լրիվ ցուցակ, ինչպես հիշատակված է այս աշխատության սկզբում, մեր կամքից անկախ, հնարավոր չէր լրիվ կատարել այդ պահանջը և ցանկությունը:

## Ց Ա Խ Ց Ա Կ

### ՀԱՅ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

(Ժամանակագրական կարգով)

#### 1. ՄԻՆՉՍՈՎԵՑԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ

ՏՊԱԳՐՎԱԾ ՕՏԱՐԵՐԿՐՅԱԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1695 թ., Ամսաերդամ—Քարտեզ աշխարհի (կիսագնդերով): «Համատարած Աշխարհացոյց» (առաջին հայերեն տպագրված քարտեզը): Աշխատություն և հրատարակություն Վանանդեցիների՝ (Գողթան գավառ) Թովլմաս Եպիսկոպոսի, Ղուկաս և Միքայել Նորիկիանյանների ու Մատթեոս Հովհաննիսյանի: Հայերեն, մեկ գույնի (սկ), նկարագարդ, չափսը՝ 120 սմ × 150 սմ: Փորագրություն՝ Աղբիանուս և Պետեր Շխոնքեկ (Սկոնքեկ) եղբայրների, բանալիով (այսինքն՝ բացատրականով), գինը 15 ֆր.:

1696 թ., Ամսաերդամ—Քարտեզ աշխարհի (կիսագնդերով): «Համատարած աշխարհացոյց», հայերեն: Նախորդի փոքրածավալ հրատարակությունը, գինը  $\frac{1}{2}$  ֆր.:

1746 թ., Վենետիկ—«Քարտեզ Երկիր Աւետեաց»: Հայերեն, կրոնական, գինը  $\frac{1}{2}$  ֆր.:

1751 թ., Վենետիկ—Քարտեզ Հայաստանի: «Աշխարհացոյց Հայաստաննեայց» ըստ հին և նոր աշխարհագրաց. հայերեն, մեծագիր:

1751 թ., Վենետիկ—Քարտեզ «Հայաստան աշխարհի»: Բատ նախնի աշխարհագրաց, հայերեն, պատմական, փոքրագիր. մեկ գույնի (սկ), գինը 1 ֆր., գլխավոր միջօրեականը Ֆեռոյից  $10^{\circ}$  արևմուտք (այդ քարտեզում Երևանը արևելյան երկայնության  $72,5^{\circ}$ -ի վրա է նշված):

- 1778 թ., Վենետիկ—Քարտեզ Հայաստանի. «Աշխարհացոյց Հայաստանեաց»: Հայերեն, մեկ գույնի (սկ), երկայնությունը ֆեռոյից, նկարութարդ: Փորագրել են աղա Շ. Շամիլյանցի որդիները:
- 1786 թ., Վենետիկ—Աշխարհագրական ատլաս: «Բոստ նոր աշխարհագրական զննութեանց»: Բաղկացած է 8 քարտեզից, հայերեն, չափով՝  $38 \times 50$  սմ.:
- 1786 թ., Վենետիկ—Եվրոպայի Քարտեզ: Հայերեն, մեկ գույնի (սկ), զարդանկարներով:
- 1787 թ., Վենետիկ—«Բարտեզնեան Աշխարհացոյց տախտակներ», հայերեն, գինը 6 ֆր.:
- 1787 թ., Վենետիկ—«Օսմանեան պետութեան քարտեզ», «Ասիայ և Եվրոպիոյ», հայերեն, քաղաքական, գինը 1 ֆր.:
- 1791 թ., Վենետիկ—«Քարտեզ Ասփորի»: Հայերեն, գինը 75 սենթ:
- 1794 թ., Վենետիկ—«Քարտեզ Ասփորի»: Հայերեն, Ղուկ. ինձիճյանի:
- 1805 թ., Վենետիկ—«Քարտեզ Խրիմի»: Հայերեն, գինը 1 ֆր.:
- 1805 թ., Վենետիկ—«Քարտեզ Մարմարա ծովի»: Հայերեն, գինը 75 սենթ:
- 1819/20 թթ., Վենետիկ—«Քարտեզ Սև ծովի և Պոնտոսի»: Հայերեն, Մինաս Բժշկյանի, գինը  $1\frac{1}{2}$  ֆր.:
- 1831 թ., Վենետիկ—«Քարտեզ Ասփորի»: Բոտակերեն, գինը 75 սենթ:
- 1847 թ., Վիեննա—Քարտեզ Շվեյցարիայի. «Աշխարհացոյց տախտակ, Հելվետիա»: Հայերեն, գինը 75 սենթ:
- 1848 թ., Վիեննա, Վենետիկ—Քարտեզ Լոմբարդիայի. «Աշխարհացոյց տախտակ. Լոմբարդիա»: Հայերեն, գինը 25 սենթ:
- 1849 թ., Վենետիկ—Փարիզ—Ատլաս «Աշխարհացոյց պատկերաց»: Մեծագիր (սեղանի), չափով՝  $45 \times 60$  սմ, 10 քարտեզ (տախտակ), հայերեն, քաղաքական, բազմագույն, 46 էջ տեքստով, բացատրականով: Աշխատություն Միսիթարյանների, հրատարակություն՝ Հովհաննես ամիրա Տատյանի, կազմով, ամբողջը 35 ֆր., յուրաքանչյուր տախտակը առանձին՝ 3,5 ֆր.: Փորագրված է Փարիզում:
- 1849 թ., Վենետիկ—Փարիզ—Քարտեզ «Հայաստանեաց աշխարհի», «Բոստ նախնի աշխարհագրաց»: Հայերեն, պատմական, բազմագույն, («Աշխարհացոյց պատկերաց» ատլասի տախտակը): Փորագրություն՝ Սյուռու Հենրի: Հրատարակություն՝ Հ. ամիրա Տատյանի, մ. 1:2.200.000, փորագրված է Փարիզում, տպագրված է Վենետիկում:

- 1849 թ., Վենետիկ—Փարիզ—«Քարտեղ Հայաստանի», «Բոստ  
նախնի աշխարհագրաց»: Պատմական, բազմագույն, հայե-  
րեն: Նախորդի փոքր հրատարակությունն է:
- 1849 թ., Վիեննա—Քարտեղ, Հարթագույն: Հայերեն, գինը  $\frac{1}{2}$  ֆր.:  
Հրատարակություն Մխիթարյանների:
- 1850 թ., Վիեննա—Գլորուս «Նոր Երկրագունդ»: Մեծագիր (60 սմ  
տրամագծով), հայերեն, գունավոր, Փիդիկական, ևստանու-  
վրա: Հեղինակ Արսեն Այտբնյան, աշխատակցությամբ՝  
Հ. Պալճյանի, գործ՝ Մխիթարյանների, գինը 225 ֆր.:
- 1851 թ., Քարտեղ «Աշխարհացոյց տախտակ», Պաղեստին: Հայե-  
րեն, կրոնական, հրատարակություն Մխիթարյանների, գինը  
25 սենթ:
- 1851 թ., Վիեննա—Գլորուս, «Երկրագունդ»: Փոքր (8 մատնաչափ  
տրամագծով), հայերեն, աշխատություն Մխիթարյան միա-  
բանության, գինը 40 ֆր.:
- 185(°) թ., Վիեննա—Քարտեղ Եվրոպայի երկաթուղիների, «Աշխար-  
հացոյց տախտակ»: Հայերեն, անտեսական: Հրատարակու-  
թյուն Մխիթարյանների, գինը 1,5 ֆր.:
- 1855 թ., Վենետիկ—Քարտեղ «Հայաստանն ըստ նախնի աշխար-  
հագրաց»: Հայերեն, պատմական, Դ. Ալիշանի («Տեղա-  
գրութիւն Հայոց Մեծաց»):
- 1856 թ., Վիեննա—Գլորուս «Երկրագունդ»: Մեծագիր (երկու սու-  
նաչափ բարձրության), տրամագիծ՝ 60 սմ, հայերեն, քա-  
ղաքական, գունավոր, Արսեն Այտբնյանի, («Հանդես Ամ-  
սօրեայ»), գինը 225 ֆր.:
- 1856 թ., Վիեննա—Քարտեղ «Աշխարհացոյց տախտակ», Խըլմ»,  
Հայերեն և «տաճկերեն», քաղաքական, գինը 25 սենթ:  
հրատարակություն Մխիթարյանների:
- 1856 թ., —Քարտեղ «Աշխարհացոյց տախտակ», Սևաստոպոլ: Հա-  
յերեն, քաղաքական, գինը 25 սենթ, հրատարակություն  
Մխիթարյանների:
- 1860 թ., Վիեննա—Ատլաս, «Աշխարհացոյց տախտակներ»: 21  
քարտեղ (տախտակ), հայերեն, գունավոր: Աստվածատուր  
Ավագյանի. չափով՝  $27 \times 38$  սմ. «Ի պետս աղդային դըպ-  
րոցաց», գինը 10,75 ֆր.:
- 1862 թ., Վենետիկ—Փարիզ—Ատլաս «Համատարած աշխարհագրու-  
թիւն»: 12 քարտեղ (տախտակ), հայերեն, գինը 15 ֆր.:  
Աշխատություն՝ Մխիթարյանների, փորագրող Հ. Այուսոս:

- 1864 թ., Բեռլին—Քարտեզ Վանա ծովի: Հայերեն, Գիպիկական: Աշխատություն Ներսէս Սարգսյանի, գծվածք՝ Կիպսերտի, վիմագրություն՝ Օմանի, մ. 1:500.000: Ե. Սարգսյանի «Տեղագրութիւն ի Փոքր և ի Մեծ Հայս» աշխատության կեց:
- 1888 (°) թ., . . . Քարտեզ «Քսենոֆոնի արշաւանքը մինչև Առ ծով. մեկ գույնի, մ. 1:4.000.000, կազմեց ֆոն Հոփ Մայոթեր:
- 1885 թ., Վենետիկ—Քարտեզ Կիլիկիայի («Սիսուան»): Հայերեն, պատմական, գունավոր. Ղ. Ալիշանի համանուն գրքի մեջ:
- 1890 թ., Վենետիկ—Քարտեզ «Ալյարատ նահանգի»: Հայերեն, պատմական, բազմագույն. Ղ. Ալիշանի համանուն գրքի մեջ և առանձին:
- 1893 թ., Վենետիկ—Քարտեզ Սյունիք նահանգի («Սիսական»): Հայերեն, պատմական, գունավոր. Ղ. Ալիշանի համանուն աշխատության մեջ:
- 1895 թ., Վենետիկ—«Քարտեզ Շիրակի»: Հայերեն, պատմական, գունավոր. Ղ. Ալիշանի նույնանուն գրքի մեջ:
- 189 (°) թ., Վենետիկ—Ատլաս գրպանի: Հայերեն, գունավոր քարտեզներով, տեքստով, նկարագրով, կազմով. Հ. Ա. Էփրիկյանի. առաջին տպագրություն:
- 1901 թ., Վենետիկ—Ատլաս գրպանի: Հայերեն, բազմագույն քարտեզներով, գլւ. միջօրեալանը — Փարիզի, սկզբում տրված է տեքստը, անվանացանկը, թվական տեղեկություններով, 105 էջ, նկարագրով, կազմով. չափով՝ 12 սմ × 18 սմ: Գործ՝ Հ. Էփրիկյանի, քարտեզների փորագրությունը՝ Ա. Ճենատերեճյանի, 2-րդ հրատ.: Միթթարյան տպարան:
- 190 (°) թ., — Քարտեզ Ելրոպայի: Հայերեն, արտասահմանյան հրատարակություն:
- 190 (°) թ., Բեռլին—«Քարտեզ Օսմանեան կայսրութեան»: Հայերեն, 1 թերթ, ծալված:
- 1904 թ., Բագել—Քարտեզ «Հայաստանը և հարեան երկրները»: Հայերեն, գլխագիրը և բացատրականը՝ Փրանսերեն լեզվով, քաղաքաքական: Գծագրեց և տպագրեց Հ. Մանիսաճյան, գունավոր, մ. 1:3.500.000: Հրատարակություն Ելրոպայի Հայ ուսանողական Միության:
- 1913 թ., Կ. Պոլիս—«Քարտեզ Օսմանեան պետութեան»: Հայերեն, գունավոր, քաղաքական, մասշտաբը 1:1.250.000, չափով՝ 0,88 մ × 1,22 մ: Ծրագրող՝ Ա. Պիպերճյան, գծագրող՝ Յ. Փա-

- փաղյան: Քարտեղին կցված է գրքույլի: Հրատարակություն «Հայրենիք կազմատան», գինը 20 զր., շքեղը՝ 25 զր.:
- 1913 թ., Կ. Պոլիս—«Քարտեղ Բալկանեան պետութեանց»: Հայեն, քաղաքական, գունավոր, մ. 1:864,000: Գործ՝ Ա. Պիպերձանի և Յ. Փափաղյանի, գինը 5 զր.:
- 1916 թ., Փարիզ—«Քարտեղ Հին Հայաստանի»: Ֆրանսերեն, գունավոր, մասշտ. 1:4.000.000, հանանդների ցանկով և վելայեթների ցուցակով. կազմող՝ Կ. Բասմաջյան:
- 1918 թ., Փարիզ—«Քարտեղ Հայաստանի»: Ֆրանսերեն, երկդույն, քաղաքական, Զ. Խանզադյանի գրքի հավելված. հրատարակություն Փարիզի Հայկական պատվիրակության:
- 1919 թ., Փարիզ—«Քարտեղ Հայաստանի», L'Arménie»: Ֆրանսերեն, գունավոր: Գործ՝ Գևորգ Մեսրոբի: Կցված է իր „L'Arménie“ գրքին:
- 1920 թ., Փարիզ—«Ատլաս Հայաստանի»: Պատմական քարտեղներ (18 տախտակ), ֆրանսերեն և այլ լեզուներով. հայերեն երկու փոքրացրած քարտեղ՝ «Համատարած աշխարհացոյց» (1695 թ.) և Եվրոպա (1786 թ.). կան քարտեղներ գունավոր, մասամբ մեկ գույնի (սև). առաջարանով, տեքստով-բացատրականով՝ Զ. Խանզադյանի: Atlas Historique de L'Arménie. Paris, 1920. par Z. Khanzadian.

## 2. ՄԻՆՉԱՌԵՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ

ՏԱՐԱԾՈՎԱԾ ՑԱՐԱԿԱՆ ՌԱԴՍԱՍՏԱՆՈՒԹՅՈՒՆ

- 1853 թ., Պետքրուրգ—Քարտեղ «Հին Հայաստանի»—„Карта Древней Армении“. Ռուսերեն, Ա. Խուդարաշյանի, կցված է Եղիշեի պատմության ոռուսերեն թարգմանությանը:
- 1858 թ., Պետքրուրգ—Քարտեղ «Հին Հայաստանի»: Ռուսերեն, գունավոր, մասշտաբը՝ 1:410,000, 1 մատնաչափը = 105 վերսալի: Կազմող՝ Ա. Խուդարաշյան, գծագրող՝ Ա. Շարաուս: Կցված է Ա. Խուդարաշյանի „Обозрение Армении“ աշխատությանը:
- 1858 թ., Պետքրուրգ—Քարտեղ «Հայաստանի և հարակից երկրների»—„Карта Армении и сопредельных стран“: Ռուսերեն, մ. 1:2.600.000, գունավոր, կազմող՝ Ա. Խուդարաշյան, գծագրող՝ Ա. Շարաուս: Կցված է Ա. Խուդարաշյանի „Обозрение Армении“ աշխատությանը:
- 1877 թ., Պետքրուրգ—Քարտեղ «Աշխարհը ըստ Պաղսմեսսի»: Հայերեն, մեկ գույնի (սև), չափով՝ 22 սմ × 36 սմ. կցված է

- Ք. Պատկանյանի «VII դարի Հայկական աշխարհագությունը» գրքին:
- 1882 թ., Թիֆլիս—Քարտեզ «Նախկին Հայաստանի» մասշտաբ չունեցած գծապահն անկանոն: Աշխատ. Ա. Տեր-Հակոբյանի:
- 1899 թ., Թիֆլիս—Քարտեզ «Գանձակ գավառի»: Հայերեն, մասշտաբը՝ 1:500.000, գծ. Վարդ. Միրզյանի:
- 1901 թ., Թիֆլիս—Քարտեզ «Հայկական լեռնաշխարհի կառուցվածքի հիմնական գծերը»—«Основные черты строения Армянского нагорья». Ռուսերեն, երկգույն, մ. 1 մատնաչափը = 100 կիլոմ.: Կազմեց՝ Ա. Դուկասով:
- 1902 թ., Թիֆլիս—Քարտեզ «Բորչալու գաւառի» մ. 1:500.000, երկու գույն, աշխատ. Վ. Միրզյանի:
- 1903 թ., Թիֆլիս (°)—«Քարտեզ Հայ Բարեգործական ընկերութեան հիմնարկներից ցանցի»: Ուրվագծային, մեկ գույնի (սև), հայերեն. (Երև. Հանրային գրադարան. Լէօյի գրադարանից):
- 1905 թ., Թիֆլիս—«Քարտեզ Սասունի»: Հայերեն, մեկ գույնի (սև), մ. 1:500.000. Ալ. Քարանթարի. հեղինակի համանուն աշխատության մեջ և առանձին:
- 1906 թ., Թիֆլիս—«Քարտեզ Երևան նահանգի Շարուր-Դարալագեազ և Նախիչևան գաւառների»: Հայերեն, գունավոր, մ. 1:200.000, կազմեց՝ Ե. Լալայան, տպագրություն Հայ Աղգագրական ընկերության:
- 1906 թ., Թիֆլիս—Առլաս աշխարհագրական, գլոբոցական: Աշխարհի, աշխարհամասերի, Ռուսաստանի և Կովկասի քարտեզներ, հայերեն, զանազան մասշտաբների, գունավոր, կազմեց՝ Ա. Արեգյան:
- 1906 թ. (°), Թիֆլիս—Քարտեզ «Հին Հայաստանի» գունավոր, առանց աստիճանացանցի. մասշտաբը գծային, անգլ. մղոններով: Կազմեց՝ Լէօ, գծագրեց՝ Ա. Երկայնյան, հրատարակեց՝ Գ. Տեր-Մարտիրոսյան:
- 1908 թ., Թիֆլիս—«Քարտեզ Երևան նահանգի նոր Բայազետ գաւառի»: Հայերեն, գունավոր, մ. 1:200.000. կազմեց՝ Ե. Լալայան, գծագրեց՝ Պ. Մարիմյան, տպագրություն Հայ Աղգագրական ընկերության:
- 1909 թ., Թիֆլիս—«Քարտեզ Հայաստանի գետերի»: Ուրվագծային, մեկ գույնի (կապույտ), հայերեն, մանկական հրատարակություն, կցված համանուն գրքին և առանձին: Գործ հայ մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանի:
- 1910 թ., Թիֆլիս—«Քարտեզ Հին Հայաստանի»: Կից տրված են նաև հարևան երկրները: Պատմական, հայերեն, գունավոր,

- մ. 1:800.000. կազմեց՝ Գ. Վարդանյան, գծագրեց՝ Գ. Դյուլս-տերդիկ, գինը 4 ռուբ.:
- 1912 թ., Բարու—«Քարտեղ Անդրկովկասի»—„Карта Закавказья (этнографическая)“. Ազգագրական, ոռուսերեն, բազմագույն, մեծադիր, Կ. Խատիսյանի, հրատարություն Բաքվի Հայ Կուլտուրական Միության:
- 1912 թ., Բարու—«Քարտեղ Անդրկովկասի»: Ազգագրական, հայերեն, բազմագույն, մեծադիր, Կ. Խատիսյանի, հրատարակություն Բաքվի Հայ Կուլտուրական Միության:
- 1913 թ., Թիֆլիս—«Քարտեղ Երևան նահանգի»—„Карта Эриванской губернии“. Ռուսերեն, վարչական, գունավոր, կցված է „Памятная книга Эриванской губернии“ գրքին: Կազմված է Երևանի նահանգապետության հայ աշխատակիցների մասնակցությամբ:
- 1914 թ., Թիֆլիս—«Քարտեղ Հին Հայաստանի»: Պատմական, հայերեն, մեկ գույնի (սև), չափսը՝ 19 սմ × 32 սմ, կազմված է ըստ Կ. Բասմաջյանի, կցված է Ա. Տեր-Հակոբյանի «Հայաստանի աշխատակիցների» գրքին:
- 1915 թ., Թիֆլիս—Քարտեղ «Հայաստանը և հարեան երկրները»: Հայերեն, երեք գույնով, կազմված է ըստ Լինչի, մասշտաբը՝ 1:1.000, թվական տվյալների աղյուսակով, խմբագիր և հրատարակիչ՝ Ա. Արեգյան:
- 1915 թ., Թիֆլիս—Քարտեղ «Հայաստանը և հարեան երկրները»: Հայերեն, մեկ գույնի, կազմեց՝ Ա. Արեգյան:
- 1916 թ., Թիֆլիս—«Քարտեղ Ռուս-թուրքական ռազմարեմի» № 1: Ընդգրկված են Տրապիզոնի և Երզրումի վիլայեթները Հայերեն, գունավոր, մ. 1 մատնաչափում 20 վերստ, վիմագրական աշխատանք՝ Հ. Շահբաղյանի, հրատարակություն՝ Գ. Վարդանյանի, գինը 10 կոպ.:
- 1916 թ., Թիֆլիս—«Քարտեղ Ռուս-թուրքական ռազմարեմի» № 2: Ընդգրկված են Ալաշկերտի, Վանի, Ատրպատականի շրջանները, հայերեն, գունավոր, մ. 1 մատնաչափում 20 վերստ. վիմագրական աշխատանքը՝ Հ. Շահբաղյանի, հրատարակություն՝ Գ. Վարդանյանի, գինը 10 կոպ.:
- 1917 թ., Թիֆլիս—«Քարտեղ Ռուս-թուրքական ռազմարեմի»: Ընդգրկում է Հայաստանը և հարեան երկրները: Հայերեն, գունավոր, մասշտաբը՝ 1 միլիմետրը = 3,2 վերստի, թվական տվյալների աղյուսակով, վիմագրություն՝ Բիխովի, հրատարակություն՝ «Մշակ» լուսագրի:

### 3. ՍՈՎԵՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԾՐՁԱՆ

- 1923 թ., Երևան — «Քարտեզ Հայաստանի ՍԽՀ»: Վարչական, հայերեն, վերնագիրը և ցուցակը նաև ոռուերեն, գունավոր, մասշտաբը՝ 1 մատնաչափը=20 վերստի: Կազմողներ՝ Ա. Տեր-Հովսեփյան և Նազարեթյան. հրատարակություն Սովետական Հայաստանի Կենտրոնական վիճակագրական վարչության:
- 1924 թ., Երևան — Քարտեզ-բացիկ «Հայաստանի ՍԽՀ»: Վարչական, հայերեն, գունավոր, մասշտաբը՝ 1:4.000.000, աշխատություն Ա. Հարությունյանի:
- 1925 թ., Երևան — «Քարտեզ Հայաստանի ՍԽՀ»: Երկդույն, ուրովագծային, հայերեն, մ. 1:200.000. հրատարակություն ՀՍԽՀ Պետպլանի:
- 1925 թ., Թբիլիսի — «Քարտեզ Հայաստանի ՍԽՀ» — „Կարտա Արմանսկոյ ՀՀ“: Վարչական, գունավոր, ոռուերեն:
- 1926 թ., Երևան—Թբիլիսի — «Քարտեզ Հայաստանի ՍԽՀ բուսական ծածկութիւն»—Կարտա растительного покрова Армянской ССР. Գունավոր, մ. 1:1.000.000, ոռուերեն, կազմեց՝ Ա. Ա. Գրոսգեյմ. Սովետական Հայաստանի բուսաբանական կազմակերպության հանձնաբարարությամբ:
- 1926 թ., Երևան — Տետր աշխարհագրական, դպրոցական, մաս I, մեկ գույնի (սկ), 36 քարտեզներով, հայերեն, բացատրական տեքստով, խմբագիր՝ Հ. Էլիբեկյան:
- 1927 թ., Երևան — «Քարտեզ Հայաստանի ՍԽՀ»: Վարչական, գունավոր, մ. 1 մատնաչափը=10 վերստի, հայերեն, հրատարակություն Սովետական Հայաստանի Վիճակագրական վարչության, խմբ.՝ Զ. Կորկոտյան, գծագրող՝ Ա. Մինասյան, տիրաժը՝ 7000:
- 1927 թ., Երևան — «Հատակագիծ հին Երևանի» և «Հատակագիծ նոր Երևանի»: Հայերեն, գունավոր, Ա. Թամանյանի, վիմագրություն՝ Ե. Դանչոյի. հրատարակություն Երևանի քաղաքային խորհրդի:
- 1927 թ., Երևան — Քարտեզ Հայաստանի ՍԽՀ արոտների և խոտհարքների: Հայերեն, տնտեսական, մեկ գույնի (սկ), մասըշտաբը՝ 1 : 1.000.000, գծագրող՝ Վ. Ե., Հայպետհրատի հրատարակություն:
1927. թ., Երևան — Քարտեզ Զինաստանի, քաղաքական, հայերեն, գունավոր, մասշտաբը՝ 1 : 8.000.000, տիրաժը՝ 5000, գինը

- 1 ս., վիմագրական աշխատանք՝ Ե. Դանչոյի, հրատարակություն Հայպետհրատի:
- 1928 թ., Երևան — Քարտեզ «Հայաստանի ՍևՀ»: Հայերեն, գուշակություն, մ. 1:840.000: Պատվեր՝ ՀՍԽՀ Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի, հրատարակություն Հայպետհրատի:
- 1928 թ., Երևան — Թբիլիսի — Ատլաս, աշխարհագրական, գպրոցական, հայերեն, գունավոր, 15 քարտեզներով, վիճակագրական տվյալներով, աղյուսակով, կազմեց՝ Հ. Էլիբեկյանը՝ վիմագրող՝ Լեվիտ, առաջին հրատարակություն, տիրածը 10 000, գինը 2 ռ. 25 կոպ.: Պատվեր՝ ՀՍԽՀ Լուսավորության ժողով. կոմիսարիատի:
- 1928 թ., Երևան — Թբիլիսի — Քարտեզ «Հայաստանի ՍևՀ»: Հայերեն, գունավոր, մ. 1:1.000.000, ֆիզիկական, վարչական շրջաններով, կազմեց՝ Հ. Էլիբեկյանը, գծադրող՝ Լեվիտ, նորմատիվ ատլասի առանձին քարտեզը:
- 1929 թ., Երևան — Թբիլիսի — Ատլաս, աշխարհագրական, գպրոցական, քրդերեն, գունավոր քարտեզներով. կազմեց՝ Հ. Էլիբեկյանը, վիմագրող՝ Լեվիտ: Պատվեր՝ ՀՍԽՀ Լուսավորության ժողով. կոմիսարիատի.
- 1930 թ., Երևան — Քարտեզ «Հայաստանի ՍևՀ»: ՀՍԽՀ առողջապահական հիմնարկների ցանցը, բժշկական, հայերեն, գունավոր, մ. 1:400.000: Հրատարակություն ՀՍԽՀ Առողջապահական ժողովրդական կոմիսարիատի Սանլուս բաժնի:
- 1932 թ., Երևան — Ատլաս «Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության»: Ֆիզիկական, երեք քարտեզից, հայերեն, գունավոր, զանազան մասշտաբների, խմբագիր՝ Հ. Ստեփանյան, վիմագրող՝ Ե. Դանչո, հրատարակություն Հայպետհրատի, տիրածը 1000, գինը 1 ռ.:
- 1932 թ., Երևան — Տետր աշխարհագրական, գպրոցական, 29 սեղանագրական, նկարազարդ, հայերեն, մի քանի քարտեզների տեքստը ոռուերեն, չափսը՝ 22 սմ × 30 սմ, տիրածը 8000: Կազմեց՝ Հ. Գրիգորյանը, հրատարակություն Հայպետհրատի:
- 1932 թ., Երևան — Լենինգրադ — «Քարտեզ Հայաստանի ՍևՀ»: Հայերեն, բազմագույն, տնտեսական, մասշտաբը՝ 1:200.000, չորս թերթից, կազմող՝ Խ. Ավելյան, ձեւվորող՝ Ա. Մինասյան, տիրածը 5000, գինը 10 ռ.:
- 1932 թ., Երևան — Լենինգրադ — «Քարտեզ Հայաստանի ՍևՀ»—

- „Карта Армянской ССР“. Номинальная, республиканская, тираж  
миллионная, масштаба  $1:200.000$ , издана в Ереване, издаваемая  
в. Угловой Ереван, Академия наук Армии, тираж 5000,  
цена 10 .:
- 1932 г., Ереван — «Варташ» «Угловая карта Армии и Тавуша  
и Арагацотна Ереван»: Задокументирована, типография, республиканская  
и Арагацотна Ереван, тираж 1:6.000.000: Издательство «З. Угловая карта Армии и  
Тавуша», цена 5000, тираж 1 .:
- 1932 г., Ереван — Ереванский геодезический институт — «Угловая карта Армии и  
Тавуша»: Задокументирована, типография, тираж 1:32.000.000 — Задокументирована  
и Арагацотна Ереван, тираж 70—110°: Издательство «З. Угловая карта Армии и  
Тавуша»: Задокументирована, типография, тираж 110×170 ар., квадрат 1 × 1 км. Варташ. 8. Ереванский институт  
Угловая карта Армии и Арагацотна Ереван: Издательство «З. Угловая карта Армии и  
Тавуша»: Задокументирована, типография, тираж 1:10.000.000: Издательство «З. Угловая карта Армии и  
Тавуша»: Задокументирована, типография, тираж 3000, тираж 4 .:
- 1932 г., Ереван — Угловая карта Армии и Арагацотна Ереван, типография, тираж  
и Арагацотна Ереван, типография, тираж 1:10.000.000: Издательство «З. Угловая карта Армии и  
Тавуша»: Задокументирована, типография, тираж 1 .:
- 1932 г., Ереван — «Варташ» «Задокументирована Угловая карта Еревана»: Задокументирована  
и Арагацотна Ереван, типография, тираж 1:10.000.000, Задокументирована — республиканская  
и Арагацотна Ереван, типография, тираж 1:10.000.000: Издательство «З. Угловая карта Армии и  
Тавуша»: Задокументирована, типография, тираж 1 .:
- 1932 г., Ереван — «Варташ» «Угловая карта Еревана»: Задокументирована  
и Арагацотна Ереван, типография, тираж 1:30.000.000, Задокументирована — республиканская  
и Арагацотна Ереван, типография, тираж 1:30.000.000: Издательство «З. Угловая карта Армии и  
Тавуша»: Задокументирована, типография, тираж 1 .:
- 1933 г., Ереван — «Варташ» «Задокументирована Угловая карта Еревана»: Задокументирована  
и Арагацотна Ереван, типография, тираж 1:1.000.000: Издательство «З. Угловая карта Армии и  
Тавуша»: Задокументирована, типография, тираж 1 .:
- 1933 г., Ереван — «Варташ» «Задокументирована Угловая карта Еревана»: Задокументирована  
и Арагацотна Ереван, типография, тираж 1:1.000.000: Издательство «З. Угловая карта Армии и  
Тавуша»: Задокументирована, типография, тираж 1 .:
- 1934 г., Ереван — «Варташ» «Угловая карта Еревана» — „Карта  
Закавказской СФСР“. Типография, типография, тираж 1:1.000.000, типография, тираж 1 .:
- 1934 г., Ереван — «Варташ» «Угловая карта Еревана»: Задокументирована, типография, тираж 1 .:

կան, բաղկացած է 13 թերթից, 36 մեծ ու փոքր քարտեզներից, հայերեն, գունավոր, կազմեց՝ Հ. Ելիբելյանը, տիրաժը 15 000, գինը 3 ռ. 50 կ.:

1934 թ., Երևան—Լենինգրադ — Գլուխոս, գպրոցական, ֆիզիկական, 25 սմ արամագծով: Հայերեն, բազմագույն, թեքառանցքով, պատվանդանով, Խմբագիր՝ Հ. Ստեփանյան, տեքստը գրեց Ե. Դանչո: Պատվեր ՀՍԽՀ Լուսավորության ժողովարկատի, հրատարակություն Լենինգրադի քարտեզագրական գործարանի, տիրաժը 3000, գինը 9 ռ.:

1934 թ., Երևան—Լենինգրադ — Քարտեզ, կիսագնդերի, հայերեն, գունավոր, գպրոցական, ֆիզիկական, տեքստը գրել է Օ. Դոխիկյանը, խմբագր. ՀՍԽՀ Լուսժողկոմատի Աշխարհագրական հանձնաժողովի, հրատարակություն Լենինգրադի քարտեզագրական գործարանի, տիրաժը 3000:

1934 թ., Երևան—Լենինգրադ — Քարտեզ «Խորհրդային Սոց. Հանրապետությունների Միության»: Պարոցական, ֆիզիկական, բազմագույն, հայերեն, մասշտաբը՝ 1 : 5.000.000. Կազմել է Համ. Քարտ. Տ. ինձեներ Շելուդյակովան, Երեք փոքր քարտեզներով, տեքստը գրել է Ա. Ահարոնյանը, խմբագր. ՀՍԽՀ Լուսժողկոմատի Աշխարհագրական հանձնաժողովի, տպագրություն Լենինգրադի քարտեզագրական գործարանի, տիրաժը 3000, կտավի վրա, գինը 7 ռ. 20 կ.:

1934 թ., Երևան—Լենինգրադ — Քարտեզ «Խորհրդային Սոց. Հանրապետությունների Միության»: Պարոցական, վարչական, բազմագույն, հայերեն, մասշտաբը՝ 1 : 5.000.000, չափով՝ 120 սմ × 180 սմ. տեքստը գրել է Լ. Հովհաննիսյանը, խմբագր. ՀՍԽՀ Լուսժողկոմատի Աշխարհագրական հանձնաժողովի, տպագրություն Լենինգրադի քարտեզագրական գործարանի, տիրաժը 3000, կտավի վրա, գինը 7 ռ. 20 կ.:

1934 թ., Երևան — «Քարտեզ Վ. Ի. Լենինի կենսագրության» (կյանքն ու գործունեությունը), նվիրված Լենինի մահվան 10-ամյակին, սկզբուցիոն՝ քաղաքական, գունավոր, մասըշտաբը՝ 1 : 10.000.000, հայերեն, կազմող՝ Հ. Ստեփանյան, գծագրողներ՝ Օ. Դոխիկյան և Հ. Հախնազարյան, վիմագրական աշխատանք՝ Ե. Դանչոյի, Լենինի նկարը — Նկարիչ Հ. Կոջոյանի: Հրատարակություն Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի, տիրաժը 2500, գինը 2 ռ.:

1934 թ., Երևան—Լենինգրադ — Քարտեզ «Զանգուլ գետի ստորին ավազանի»: Երկրաբանական-պետրոգրաֆիական, գունավոր,

- ոռուսիրեն, մ. 1 : 100.000. կազմեց՝ Պ. Ղամբարյանը, ՀԽՍՀ պետական հիմնարկների համար:
- 1935 թ., Երևան — Քարտեղ-բարձրաքանդակ «Սևանա լճի ավազանի»: Հորիզոնական մասշտաբը 1 : 100.000, գունավոր, կազմեց՝ Ա. Շահմուլը բարձրագույնը, խմբագրեց՝ Ա. Անտոնյան, հանձնարարությամբ Տեխնիկա-անտեսագիտական թանգարանի:
- 1935 թ., Երևան — Քարտեղ «Հայաստանի Սևէ»: Աղբագրական, հայերեն և ռուսերեն; բազմագույն, մ. 1 : 1.000.000. Հայաստանի բնակավայրերի ցուցակագրքին կից և առանձին, կազմեց՝ Խ. Ավդալը և կազմակերպությունը, ՀՀ Մինասյանը: Հրատարակությունը ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի:
- 1935 թ., Մոսկվա — Առլաս, աշխարհագրական, գպրոցական, 13 քարտեղներից, բազմագույն, հայերեն, զանազան մասշտաբների, խմբագրեց՝ Հ. Մտեփանյան, հրատարակությունը ՀՍԽՀ Լուսավորության ժողովրդական կոմիտեի համար, տիրաժը 10.000, գինը 2 ռ. 50 կ.:
- 1936 թ., Երևան — Քարտեղներ՝ «Հայաստանի Սևէ» — Կарты Армянской ССР<sup>4</sup>. Գունավոր, ռուսերեն, զանազան մասշտաբների, տնտեսական, Սևանի երկաթուղային մտգիստրալի հիմնավորման համար: Խմբագրեց՝ Գ. Քոչարյան, կազմող՝ Ա. Կամսարական: Հրատարակությունը ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիտեների Խորհրդի:
- 1936 թ., Երևան — Քարտեղ Խսպանիայի, գունավոր, հայերեն, մ. 1 : 2.500.000, քաղաքական, խմբագրեց՝ Հ. Մտեփանյան, հրատարակիչ՝ ՀԿՊ Երևանի կոմիտե:
- 1936 թ., Երևան — Քարտեղ բարձրաքանդակ «Սևան - Զանգուկասկագիր»: Մհծագիր, գունավոր, 1 օրինակ, մ. 1 : 100.000:
- 1936 թ., Երևան — Քարտեղ «Փամբակի գոզավորության» — „Կарта Памбакской котловины“. Երկգույն, ռուսերեն, մասշտաբը 1 : 200.000. կազմող՝ Հ. Կարապետյան. կցված է հեղինակի համանուն գրքին, չափսը 22 սմ × 34 սմ:
1936. թ., Երևան — Լենինգրադ — Գլորուս: Ֆիզիկական, գունավոր, հայերեն, 25 սմ: Տրամագծով, 2-րդ հրատարակություն. թեք առանցքով, պատվանդանով. խմբագրեց՝ Հ. Մտեփանյան: ՀՍԽՀ Լուսավորության ժողովրդական կոմիտեի համար պատվերով. տեքստը գրված է Երևանում, պատրաստված է Լենինգրադում, տիրաժը 3.000, գինը 9 ռուբլի:
- 1936 թ., Երևան — Լենինգրադ — Քարտեղ «Կիսագնդերի»: Գունավոր, հայերեն, գպրոցական, պատի, մհծագիր: Պատվեր ՀՍԽՀ

Լուսավորության ժողովրդական կոմսարիատի. տպագրված  
լենինգրազում:

- 1937 թ., Երևան — «Քարտեղ Հայաստանի ՍևՀ ուղիների» — „Դօ-  
 рожная карта Армянской ССР“. Երկույն, Փոնը կապույտ,  
տեքտը և նշանները սպիտակ, մասշտաբը՝ 1 մատնաչափը =  
= 20 վերսի, ոռուերեն, կազմով՝ Բ. Հարությունյան. պատ-  
վեր՝ ՀՍԽՀ ձմենտրանսի:
- 1937 թ., Երևան — Քարտեղ-սխեմա «Սևան-Զանգինսկոց կամագի» —  
(„Карта-схема Севан-Зангинского каскада“). Բազմագույն,  
ոռուերեն, մ. 1 : 500.000, աշխարհագրական - տնտեսական,  
պլակատի ձևով. Աշխատանք՝ Հ. Կոջոյանի, հրատարակու-  
թյուն ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի գործերի  
կառավարչության:
- 1937 թ., Երևան — Քարտեղ-բարձրաքանդակ՝ «Հայաստանի ՍևՀ»:  
Գունավոր, հորիզոնական մասշտաբը՝ 1 : 200 000, ուղղա-  
ձիգը՝ 1 : 5, պատվանդանի վրա, գիպսից. կազմեց՝ Ա. Շահ-  
մուրադյան, խմբագրեց Ա. Անտոնյան, հանձնարարությամբ  
Տեխնիկա-տնտեսագիտական թանգարանի:
- 1937 թ., Երևան — «Հատակագիծ Երևան քաղաքի»: Գունավոր,  
ոռուերեն. մ. 1 : 20.000, աշխատանք՝ Օ. Մարգսյանի.  
պատվեր Հայկական Տուրիստական վարչության. վիմա-  
գրատուն և տպարան Հայպետհրատի:
- 1937 թ., Երևան — Մոսկվա — Քարտեղ «Ասիայի»: Ուսումնական-  
ֆիզիկական, հայերեն, բազմագույն, մեծագիր, կտավի վրա:  
Մասշտաբը՝ 1 : 8.000.000, խմբագրություն՝ ՀՍԽՀ Լուսժող-  
կոմատի Աշխարհագրական հանձնաժողովի:
- 1937 թ., Երևան — Մոսկվա — Քարտեղ «Հյուսիսային Ամերիկայի»:  
Ուսումնական, ֆիզիկական, հայերեն, մեծագիր, բազմագույն,  
կտավի վրա: Մասշտաբը՝ 1 : 8.000.000. խմբագրություն՝  
ՀՍԽՀ Լուսժողկոմատի Աշխարհագրական հանձնաժողովի:
- 1937 թ., Երևան — Մոսկվա — Քարտեղ «Հարավային Ամերիկայի»:  
Բազմագույն, հայերեն, տնտեսական, մեծ գրքի 2 էջի ծա-  
վալով. խմբագրություն՝ Հայկական Խորհրդային Հանրա-  
գիտարանի քարտեղագրական բաժնի, հրատարակություն  
ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի:
- 1937 թ., Երևան — Թբիլիսի — Քարտեղ «Հյուսիսային Ամերի-  
կայի»: Բազմագույն, հայերեն, ֆիզիկական, չափսը մեծ գրք-  
քի 2 էջի ծավալով. խմբագրություն՝ Հայկական Խորհրդային

Հանրագիտարանի քարտեղագրական բաժնի, հրատարակություն ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի:

- 1937 թ., Երևան—Թբիլիսի — Քարտեղ «Հարավային Ամերիկայի»: Գունավոր, փիզիկական, հայերեն, չափության, խմբագրություն՝ Հայկական Խորհրդային Հանրագիտարանի քարտեղագրական բաժնի, հրատարակություն ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի:
- 1937 թ., Երևան—Թբիլիսի — «Քարտեղ Անգրկովկասի ԽՍՖՀ»: Գունավոր, հայերեն, քաղաքական, գրքի 1 էջի չափություն՝ Հայկական Խորհրդային Հանրագիտարանի քարտեղագրական բաժնի:
- 1937 թ., Երևան—Քարտեղ «Ագրբեջանի ՀՍԽՀ»: Գունավոր, հայերեն, տնտեսական, գրքի 1 էջի չափություն՝ Հայկական Խորհրդային Հանրագիտարանի քարտեղագրական բաժնի:
- 1937 թ., Երևան—Քարտեղ «Ազգբեկովը լճի»: Գունավոր, մեծամասշտաբ, գործ՝ ՀՍԽՀ Ջրային տնտեսության:
- 1937 թ., Երևան—Քարտեղ «Ազգբեկովի շրջան»: Բազմագույն, մասշտաբ՝ 1 : 200.000, տնտեսական նշաններով, Հ. Խ. Հանրագիտարանի, վիմագրատուն և տպարան Հայպետհրատի:
- 1937 թ., Երևան—Քարտեղ «Ալավերդու շրջան»: Բազմագույն, հայերեն, մասշտաբ՝ 1 : 200.000, տնտեսական նշաններով, Հ. Խ. Հանրագիտարանի, վիմագրատուն և տպարան Հայպետհրատի:
- 1937 թ., Երևան—Քարտեղ «Ամասիայի շրջան»: Բազմագույն, հայերեն, մ. 1 : 200.000, տնտեսական նշաններով, Հ. Խ. Հանրագիտարանի, վիմագրատուն և տպարան Հայպետհրատի:
- 1937 թ., Երևան—Քարտեղ «Ախտայի շրջան»: Բազմագույն, հայերեն, մ. 1 : 200.000, տնտեսական նշաններով, Հ. Խ. Հանրագիտարանի, վիմագրատուն և տպարան Հայպետհրատի:
- 1937 թ., Երևան—Խարկով—Քարտեղներ ՍՍՌՄ պատմության: Գունավոր, հայերեն, գպրոցական, նույնանուն գասագրքի հավելված, գրքի 1—2 էջի չափություն՝ հրատարակություն՝ ԳՍՀԿ-ի, մասշտաբ՝ 1 : 30.000.000, պատվեր ՀՍԽՀ Լուսուղկողականի, Յուրաքանչյուրի տիրամը՝ 75.000:
- 1938 թ., Երևան—Լենինգրադ—Քարտեղ Սևանա լճի ավազանի — Карта бассейна оз. Севан (контурная): Ուրվագծային, սուսերեն, մեկ գույնի (սև), մ. 1 : 200.000. կազմեց՝ Վ. Կ. Դավիթով, գործ Սևանի կոմիտեի: Պատվեր ՀՍԽՀ Հողագործության ժողկողականի:

- 1938 թ., Երևան — Քարտեզ Անդրկովկասի: Պատմական, Անդրկովկասի միանալը Ռուսաստանին, բազմագույն, հայերեն, կազմակեց՝ Հ. Հակոբյան: Հրատարակություն՝ Մելքոնյան Փոնդի:
- 1938 թ., Երևան — Քարտեզ, Հայաստանի ՍԽՀ — (Կարտա Արմանակության համար 14 գույնով), մ. 1:1.000.000, ոռուսերեն, շրջանակի չափսը՝ 35 սմ × 30 սմ: Կազմող՝ Հ. Ստեփանյան. ձևավորող՝ Ա. Մինասյան: Հրատարակություն՝ ՀԿՊ Կենտրոնական գրադարձի:
- 1938 թ., Թբիլիսի — Քարտեզ Հայաստանի ՍԽՀ: Գունավոր, վարչական, հայերեն, մ. 1:500.000: Խմբագիր՝ Կոմարովսկի Վ. Գ.: Հրատարակություն՝ ԳՍԴԿ-ի: Պատվեր՝ ՀՍԽՀ Կենտրոնական գրադարձի:
- 1938 թ., Թբիլիսի — Քարտեզ Հայաստանի ՍԽՀ — (Կարտա Արմանակության համար 1:500.000: Խմբագիր՝ Կոմարովսկի Վ. Գ.: Հրատարակություն՝ ԳՍԴԿ-ի: Պատվեր՝ ՀՍԽՀ Կենտրոնական գրադարձի:
- 1938 թ., Թբիլիսի — Քարտեզ Հայաստանի ՍԽՀ: Պալըսական, ֆիզիկական, հայերեն, մ. 1:300.000, 2 թերթից: Խմբագիր՝ Ս. Ցիսլակյան, գծագրող՝ Մուրագովա Ա. Ն.: Պատվեր՝ Հայպետհրատի, տիրաժը 10.000, գինը 7 ռ:
- 1938 թ., Երևան — Մոսկվա — Անլաս աշխարհագրական, գունավոր 15 քարտեզներով, հայերեն, դպրոցական: Խմբագիր՝ Հ. Ստեփանյան: Պատվեր՝ ՀՍԽՀ Լուսավորության ժողովը գական կոմիտարիատի, հրատարակություն՝ Մոսկվայի քարտեզագրական գործարանի:
- 1938 թ., Երևան — Քարտեզ՝ բարձրաքանդակ՝ Հայաստանի ՀՍԽՀ: Մասշաբը հորիզոնական՝ 1:200.000, ուղղաձիգը՝ 1:6, գունավոր, պատվանդանի վրա: Կազմեց՝ Ա. Շահնազարյան, հանձնարարություն՝ Տեխնիկա-տնտեսագիտական թանգարանի:
- 1938 թ., Երևան — Քարտեզ Հայաստանի ՍԽՀ — Կարտա Արմանակության համար 1:1.000.000: Հրատարակություն՝ ՀՍԽՀ Պետպլանի: Հիմնարկների համար:
- 1938 թ., Երևան — Քարտեզ Հայաստանի ՍԽՀ: Աւրվագծային, երկու գույնի, մ. 1:1.000.000, ոռուսերեն, գիտական աշխատանքների համար: Վիմագրատուն՝ Հայպետհրատի: Հրատարակություն՝ Հայկական Աշխարհագրան ընկերության:
- 1938 թ., Թբիլիսի — Քարտեզ՝ բարձրաքանդակ՝ Հայաստանի ՍԽՀ:

Գունավոր, հայերեն, պապեղմաշեից, մասշտարք հորիզոն՝ նական՝ 1 : 500.000, ուղղաձիգը՝ 1 : 7, կազմեց՝ Վ. Տուգուլյան, իջուրոյի: Պատվեր ՀԽՍՀ Լուսժողկոմատի:

1938 թ., Թբիլիսի — Քարտեղ-բարձրաքանդակ՝ Հայաստանի ԽՍՀ — (Рельефная карта Армянской ССР): Գունավոր, ուղարկեն, պապեղմաշեից, մասշտարք հորիզոնական՝ 1 : 500.000, ուղղաձիգը՝ 1 : 7, կազմեց՝ Վ. Տուգուլյան, իջուրոյի: Պատվեր ՀԽՍՀ Լուսժողկոմատի:

1938 թ., Երևան—Լենինգրադ՝ Քարտեղ Եվրոպայի: Մեծադիր, պատի, գպրոցական, ֆիզիկական, բազմագույն, հայերեն, մ. 1 : 3.500.000, կտավի վրա: Պատվեր ՀԽՍՀ Լուսժողկոմատի:

1938 թ., Երևան—Լենինգրադ՝ Քարտեղ Աֆրիկայի: Մեծադիր, պատի, գպրոցական, ֆիզիկական, բազմագույն, հայերեն, կտավի վրա: Պատվեր ՀԽՍՀ Լուսժողկոմատի:

1938 թ., Երևան—Լենինգրադ՝ Քարտեղ Ավստրալիայի: Դպրոցական, ֆիզիկական, հայերեն, գունավոր, մեծադիր, կտավի վրա: Պատվեր ՀԽՍՀ Լուսժողկոմատի:

1938 թ., Երևան — Իսպանիայի քարտեզը: Մանկական, գունավոր, հայերեն, փոքրադիր (1 էջի չափսի): Հրատարակություն՝ «Հոկտեմբերիկա» ամսագրի:

1938 թ., Երևան — Աշխարհի քարտեզը: Մանկական, գունավոր հայերեն, 2 էջի չափսի: Հրատարակություն՝ «Հոկտեմբերիկա» ամսագրի:

1939 թ., Մուկվա — Քարտեղ-բարձրաքանդակ, Հայաստանի ԽՍՀ: Մասշտարք՝ 1 : 200.000, տնտեսական: Պատրաստվել է Համամիութենական 1 գյուղատեսական ցուցահանդեսի հայկան կոմիտեի կողմից:

1939 թ., Երևան — Միջին դարի քարտեզների ժողովածու: Պատմական, երկգույն, հայերեն, 1 գիրք, զանազան մասշտարի: Գծագրող՝ Յ. Նահապետյան, տպագրություն Հայպետհրատի:

1939 թ., Երևան—Լենինգրադ՝ Գլորուս: Ֆիզիկական, գպրոցական, հայերեն, բազմագույն, 25 սմ տրամագծով: Խմբագրություն՝ ՀԽՍՀ Լուսժողկոմատի Աշխարհագրական հանձնաժողովի, նախորդ Գլորուսի Յ-րդ հրատարակություն, տիրաժը 3000, գինը 9 ռ.:

1939 թ., Երևան — Քարտեղ Հայաստանի ԽՍՀ: Հայերեն, երեք գույնի. մ. 1 : 500.000, ուրվագծային: Գիտական աշխատանքների համար: Կազմեց՝ Հ. Մահմադյանը, գծագրեց՝ Ա. Շահ-

մուրադյանը, վիմագրող՝ Ա. Միթթարյան։ Տպագրություն  
Հայպետհատի, տիրաժը՝ 2000, գինը 1 ռ.։

1939 թ., — Քարտեզ Սևանա լճի — Կարտա օզ. Սևան. Ֆիդի-  
կական (խորությունների), ոռուսերեն, գունավոր, մասըշ-  
տարը՝ 1 : 100.000։ Կազմեց՝ Ն. Կիրեկը ՀԽՍՀ Սևանի կո-  
միտեի հանձնարարությամբ։

1939 թ., Երևան — Քարտեզ՝ բարձրաքանդակ, Հայաստանի ԽԽՀ։  
Գունավոր, մասշտարը հորիզոնական՝ 1 : 200.000, ուղղա-  
ձիգը՝ 1 : 6։ Գործ Պետական պատմական թանգարանի։ Աշ-  
խատանք՝ Գ. Արեգայանի, ղեկավար՝ Կ. Դաֆադարյան։  
Պատրաստվել է Արմենէներգոյի պատվերով։

1939 թ., Երևան — Լենինգրադ — Քարտեզ Եվրոպայի։ Թպրոցական,  
քաղաքական, հայերեն, մեծագիր, պատի, մ. 1 : 3.500.000,  
բաղկացած է չորս մեծ թերթերից։ Խմբագիրներ՝ Ս. Բեր-  
բերյան և Բ. Զարչյան։ պատվեր ՀԽՍՀ Լուսժողկոմատի, տի-  
րաժը՝ 3000։

1939 թ., Երևան — Լենինգրադ — Քարտեզ Հյուսիսային Ամերիկա-  
յի։ Թպրոցական, Փիզիկական, հայերեն, գծագրված է չորս  
թերթի վրա, չափուր՝ 150 սմ × 160 սմ։ Խմբագիր՝ Ս. Ճու-  
զուրյան, պատվեր ՀԽՍՀ Լուսժողկոմատի, տիրաժը՝ 3000,  
կտավի վրա, գինը՝ 15. ռ.։

1939 թ., Թբիլիսի — Քարտեզ Հայաստանի ԽԽՀ — Կարտա Արման-  
սկոյ ՀՀՀ. Գունավոր, Փիզիկական, ոռուսերեն, մ. 1 : 500.000,  
գպրոցների համար։ Խմբագիր՝ Մ. Զ. Պալով, գիտ. խոր-  
հըրդատու՝ Ա. Ֆ. Լայստեր։ Հրատարակություն՝ ԳΥГԿ-ի,  
պատվեր ՀԽՍՀ Լուսժողկոմատի։

1940 թ., Թբիլիսի — Քարտեզ Հայաստանի ԽԽՀ, Գունավոր, Փի-  
զիկական, հայերեն, մ. 1 : 500.000. գպրոցական։ Խմբագիր՝  
Մ. Զ. Պալով, գիտական խորհրդատու՝ Ա. Ֆ. Լայստեր։ Հրա-  
տարակություն՝ ԳҮГԿ-ի, պատվեր ՀԽՍՀ Լուսժողկոմատի։

1940 թ., Երևան — Մուկվա — Քարտեզ Հայաստանի ԽԽՀ բուսական-  
ծածկույթի (Կարտա растительного покрова Армянской  
ССР). Բազմագույն, ոռուսերեն, մ. 1 : 500.000։ ԲՈՒՀ-երի հա-  
մար. կազմեց՝ Հար. Կ. Մաղաքյան։

1940 թ., Երևան — Քարտեզ Անդրկովկասի։ Լեռնագրական, մեկ  
գույնի (սև), հայերեն, ուրվագծային, ուսումնական, մասըշ-  
տարը՝ 1 : 1.500.000. Կազմեց՝ Ս. Լիսիցյան, հրատարակու-  
թյուն Երևանի պետական համալսարանի։

1940 թ., Թբիլիսի — Քարտեզ Լեռնային Դարարադի ԱՄ. Վար-

չական, գունավոր, հայերեն, մ. 1 : 250.000: Պատ. խմբագիր՝ Ս. Տեր-Գրիգորյան, հրատարակություն՝ ՀՅԴԿ-ի, տիրաժը 8000, գինը 1 ռ.:

1940 թ., Թբիլիսի — Քարտեզ Լեռնային Ղարաբաղի Ա. Մ. — Карта А. О. Нагорного Карабаха. Վարչական, գունավոր, աղբյուջաներեն, մ. 1 : 250.000. Պատ. խմբագիր՝ Ս. Տեր-Գրիգորյան, հրատարակություն՝ ՀՅԴԿ-ի: Լեռնային Ղարաբաղի գպրոցների համար, տիրաժը՝ 8000, գինը 1. ռ.:

1940 թ., Երևան—Լենինգրադ — Քարտեզ Կիսագնդերի: Ֆիզիկական, գպրոցական, հայերեն, բազմագույն, մ. 1 : 30.000.000: Պատվեր՝ Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրության:

1940 թ., Երևան—Լենինգրադ — Քարտեզ Կիսագնդերի: Քաղաքական, գպրոցական, հայերեն, բազմագույն, մ. 1 : 30.000.000: Պատվեր՝ Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրության:

1941 թ., Երևան — Քարտեզ Հայաստանի — Карта Армении (историческая), времен Георга Марзпетуни. Պատմական, Գ. Մարզպետունու ժամանակվա վերաբերյալ. ուռւերեն, երկու գույնի, մ. 1 : 2.000.000: Կազմողներ՝ Ա. Շահնազարյան և Հ. Ստեփանյան: Հրատարակություն՝ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի (Արմֆանի): Տիրաժը 5.000, գինը 50 կոպեկ: Կցված է համանուն գրքին և առանձին:

1942 թ., Երևան — Քարտեզ Հայաստանի ՍՍՌ — Карта Армянской ССР. Աւրվագծային, մեկ գույն (կապույտ), ուռւերեն, մ. 1 : 1.000.000, գիտական աշխատանքների համար: Կազմեց՝ Հ. Ստեփանյանը, գծագրեց՝ Ա. Մուսակյանը: Հրատարակություն՝ ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Տնտեսագիտության սեկտորի, տիրաժը 2.500:

1942 թ., Երևան — Քարտեզ Հայաստանի ՍՍՌ — Карта Армянской ССР (метеорологических станций). Օգերեսութարանական կայանների ցանց, ուռւերեն, մ. 1 : 750.000., գունավոր, կազմեց՝ Ա. Ասկանյանը: Հրատարակություն՝ Հայկական ՍՍՌ Օգերեսութարանական վարչության:

1943 թ., Երևան — Քարտեզներ, Հայ ժողովրդի պատմության (մասն Ա.), հայերեն, պատմական, 7 հատ մեկ գույնի (սկ), գրքի 2 էջի մեծության: Կազմեց՝ Ա. Երեմյան: Հրատարակություն՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի:

- 1947 р., Երևան — Մուկվա — Քարտեզ Հայաստանի ՍՍՌ — Карта Армянской ССР (контурая). Ուրվագծային, մեկ գույնի (սև), մ. 1 : 800.000, սուսերեն, դիտական աշխատանքների համար: Խմբագիր՝ Ա. Շահմուրադյան, գծագրող՝ Հ. Գործակալյան: Հրատարակություն՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Տնտեսագիտության սեկտորի:
- 1948 թ., Երևան — Քարտեզներ՝ Հայաստանի ՍՍՌ — Карты Армянской ССР. 9 քարտեզ, մեկ գույնի (գարշնագույն կամ կապույտ), սուսերեն, յուրաքանչյուրի մ. 1 : 1.000.000, մասնագիտական, ՀՍՍՌ Գիտիկական աշխարհագրություն ձեռնարկի:
- Լեռնակաղմություն — կազմել է Ա. Շահմուրադյանը,  
Գեղողդիտականը և տեկտոնականը՝ Կ. Պաֆենդուցը,  
Գեոմորֆոլոգիականը՝ Ա. Ա. Գարբրիելյանը, Ա. Լ. Թափառ-ջանը և Ա. Գ. Շահմուրադյանը,  
Տեղումներինը՝ կազմված է ըստ Ռ. Քրիստոստուրյանի,  
Հողագիտականը՝ Ա. Զիթչյանը,  
Բուսաբանականը՝ Ա. Թախտաջյանը,  
Ֆիզիկո-աշխարհագրական շրջաններինը՝ Հ. Ստեփանյանը,  
Կլիմայական շրջաններինը՝ (մ. 1 : 1.500.000) Հ. Գյոդակ-յանը:
- Հրատարակություն ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի:
- 1948 թ., Երևան — Միջավայրի քարտեզ «Երկրագնդի բնական գոտիները», (կիսագնդերով): Հայերեն, բազմագույն, մ. 1 : 22.000.000, 2 թերթից, գպրոցական: Պատասխանատու խմբագիր՝ Տրետյակովա: Պատվեր Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրության, գինը 6 ռ.:
- 1948 թ., Երևան — Մինսկ — Քարտեզ Աշխարհի (կիսագնդերով): Հայերեն, բազմագույն, մ. 1 : 22.000.000, 2 թերթից (93 սմ × 113 սմ): Պատասխանատու խմբագիր՝ Սկուրիգինա Պ. Վ.: Պատվեր Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրության, տիրածը 5000, գինը 7 ռ.:
- 1948 թ., Երևան — Թբիլիսի — Քարտեզ Կովկասի — Карта Кавказа. Ուսումնական, Գիտիկական, սուսերեն, բազմագույն, մ. 1 : 1.000.000, գիտական խորհրդատու՝ Ա. Ն. Զավախիշվիլի, պատասխանատու խմբագիր՝ Մ. Զ. Պավլով: ՀՍՍՌ Լուսավորության մինիստրության պատվերով, գինը 8 ռ.:
- 1948 թ., Երևան — Թբիլիսի — Ատլաս: Աշխարհագրական, գպրոցական, 14 էջից, հայերեն, բազմագույն քարտեզներով: Պա-

- տասխանատու խմբագիր՝ Մ. Ե. Սենդերովա: Պատվեր ՀՍՍՌ  
Լուսավորության մինիստրության:
- 1949 թ., Երևան — Թբիլիսի — Քարտեզ Կովկասի: Ուսումնական,  
քաղաքական, հայերեն, բազմագույն, մ. 1 : 1.000.000: Գի-  
տական խորհրդատու՝ Ա. Ն. Զավախիշվիլի, պատասխանա-  
տու խմբագիր՝ Մ. Զ. Պավլով: Լույս է տեսել ՀՍՍՌ Լու-  
սավորության մինիստրության պատվերով, գինը 8 ռ.:
- 1949 թ., Երևան — Թբիլիսի — Քարտեզ Հայկական ՍՍՌ: Ուսում-  
նական, ֆիզիկական, հայերեն, բազմագույն, մ. 1 : 600.000:  
Գիտական խորհրդատու՝ Հ. Ստեփանյան, խմբագիր Մ. Ն.  
Կոչեշկովա: Հրատարակություն՝ ԳҮГԿ-ի: Պատվեր Հայ-  
կական ՍՍՌ Լուսավորության մինիստրության, տիրածը  
10.000, գինը 5 ռ.:
- 1949 թ., Թբիլիսի — Քարտեզ Հայկական ՍՍՌ — Կարտա Ար-  
մանской ССР (административная). Վարչական, գունավոր,  
ոռուերեն, մ. 1 : 300.000: Պատվեր Հայկական ՍՍՌ Գե-  
րագույն Սպեცիալիտետի:
- 1949 թ., Երևան — Թբիլիսի — Քարտեզ Հայկական ՍՍՌ — Կարտա Արմանской ССР (физ., учебн.). Ուսումնական, ֆիզիկական,  
քաղաքագույն, ոռուերեն, մասշտարք՝ 1 : 600.000: Գիտական  
խորհրդատու՝ Հ. Ստեփանյան, խմբագիր՝ Մ. Ն. Կոչեշկովա:  
Հրատարակություն՝ ԳҮГԿ-ի: Պատվեր Հայկական ՍՍՌ  
Լուս. մինիստրության, տիրածը 15 000, գինը 5 ռ.:
- 1950 թ., Երևան — Քարտեզ Կորեայի: Մեկ գույնի (սև), հայերեն,  
մ. 1 : 5.000.000: Ադիտատորի բլոկնոտի համար: Հրատարա-  
կություն ՀԿՊ ԿԿ ադիտացիայի և պրոպագանդայի բաժնի,  
տիրածը 9000:
- 1950 թ., Երևան — Քարտեզ Կորեայի: Քաղաքական, հայերեն, մեկ  
գույնի, մ. 1 : 2.500.000: Խմբագիր՝ Հ. Ստեփանյան, քար-  
տեզագիրներ՝ Կ. Շահմուլադյան, Հ. Գործակալյան: Հրա-  
տարակություն ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Կուլտուր-  
լուսավորական հիմնարկների կոմիտեի, տիրածը 3000:
- 1951 թ., Երևան — Թբիլիսի — Քարտեզ Հայկական ՍՍՌ: Ֆիզի-  
կական; քաղաքագույն, հայերեն, մ. 1 : 600.000: Գիտական  
խորհրդատու՝ Հ. Ստեփանյան, խմբագիր՝ Մ. Ն. Կոչեշկովա:  
Հրատարակություն՝ ՍՍՌՄ Մինիստրների Սովետին կից Գ.  
և Ք. Գլխ. վարչության: Հավանությամբ Հայկական ՍՍՌ  
Գերագույն Սովետի, ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի

և Լուսավորության մինիստրության, տիրաժը 5000, գինը 1 ռ. 35 կ.:

1951 թ., Երևան—Մոսկվա—Թբիլիսի—Ատլաս «Հայ ժողովրդի պատմություն» գրքի: Առաջին մաս, 7 քարտեզ, բազմագույն, տարրեր մասշտաբների: Մշակված է Երևանում, կազմված է Մոսկվայում ԳՍՀԿ-ի բաժնում. տպագրված Թբիլիսիում: Հրատարակված առանձին: Հեղինակ՝ Ս. Տ. Երեմյան, տիրաժը 20.000, գինը 3 ռ.:

1952 թ., Երևան—Москва—Тбилиси—Атлас к книге „История армянского народа“, ч. I, 7 карт, многокрасочных, разных масштабов. Разработан в Ереване, составлен в ГУГКе в Москве, отпечатан в Тбилиси на картфабрике, издан отдельно. Автор С. Т. Еремян. Тираж 10.000 экз., цена 3 руб.

1952 թ., Երևան—Թբիլիսի—Քարտեզ Հայկական ՍՍՌ: Ֆիզիկական, բազմագույն, հայերեն, մ. 1 : 600.000: Խմբագիր՝ Մ. Ն. Կոչեկովա: Հրատարակություն Գ. և Բ. Գլխավոր վարչության: 1951 թ. քարտեզի կրկնությունն է, տիրաժը 10.000, գինը 1 ռ. 35 կ.:

1955 թ. Երևան—Թբիլիսի—Քարտեզ Հայկական ՍՍՌ: Ֆիզիկական, բազմագույն, հայերեն, մ. 1 : 600.000: Հրատարակություն Գ. և Բ. գլխավոր վարչության, տիրաժը 5.000. գինը 1 ռ. 35 կ.:

1955 թ., Երևան—Тбилиси—Карта Армянской ССР, физическая, многокрасочная, м. 1 : 600.000. Изд. ГУГК, тираж 5.000, цена 1 р. 35 к.

III Ա Ա Ս

Հ Ա Յ

ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԲՆՈՐՈՇ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Անհրաժեշտ էր կազմել հրատարակված հայ քարտեզների մեջ հայտնի ցուցակը՝ 260 տարի տեսզությամբ։ Անհրաժեշտ էր նաև զրադաշտել հայ քարտեզագրական հրատարակությունների տեսակների, բնույթի, ձեռավորման և այլ հարցերով սակայն ոչ պակաս կարեղը էր գիտական-աշխարհագրական տեսանկյունով զննություն կատարել նրանց բովանդակության նկատմամբ։

Քարտեզագրական հրատարակությունների գիտական վերլուծությունը իրենից ներկայացնելու է քարտեզների նկարագրությունը՝ զբական բնութագրումը և թերի կողմերի գրանուրումը։ Այդ զննությունը խիստ անհրաժեշտ է հենց բուն քարտեզագրության զարգացման համար, ապա առավել գիտական ճշմարտություն նպատակով, հանուն քարտեզագրվող երկրի աշխարհագրական ճշմարիտ արտացոլման։ Կարող ենք որոշակի ասել, որքան քարտեզագրական հրատարակություններ են եղել, այնքան էլ բազմապիսի են նրանց զննության արդյունքները։

Սովետական գեոգրաֆիայի և քարտեզագրության 20-ամյակին նվիրված աշխատության մեջ (Մոսկվա - Լենինգրադ, 1939 թ.) պարզաբանված է նման խնդիրների կարևորությունը։

Քննական վերլուծությունը հարկավոր է ոչ միայն քարտեզագրական հրատարակությունների հատկությունները բացահայտելու, այլև այն գիտականորեն հասկանալի դարձնելու համար։

Մենք, այդպիսով, ծանրանալու ենք քարտեզագրական հրատարակություններում տեղ գտած նաև թերությունների և վրիպակների վրա։

Օրաթերթերի սխալներն ու վրիպակները, իհարկե, անհարգելի են, թեպետև թերթը ունի մի օրյա կյանք։

Գրքերի սխալներն ու վրիպակներն աններելի են, թեպետ և հնարավորություն կա թերթերում և գրքերում կատարված սխալներն ու վրիպակները նրանց էջերի վերջում նշել:

Քարտեզագրական հրատարակություններում հնարավորություն չկա, տպագրվելուց և լույս ընծայելուց հետո, կատարված սխալը կամ վրիպակը քարտեզում նշելու: Սխալն ուղղել հնարավոր է միայն նոր, հաջորդ հրատարակության ժամանակ:

Բոլոր հայ քարտեզագրական հրատարակությունների գիտական զննությունը կկազմեր ահագին հատոր. թեպետ և այդ շատ հետաքրքիր է, բայց անհրաժեշտ չէ տվյալ աշխատության մեջ:

Մենք հարկ ենք համարել կանգ առնելու հայ քարտեզագրական հրատարակությունների կարևոր նմուշների, հազվագյուտ օրինակների, այսպես կոչված ունիկալ հրատարակությունների վրա: Այդ առավել վերաբերում է մինչսովետական ժամանակաշրջանին, հայ քարտեզագրական հրատարակությունների առաջին տեսակներին: Այսպիսով, մենք հատկապես կանգ կառնենք առաջին հայերեն քարտեզի (1695), առաջին հայերեն աշխարհագրական ատլասի (1849), առաջին հայերեն գլորուսի (1850), ինչպես նաև մի քանի այլ հրատարակությունների վրա: Նմանապես անաչառ կերպով զննել ենք նաև սովետական ժամանակաշրջանի սովետահայ քարտեզագրական առանձնակի հրատարակություններ՝ առաջին սովետահայ քարտեզը (1923), առաջին սովետահայ աշխարհագրական ատլասը (1928), Սովետական Հայաստանի առաջին մեծադիր քարտեզը (1932), առաջին սովետահայ գլորուսը (1934) և այլ տեսակի հրատարակություններ՝ Սովետական Հայաստանի բարձրագանդակ քարտեզը, գաղրոցական աշխարհագրական տետրեզը և այլն:

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ. ՀԱՅ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԻ ՔԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՎԵՐԱՌՈՒԹՅՈՒՆ

1. 1695 ԹՎԱԿԱՆԻ ԱՄՍՏԵՐԴԱԿՄՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԵՐԵՆ ՏՊԱԳԻՐ ՔԱՐՏԵԶԻ «ՀԱՄԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ»  
ՀԱՄԱԲՈՍ ՁՆՆՈՒԹՅՈՒՆ

Առաջին տպագիր հայերեն քարտեզը լույս է տեսել XVII դարի վերջում՝ 1695 թվականին Հոլանդիայի (Նիդերլանդների) գլխավոր քաղաք, երկրի կուլտուրական և արդյունաբերական կենտրոն Ամստերդամում։ Քարտեզի վերնագիրն է՝ «Համատարած աշխարհացոյց», այսինքն, «Աշխարհի քարտեզ» կիսագնդերի ձևով (այլ ոչ բացված պրոյեկցիայով)։ Այդ քարտեզի հրատարակության նախաձեռնողները, հայերեն տեքստը մշակողները, ամբողջ գործի իրականացնողները եղել են Հայաստանի Գողրան պատմական գավառի Վանանդ ավանի բնակիչներ՝ Մատքես Հովհաննիսիսները, նրա հորաքրոջ որդի Թովմաս և պիսկովոսը և վերջինիս եղբորորդիներ՝ Պուկաս և Միքայել Նուրիշանյանները\*, որոնց կարճ անվանում են վանանդեցիներ։ Քարտեզի տեխնիկական հիմքը, պղնձի վրա փորագրողները եղել են հոլլանդացի Ազրիանուս և Պետեր Շխոներիկ եղբայրները, որոնց ազգանունը զանազան հեղինակներ զանազան կերպ են գրել (Մկորենկ, Մխոներեկ, Շխոներեկ, Բոկորենկ)։

Այդ ավյաները համարվում են ստույգ և անվիճելի։ Նշված քարտեզի մասին որոշակի և դրականորեն արտահայտվել են ոչ միայն Գ. Լեոնյանը\*\*, Լեօն\*\*\*, այլև Միհթարյան միարանները «Հանդէս Ամսորեայ» ամսագրի 1927 թ. (հուլիս էջ 392—393),

\* Գործի մասնագետը եղել է Պուկաս Նուրիշանյանը։

\*\* Գ. Ջ. Լեոնյան, Հայ գիրքը և տպագրության արգեստը, Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, 1946 թ., էջ 117։

\*\*\* Լ. Ե. օ., Հայ տպագրության պատմությունը, Թիֆլիս, 1901 թ.։

Նախ նույն ամսագրի 1923 թ. սեպտեմբեր — հոկտեմբեր ամիսների միացյալ համարում, (էջ 454):

Նախ ծանոթանանք ըրուն քարտեզի հետ, տեսնենք, թե ինչ է նա իրենից ներկայացնում: «Համատարած աշխարհացոյց»-ի չափսը մեծ է՝  $120 \text{ սմ} \times 150 \text{ սմ}$ , նույնիսկ այժմյան մեր օրերի և պահանջների համեմատ: Քարտեզը փակցված է կտավի վրա: Կիսագնդերի հյուսիսային մասերը դարձված են վերև: Երկու կիսագնդերի շրջանակների միջև վերեռում գծագրված է Արեգակնային համակարգությունը՝ Պաղոմեոսի սիստեմով\*: Չորս րաց անկյունում նկարված են տարվա չորս եղանակներին համապատասխան կրոնական իմաստի բնական տեսարաններ: Երջանների եզրերը շախմատային ձևով ստորաբաժանված են սև ու սպիտակ աստիճանների, հասարակածը հատվում է ավելի խոշոր շախմատանման գծով՝ որի մոտ գրված է կենդանակերպարն (զոդիակ) էկիպատիկայով՝ արեգակի տեսանելի ուղիով: Հյուսիսային կիսագնդում նա հասնում է մինչև  $23,5^{\circ}$ , այսինքն՝ Խեցգետնի արևադարձին, իսկ հարավային կիսագնդում նույնպես մինչև  $23,5^{\circ}$ -ին, այսինքն Այծեղջեր արևադարձին: Երկու կիսագնդուն էլ ունեն աշխարհագրական աստիճանացանց (զուգահեռականներ և միջօրեականներ), որը վկայում է այդ ժամանակավա քարտեզագրության հառաջադիմության մասին: Սակայն միաժամանակ մի քանի տեղ միջօրեականների և զուգահեռականների վրա (հյուսիսային և հարավային մասերում) գծված են կողմնացույցեր, առանց տարածվող շառավիղների: Այդ հանգամանքը վկայում է, որ հայերեն տուաջին տպագիր քարտեզը գծված է աշխարհագրության և առավել քարտեզագրության զարգացման անցումնային ժամանակաշրջանում, երբ մի կողմից վերանում են քարտեզները զարդարող (ավելի ճիշտ՝ բարգացնող) կողմնացույցերը (պորտուլան քարտեզներ) և մյուս կողմից հաղթանակում է քարտեզի աշխարհագրական աստիճանացանցը (զուգահեռականներն ու միջօրեականները): Գլխավոր ( $0^{\circ}$ ) միջօրեականը նշված է ըստ Ֆեոոյի, Եվրոպայից և Աֆրիկայից արևմուտք՝ իսկ կիսագնդերի բաժանումը  $10^{\circ}$  արևմտյան միջօրեականով:

Մյուս, էլ ավելի հետաքրքիր երեսությն այն է, թե բնչպես է գծագրված աշխարհն այդ քարտեզում, ինչ գծագրությունները ունեն աշխարհամասերը և նրանց ափերը, թերա-

\* Կա բացատրականում նաև կոպենիկոսի սիստեմով:

կղղիները, կղղիները, թե ինչպիսի՞ տեսք ունեն օվկիանոսները, ծովերը և այլն։ Հայտնի բան է, որ վանանդեցի հայերը իրենք չէին կարող հետազոտել աշխարհի կոնտուրները. Նրանք այդ վեցը բել են Եվրոպայում հոչակ ստացած Ամստերդամի քարտեզագրական այն ժամանակվա գործարաններին և այն ժամանակվա աշխարհագետներին ու քարտեզագիրներին հայտնի աղբյուրներից, հիմքերից, լատիներեն և այլ լեզուներով տպագրվող նման քարտեզների ընդունված օրինակներից։ Այդ մասին ավելի մանրամասն մենք կանգ կառնենք ստորև։

Աշխարհամասերի կոնտուրները, այն չափով, որչափով հայտնի էին այն ժամանակ, ընդհանուր առմամբ ճիշտ են գծագրված, առավել Արևմտյան Եվրոպայի և Միջերկրական ծովի ափերը։

Ի՞նչ է պակասում քարտեզի գծվածքում և հայտնի չէր, այն ժամանակ։ Քարտեզում չեն գծագրված Ավստրալիայի արևմելյան ափերը, նոր Զելանդիայի մեծ մասը, Տոռեսի նեղուցը Հյուսիսային Ամերիկայում՝ Ալյասկան ամբողջովին, Ամերիկայի հյուսիսային անցքը ծովով, Ամերիկայի հյուսիսային արշիպելագոսը, Գրենլանդիայի հյուսիսը։

Անհայտ էին և բացակայում են ոչ միայն այն ժամանակվա հեռավոր և չհայտնաբերված երկրները, այլև այն, որ հայտնաբերված էին, բայց որոշակի հայտնի չեին դեռևս Հոլանդիայում. օրինակ, սխալ է կասպից ծովի ափերի գծվածքը. գծված է միայն այդ ծովի հարավային մասը՝ կլորածե, չեն գծված միջին և հյուսիսային մասերը. Կասպից ծովը հայտնի էր, սակայն նրա գիտական գծագրությունը կատարվել է 1726 թվականին։ Անոռոշության պատճառով նոր Երկիրը գծված է որպես մեկ մեծ և լայն կղզի։ Նոր Երկիրը ուսուներին հայտնի է գարձել XV դարից. սակայն այն ուսումնասիրել են XVII դարի կեսներին ուսուներ Ս. Լուկինը և առավել Ֆ. Ռոզմիսլովը։

Հնդկաստանը գծագրված է փոքր և նեղ թերակղզի, իսկ Հարավային Ամերիկան և Աֆրիկան շատ լայն և ձգված են արևմուտքից արևելք անհամաշափ։

Շատ հետաքրքիր է նաև «Համատարած աշխարհացոյց»-ի աշխարհագրական անունների հայերեն տառադարձությունը (տրանսկրիպցիան)։

Հետաքրքրական է նշել ցամաքի մասերի, Երկրների անունների տառադարձությունը։

Կանաչ երկիր (Գրենլանդիան է), մինչդեռ կից գծված հյուսիսային քեսով քարտեզում գրված է Գրունլանդ:

Նոր Հոլանդիա (Ավստրալիան է, որը այն ժամանակ այդպես էր անվանվում):

Եթօպիա (նշված է Աֆրիկայի հասարակածի երկու կողմում):

Թաթարստան (նշված է երկու տեղ, մեկը՝ Յակուտիան, մյուսը՝ Արևմտյան Սիբիրում):

Նոր Բրիտթանիա (Լարրագորի արևմտյան մասը, ՀԱ. Ամերիկայում):

Նոր Ֆրանչիա (Լարրագորի հարավարևելյան մասը):

Նոր Բիսկայեա (այժմյան Մեքսիկան):

Նոր Հիսպանիա (Մեքսիկայի հարավային մասը և Կենտրոնական Ամերիկան):

Այլեայլ հարաւային և հնդկային կղզիներ (Մադագասկարից մինչև Մալայա):

Անձանթք հարաւայինք (Անտարկտիկայի տեղում):

Իսկ կից տրված հարավային կիսագնդի քարտեզում — բաց տարածություն, անորոշ, ոչ մի ցամաք, ոչ մի անուն:

Օվկիանոս բառը գրված է երկու կերպ՝ օկէանոս և ովկիանոս:

Եթօպացւոց Ովկիանոս (Աֆրիկայից արևմուտք, Գիլինեայի ծոցի տեղում):

Հարաւային Օկէանոս:

Արևմտեան Օկէանոս (Ֆեռո կղզուց արևմուտք):

Արևմտեան Ովկիանոս (Հավայան կղզիների շուրջը):

Հիւսիսային Օկէանոս (ՀԱ. Սառուցյալ օվկիանոսը՝ միայն արևելյան կիսագնդում):

Արևելեան Օկէանոս (Ֆիլիպիններից արևելք):

Օկէանոս Չինաց և այլն:

Ուշագրության արժանի են ծովային ընդարձակ տարածությունների անունները:

Հիւսիս ծով (Ատլանտյանի մասը՝ Վեստ Ինդիայի մոտ):

Հարաւ ծով (Խաղաղ օվկիանոսի մասը, Պանամայից արևմուտք):

Խաղաղ ծով (Չիլիից արևմուտք):

Քիւեան ծով (Չիլիի ափին):

Ուսումնակ ըստ ժամանակի աշխարհագրական տվյալների այդպես էին հայտնի այդ օբյեկտները:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԱՐ



Առաջին հայերեն քարտեզը, որը տպագրվել է Սմբակդամում 1695 թ.

Գործ է ածված նաև այսպես՝

Ծով Արարային:

Ծով Բենգալու:

Վերջինեան ծով (Հյուս. Ամերիկայի արևելյան ափերի մոտ, այդպիսին այժմ չի գործածվում):

Ուստաստանում, Կովկասում և մասնավորապես Հայաստանում նմանօրինակ նշանակած կարելի է հիշատակել հետեւյալ մի քանիսը:

Ուստաստան, Մասկովստան:

Նոր ճանապարհ (Նոր Երկիր կղզին):

Ուստաց ծով\* (Բարենցի ծովի տեղում):

Ծով Կասպից:

Մասկով, Յերսուլավ, Վլադիմեր, Սարիսոֆ (Երկիր Խարկով):

Էդիլ (թուրքերեն՝ Վոլգան):

Թանախո — հունարեն է (Պոնը):

Գուրջիստան:

Առղջում նաև էրզուրում:

Գողթան (գրված է վան և Բաքու քաղաքների միջև տարածությունում, Վանա լճի և ստորին Արաքսի միջև, տեղի սղության պատճառով):

Առաջավոր Ասիայում գրված են՝

Անատոլու (Փոքր Ասիայում):

Իրազստան (Պարսկաստանի կենտրոնում) և այլն:

Կիսագնդերի քարտեզի վրա նկարված են մի շարք զանազան առագաստանավեր, որոնք ընթանում են ծովային ճանապարհների զանազան ուղղություններով:

Այդ քարտեզի մեկ օրինակը գտնվում է Երևանի Մյասնիկյանի անվան Հանրային գրադարանում։ Մի այլ օրինակ կաչությունների ակադեմիային կից Հայկական Աշխարհագրական ընկերությունում։ Մեզ հաջողվեց Երկու օրինակ ևս հայտնաբերել Սովետական Վրաստանում, Թբիլիսիում՝ Աշխարհագրական ինստիտուտում (պրոֆ. Ա. Ն. Զավալիշվիլու մոտ)։ Պրանցից մեկը լավ վիճակում էր։

Այնուհետև, Մոսկվայում ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Աշխարհագրության ինստիտուտում հայտնաբերել ենք նման քարտեզների լատիներեն օրինակների ուղղությունը, որոնցից մեկը կազմված է 1648թ. Վեստֆալյան դաշնագրից հե-

\* Այդ մասին գրել ենք սուսերեն լեզով մի փոքր հողված։

տո, մյոււսը՝ 1660թ.: Այդ վերջին ռեպրոդուկցիայի՝ քարտեզի ցածի մասում կար քարտեզի բանալին — բացատրականը, որի հայերէն բնագիրը կա Հայկական ՍՍԾ Մատենադարանում:

1660թվականի Աշխարհի քարտեզի լատինական օրինակում բացատրականը գրված է տասը սյունակում, ունի ՅՆ ստուրաժանում՝ նշված հոսմեական թվերով: Այդ բանալին պարունակում է հետեւյալ բովանդակությունը՝

Տերմինների բացատրություն — հիդրոգրաֆիա, կոսմոգրաֆիա, խորոգրաֆիա, տոպոգրաֆիա, ցամաք, կղզի, թերակղզի, պարանոց, հրվանդան, ծոց, գետ, բևեռ և այլն:

Ապա տրվում է չափերի մասին հասկացողություն, միջօրեական, զուգահեռական (շրջանակ), 12 համատեղություն (զոդիակ), արեալարձներ, կլիմայական 5 գոտիներ, կլիման, աշխարհի չորս կողմերը, հին և նոր աշխարհամասերը, օվկիանոսները, ծովերը, գետերը, լճերը, հին աշխարհը, որը հայտնի էր մինչև 1492թ., վերջապես, աշխարհի համակարգությունները (սիստեմները) ըստ Պտղոմեոսի, Տիխո Բրադայի, Ն. Կոպերնիկոսի. բացատրագիրը ավարտվում է համաստեղություններով:

Մեծ օգնություն էր քարտեզով օգտվողների համար այդ բացատրագիր-բանալին, որը հանդիսանում էր աշխարհագրական գիտության այն ժամանակվա հայտնի կացության համառոտ ամփոփումը՝ մի տեսակ փոքրիկ էնցիլոպեդիա:

Աշխարհի տառաջին հայերէն տպագիր քարտեզը՝ «Համատարած աշխարհացոյցը», չնայած իր տեքստային մասնակի թերություններին, աշխարհագրական անունների տառադարձական անհետկողականության, հանդիսանում է աշխարհագրության համար և քարտեզագրության տեսակետից շատ խոշոր գործ: Ինչ խոսք, որ հայերէն այդ գործը չէր կարող կատարվել առանց հայերի, տվյալ գեպքում՝ առանց վանանդեցիների (գլխավորապես Դուկաս Նուբիջանյանի), որոնց շնորհիվ հայացված էր աշխարհի աշխարհագրական անունների հիմնական մասը:

Քարտեզի գծվածքն ու տեքստը կատարված են նուրբ և մաքուր, լավ թղթի վրա և որակյալ նյութերով. այդ էլ իհարկե, հոլանդական արվեստի շնորհիվ: Կարծես թե քարտեզը նոր է տպագրված: 260 տարի է անցել տպագրության օրից, մինչդեռ քարտեզի տեսքը թարմ է և պարզ:

Դժվար է պատկերացնել, որ առաջին քարտեզը կարելի լիներ լույս ընծայել այդպիսի մեծ ծավալով, այդպիսի բարդ բովանդակությամբ, այդպիսի շքեղ զարդանկարներով:

Հայ տպագիր առաջին քարտեզը՝ «Համատարած աշխարհացոյց»-ը պատիվ է բերում հայ գիտությանը և հայ ժողովրդին, եթե առավել նկատի ունենանք որքան ծանր վիճակում էր գտընվում այն ժամանակվա (XVII դարի վերջում) Հայաստանը: Այդ ժամանակ Հայաստանի զգալի տարածությունը՝ Արևելյան Հայաստանը կազմում էր բոնակալ Պարսկաստանի մասը և իր վրա կրում էր նրա բացասական հատկությունների բոլոր հետեւվանքները: Պորտուգալացիների հայտնաբերած ծովային նոր ուղիները (Աֆրիկայի շուրջը) նպաստել էին Հարավային Ասիայի երկրների անմիջորեն կապվելուն Արևմտյան Եվրոպայի հետ: Տնտեսական զարգացման և առևտրական հաջողությունների զարկ էին ստացել Եվրոպական երկրները, մինչդեռ Պարսկաստանի միջով տրանզիտային կարգով կատարվող առևտուրը կրել էր մեծ հարված: Քաղաքների կյանքը և պարսկական առևտուրը ապրում էին անկման օրեր: Շահ-Մբրասի բռնի գաղթից հետո, հին Զուղայի և Գողթանի հայ վաճառականները աստիճանաբար վերականգնում են իրենց առևտրական կապերը Եվրոպայի հետ: Կարելի է ընդունել, որ Զաքարիա Ագուլեցու հոչակափոր օրագրից հայտնի գարձած առևտրական ուղիներով է, որ Գողթանից՝ Միջին Արաքսի հովտով դեպի Երևան, Կաղզվան, ապա Կարին (Երզրում), Էնկյուրի (Անկարա), Իզմիրի նավահանգիստ, այդտեղից ծովային ճանապարհով դեպի Խտալիա, Վենետիկ, այնուհետև կրկին ցամաքով, բարձրագիր Ալպերի՝ Բրենների լեռնանցքով դեպի Տիրոլ, ապա Հոկնոսի հովտով Հոլանդիա՝ Ամստերդամ են հասնում «Համատարած աշխարհացոյցի» նախաձեռնող, կազմող, խմբագրող և տպագրող վահանգեցի հայերը:

Իսկ Բնչ էր ներկայացնում այդ ժամանակ Եվրոպան, մասնավորապես Հոլանդիան, ուր հատուկ նպատակով գնացել էին վանանդեցիները:

Պետրոս I օրոք առաջադիմող Ռուսաստանը, տարածվելով դեպի հարավ, ազատագրել էր Ազով քաղաքը: Լեհաստանը՝ թագավոր Յան Սոլեսկու գլխավորությամբ, օգնության հասնելով Ավստրիային, պաշարված Վիեննայի շրջակայքից ջախջախում և գուրս են մզում թուրքական հրոսակային բանակը: Հղորացած Թրանսիան ծովում և ցամաքում հաղթություններ էր տանում հոլանդական-անգլիական ուժերի վրա: Հոլանդիան ապրում էր իր փառքի վերջին տարիները: Բայց դեռ օգտվում էր իր փառքի մասցորդներից:

Մինչ այդ, XVI—XVII դարերում հսկանիայի գեմ 40 տարի մղած համառ պայքարից հետո, ազատագրված Հոլանդիան սկսել էր զարգանալ աննախընթաց չսփերով: Հոլանդիա էին փոխագրվել առևտրականներ, արդյունաբերողներ, արհեստավորներ, մտավորականներ, այդ եկվոր ապրերը աշակցել են Հոլանդիայի (այդ ժամանակ կոչվում էր Միացյալ Նահանգներ) տնտեսական և կուլտուրական վերելքին: Հոլանդիայում էր կատարվել պատմության մեջ հայտնի առաջին բուրժուական ուսուցուցիչն, վերացել էր ազնվականությունը, տիրող էր դարձել քաղաքացին բուրժուազիան, աճագին չափերով աճել էին առևտուրը, գաղութային ձեռնարկությունը, նավագնացությունը, կուտակվել էր կապիտալը: XVII դարի կեսերին Հոլանդիան ոչ միայն Եվրոպայի ծովային հզոր պետություն էր (Եվրոպայի այդ ժամանակա 25 000 նավերից 15 000 պատկանում էր հոլանդացիներին), այլև «Հոլանդիան ԽVII դարի օրինակելի կապիտալիստական երկիր էր»\*:

Հոլանդիայի գլխավոր քաղաք Ամստերդամը, որը տեղադրված է Զյուգերգեն ծոցը թափող Ամստել գետին\*\*, XVII դարում ուներ 100 հազար բնակիչ և համաշխարհային մասշտաբի առևտրա-արդյունաբերական կենտրոն էր: Նրան անվանում էին «Հիւսիսային Վենետիկ»: Այդտեղ զարգացած էին՝ տեքստիլ արդյունաբերությունը, նավաշինությունը, ձրկնորսությունը, գարեջրի արտադրությունը, ծովային առևտուրը: Նրա նավերն ու մանուֆակտուրան մրցակից չունեին աշխարհում: Հայտնի էր Ամստերդամի բորսան (Անավերպենի անկումից հետո), մեծ էին նրա համաշխարհային կապերը: Պարգացած էին արվեստները, նաև քարտեզագրությունը: Հոլանդիայում էին ապրում և գործում հոչակավոր նկարիչներ՝ Ռուբենսը, Շեմբրանդտը, քարտեզագրի Մերկատորը: Նավաշինություն սովորելու համար XVII դարի վերջում Հոլանդիա է մեկնել ոսւսաց կայսր Պետրոս I: Հոլանդիայում էին ապաստարան գտել իսպանիայից և Պորտուգալիայից հալածանքներից վախած հրեաները, նրանց թվումն էին հայտնի փիլիսոփա Սպինոզայի ծնողները: Վերջապես, գեղի այդ ժամանակի առաջանակա հոչակավոր Հոլանդիայի արդյունաբերական և կուլտուրական կենտրոն

\* Կ. Մ ա ր ք ս, Կապիտալ, հատ. I, 8-րդ հրատ., 1936 թ., էջ 646:

\*\* Այդ է պատճառը, որ Զաքարիա Ագուլեցին և վանանդցիները անվանում են Ամստելոգամ:

Ամստերդամի են գնացել հեռավոր Գողթանից Զաքարիա Ագու-  
լեցի վաճառական ճանապարհորդը և հայ վանանդեցիները՝  
հայերեն գրքեր տպագրելու և աշխարհի առաջին տպագիր հա-  
յերեն քարտեզը լույս ընծայելու համար:

**Հ. 1849 ԹՎԱԿԱՆԻՆ ՎԵՆԵՏԻԿՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀԱՅԵՐԵՆ  
ՄԵԾԱԴԻՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՏԼԱՏԻ «ԱՏԼԱՏ ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ  
ՊԱՏԿԵՐԱՅՑ»-Ի ՄԱՍԻՆ**

«Համատարած աշխարհացոյց»-ի քարտեզը լույս տեսնե-  
լուց ավելի քան 150 տարի հետո, նաև 1786 թվականին Վենե-  
տիկում 8 քարտեզից փոքրագիր ժողովածու հրատարակելուց  
ավելի քան 60 տարի անց, մի ժամանակամիջոց, երբ լույս էին  
տեսել երկու տասնյակի չափ հայեցին քարտեզագրական հրա-  
տարակություններ, արդեն ավելի դյուրին պետք է լիներ Մխի-  
թարյանների համար Վենետիկում, որտեղ կային կազմակերպ-  
ված տպարան, հարուստ գրադարան, աջխատելու հանգիստ  
պայմաններ, — լույս ընծայել 1849 թվականին հայերեն աշ-  
խարհագրական գունավոր խոշոր ատլատը: Լրիվ վերնագիրը հե-  
տեւյալն է\*.

**ԱՎԱՍ**

**Աշխարհացոյց պատկերաց**

**ըստ**

արքունի աշխարհագրաց Գաղղիոյ, Անգլիոյ, Գերմանիոյ  
և Ռուսաց

Հանդերձ նախաշալիդ ծանօթութեամբ

բնական ուսումնական և քաղաքական աշխարհագրութեան

փորագրեալ ծախիւք

Յովիանենու ամիրայի Տառեան

ի Վենետիկ

ի տպարան Մխիթարեան ուխտին

յամի 1849 ՌՄԴ

**Շապիկը զարդանկար շրջանակով է, բաղմագույն:**

\* Այսուեղ նշելու ենք նաև աշխարհագրական անունները Ատլատի հա-  
յերեն տպադարձությամբ:

Հ-րդ էջում տպված է ներսողական՝ առ բարերարն։ Առասի առաջին մասը պարունակում է տեքստը (46 մեծադիր էջեր — 45 սմ × 60 սմ):

### Նախաշավիլ

Ատլասի նախաշավիդում (նախաբանում) հիմնավորված է աշխարհագրության նշանակությունը՝ ժամանակի և կազմողականի գաղափարներին համապատասխան և նշված են աշխարհագրության գլխավոր մասերը:

Աշխարհագրութիւն ուսումնական (կամ տիեզերագիտութիւն),

Երկրիս ձեւը և լուսավորաց առերևյալ շարժմունքը:

Ելլ և այլ գիրք մոլորակաց:

Երեքակ, լուսին:

Ժամանակի չափը:

Խավարութիւն:

Մոլորակներ (7 մեծ և 4 փոքր) գլխաւորներ:

Հաստատուն աստղեր:

Երկիր; գունդ և աշխարհացոյց:

Կողմնացոյց և հողմունք:

Երկայնութեան չափեր:

Աշխարհագրութիւն բնական

Երկրագնդիս բնական բաժանումը:

Յամաք, երկրներ, ջուր, մթնոլորտ, բոյսեր, կենդանիք, մարդ:

Աշխարհագրութիւն քառական

Նախագիտելիք:

Աշխարհագրութիւն քաղաքական, տեսչութիւն կամ կառավարութիւն, կրոն, լեզու, երկրագնդիս մեծամեծ բաժանմունքները:

Եւրոպա

Տրված է՝ «տերութեանց աղիւսակ» (թվարկված են)՝ մակերեսոյթ, բնակիչք, առ հազ. մարդ (խտություն), եկամուտ (Փրանկ), զորք, մայլաքաղաք:

Նկարագրված են պետությունները՝

Թագավորութիւններ, կայսրութիւններ, դքսութիւններ, իշխանութիւններ, նիզակցութիւններ, հասարակապետութիւններ:

Այսուհետեւ Ասիայի, Օվկիանիայի, Աֆրիկայի, Ամերիկայի մասին արված են ընդհանուր տեղեկություններ և նկարագրված են ժամանակվա պետությունները և ելքոպական պետություններին պատկանող երկրները (գաղութները) պատահական կարգով:

«Աշխարհացոյց պատկերաց ատլասում» նախաշավկից հետո գետեղված են մեծ քարտեզներ, թվով 10 տախտակ, չափը՝ 2-ական էջի մեծության (60 սմ × 90 սմ):

I. Տախտակը պարունակում է «Ճիեզերագիտութիւն կամ դիրք մոլորակաց», որտեղ գետեղված են գունավոր գծվածքներ և նկարներ՝ հողմացոյցի, դիրք արեգակին ըստ Կոպերնիկյա, դիրք Պտղոմեա, դիրք Տիւքոնի Պրահէ, կենդանակամար և կենդանակերպը (12), նաև Արեգակ, Փայլածու, Արուսեակ, Երկիր, եղանակք տարւա, երկրագունդ, Երեսկ, Լուսնթագ, Արուսեակ, Հրատ, մակընթացութիւն տեղատութիւն, երկոյթք լուսնի (Փաղաները). Շրջան Երկրի զարեգակամբ, խաւարմունք, Գոտիք:

II. «Համատարած աշխարհացոյց».—Բաժանեալ երկու կիսագունդս ըստ արքունի աշխարհագրաց Գաղիոյ:

Կիսագնդերի չորս տեսակի գծվածքներ:

Մանեկավոր գունդ, գունդ գուգահեռական (աստիճանացանցանց):

III. «Ասիա».—2 էջի մեծության. գունավոր: Աստիճանք, այսինքն՝ մասշտաբ, նշված է գծայինը (թվայինը չկա) ութիւնութիւնը չափերով.

բյուր մեթր,	մղոն տաճկաց,
փարսաղ հասարակ,	փարսաղ պարսից,
փարսաղ ծովային,	մղոն հնդկաց,
վերսթ ոռւսաց,	լի կամ մղոն չինաց:
	(1 մատնաչափը = 624 վ.)

Կալվածք՝ Անգղիացվոյ, Գաղղիացվոյ, Տանիմարքայի, Փոլիթուկալայի:

VI. «Եւրոպա» — Գունավոր, 2 էջի մեծության, գծային մասշտաբը — 12 ձեռվ:

V. «Ափրիկէ» — Գունավոր, 2 էջի մեծության: Աստիճանք — 6,

էից տրված է քարտեղ — «Առլասի» երկրները (հյուսիսարևմատյան Աֆրիկայում), մեծացրած մասշտաբով:

V. «Հիւսիսային Ամերիկա» — Գունավոր, 2 էջի մեծության, «Աստիճանք — 6»:

Կալիֆորնիան և Կոլորադոն նշված են ձիշո՞ւ Մեքսիկայի հետ:

Քարտեզում կա Ամերիկա Ռուսաց\*:

VII. «Ամերիկա Հարաւային» — Գունավոր, 2 էջի մեծության, «Աստիճանք — 7», քարտեզին կից տրված է շարանակությունը՝ հարավային ծայրը Չիքա կամ Փաթակոնիա և Երկիր Հրու:

VIII. «Օվկիանիա» — Գունավոր, 2 էջի վրա, չունի աստիճանացույց:

«Արևելեան և արևմտեան երկայնութիւն՝ միջօրեին Փաթեղոյ»:

Կա թվերով բացատրություն՝

1. Մալայաստան կամ Մալեզիա:

2. Մելանեզիա:

3. Փոլինեզիա կամ բազմակղզիք:

Մեծ օվկիանոսը և Օվկիանիան գունավոր գծով բաժանված են 5 մասի:

IX. «Պետութիւն Օսմանեան», — Գունավոր, 2 էջի վրա. «Աստիճանք 4», զլխավոր միջօրեական 2 հատ:

Փարիզի և Արարատի (ընդգծումը մերն է, հեղ.), Վերջում՝

X. «Հայաստան աշխարհ ըստ նախնի աշխարհագրաց» — 2 էջի մեծության, գունավոր, «Աստիճանք» թվային՝ 1 : 2.200.000, գծային՝ 4 կարգի:

Մեծ Հայքը ներկված է վարդագույն, Փոքը Հայքը՝ դեղին, Կիլիկիան՝ կապույտ:

Այսքանը «Աշխարհացոյց պատկերաց Առլասի» պարզ նկարագրությունը:

Զննությամբ պարզենք նաև «Առլասի» գրական հատկությունները և թերի կողմերը:

«Աշխարհացոյց պատկերաց Առլասը» որպես աշխարհագրական քարտեզների ժողովածու, իրու ատլաս՝ իր չափով խոշոր:

\* 1867 թ. ցարական կառավարությունը Ալյանս և Ալեռուտյան կղզիները վաճառեց Ամերիկայի Միացյալ Նահանգներին:

Է՛ս սեղանի չափսի: Քարտեզները և քարտեզագիտական գծվածքները բոլորը գունավոր, բազմագույն են: Քարտեզներում ցամաքի մասերը ներկված են, իսկ ծովերի եղբերը նշված են սև շորիսներով (գծերով): Դրանց գծագրությունը «Համատարած աշխարհացոյցի» (1695 թվականի) համեմատությամբ, կատարված են (ինչպես հասկանալի է), շատ ավելի ճշգրիտ և շատ ավելի ճառը, տեքստը, աշխարհագրական անունները գրված են ավելի բազմազան և շնորհքով, տպագրված անունների հայերեն տառադառնության մեջ մացված են ճշտումներ:

Ատլասը կազմված է աշխարհագրական ժողովածուներին հատուկ ծրագրով և բովանդակությամբ: Քարտեզներում, բնականաբար, չեն նշված կողմանացոյցները, չեն նկարված նավեր, չկան կրօնական բովանդակության նկարներ:

Այդ բոլորը վկայում են «Աշխարհացոյց պատկերաց Ատլասի» ժամանակի իմաստով, խնամքով կատարելու մասին:

Սակայն, գիտական զննության հետևանքով, հայտնարերել ենք մի շարք երեսութներ, որոնք վկայում են այն մասին, որ ատլաս կազմողները չեն հաղթահարել աշխարհագրական և քարտեզագրական որոշ գծվարությունները՝ մասսամբ ժամանակի անտեղյակության պատճառներով, մասսամբ էլ գիտական քննադատական վերաբերմունքի պակասությունից:

Արժե կանգ առնել «Աշխարհացոյց պատկերաց Ատլասի» հետաքրիր հրատարակության մի քանի պակասավոր կողմերի վրա:

«Աշխարհացոյց պատկերաց Ատլասի» գծված քարտեզներում ինչ երկրներ են պակասում, ցամաքի որ մասերը չեն նշված, որոնք վկայում են XIX դարի կեսում աշխարհագրական գիտությանը դեռևս անհայտ լինելու մասին:

ա) Կիսագնդերի քարտեզում անորոշ, բաց, սպիտակ են թողնված Գրենլանդիայի հյուսիսային մասերը, չյուսիսային Ամերիկայի չյուսիսային արշիպելագոսի հյուսիսային եղբերը. Անտարկտիդայի ափերը, հարավից հյուսիս գգալի չափով շատ լայն է գծված նոր Գվինեա կղզին:

բ) Ասիայի քարտեզում չեն նշված չյուսիսային Սառուցյալ օվկիանոսում «չյուսիսային Երկիր» կղզիները, Վրանգելի կղզին:

գ) Աֆրիկայի քարտեզում նշված չեն մայր ցամաքի արևմելյան մասի խոշոր լճերը (միայն գծված ու ներկված է Տանգանյիկա լճի հարավային մասը), Կոնգո գետի վերին և միջին հոսանքը:

դ) Հյուսիսային Ամերիկայի քարտեզում չեն գծված Բագվահնի կղզու արևմտյան ափերը. ճիշտ չէ Աղի մեծ լճի գծառությունը:

ե) Հարավային Ամերիկայի քարտեզում ճիշտ չեն գծված Մարակայիրո լճի (Ճիշտը՝ ծոցի, հեղ.) ափերը.

զ) Ավստրալիայի քարտեզում չեն գծված Էյլ, Տոունս և այլ լճեր:

Այդ պակասավոր կողմերը, ուրեմն, օրյեկտիվ կարգի են, կազմողի և հեղինակի կամքից և հնարավորություններից անկախ:

Դիմելով «Աշխարհացոյց պատկերաց Առլասի» մյուս կողմերի գննությանը, հարկ է նշել նաև սուբյեկտիվ կարգի առանձնահատկությունները:

Աշխարհի՝ կիսագնդերի, աշխարհամասերի, Օսմանյան պետության և Հին Հայաստանի քարտեզներում զանազան գույներն օգտագործված են քաղաքական հանդամանքները, պետությունների տարածությունները սահմանագծելու համար: Մինչդեռ Աշխարհի (կիսագնդերի) քարտեզում Ռուսաստանի Եվրոպական և Ասիական մասերը, ինչպես նաև Թուրքիայի (Տաճկաստանի) Եվրոպական և Ասիական մասերը ներկված են զանազան գույներով:

Օվկիանիայի (և Ավստրալիայի) քարտեզում ինդոնեզիան և Ֆիլիպինյան կղզիները միասին անվանված են Մեծ արշիպելագոս և ներկված են որպես Օվկիանիայի մաս, մինչդեռ դրանք համարվում են Ասիային պատկանող:

Առլասում զետեղված Եվրոպայի քարտեզում (հիշենք, առլասը ապագրված է 1849 թվականին) Երևանը և Նախիջևանը իրենց շրջակա տերիտորիաներով չեն ընդգրկված Ռուսաստանի սահմանների մեջ. մինչդեռ Ռուսաստանը Հայաստանի այդ մասերը աղատագրել էր Պարսկաստանից և միացրել Ռուսաստանին տակալին 1827 թվականին: Սակայն, պետք է նշել, որ այդ թերությունը չկա Առլասում զետեղված Ասիայի և Օսմանյան պետության քարտեզներում:

Եվրոպայի նույն քարտեզում և Ասիայի քարտեզում Սկանա, Վանա և Ուրմիս լճերի գծագրությունը տարօրինակ է և միանգամայն անձիշտ. մինչդեռ Օսմանյան պետության և Հին Հայաստանի քարտեզներում գծված է համարյա անսխալական և շատ ավելի նման իրականությանը:

Բայց ական ուշագրավ է «Աշխարհացոյց պատկերաց Առ-

ւասում» աշխարհագրական անունների հայերեն գործածելը, հայերենի վերածելը, հայերեն տառագրաբնությունը:

Մենք անհրաժեշտ ենք համարում կանգ առնել նաև այս կարգի խնդիրների վրա, որովհետև ցամաքի և ծովերի ափերի ճշգրիտ գծագրելուց, գույների օգտագործումից բացի, քարտեզագրական հրատարակությունների համար խիստ կարեոր է նաև տեքստը՝ աշխարհագրական անունները, այլապես, առանց տեքստի, քարտեզը համարվում է «հնամբ»:

Անհրաժեշտ է արձանագրել, որ հայերեն առաջին քարտեզի՝ 1695 թվականի «Համատարած աշխարհացոյց»-ի համեմատությամբ մի քայլ ետ կնշանակի ընդունված աշխարհագրական տերմիններ՝ Հյուսիսային բևեռի, Հարավային բևեռի փոխարեն 1849 թվականի ատլասում աշխարհի (կիսագնդերի) քարտեզում գրել հին աստղաբաշխական անուններով՝ Արջային բևեռ, Հակարջային բևեռ (այդ, ասկայն համապատասխանում է «Արկտիկո» և «Անտարկտիկա» միջազգային աշխարհագրական անուններին, քանի որ հունարեն «արկտոս» նշանակում է արջ): Նույնը Ասիսայի քարտեզում գրված է՝ «Ասուուցեալ ծով Արջային»: Բևեռների անունների, նաև Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսի նկատմամբ հայերեն «արջ» անվանումը այլևս չի գործածվում:

Արարական ծովը Ասիսայի քարտեզում գրված է Ծոց Արարիոյ, Կիսագնդերի քարտեզում՝ Էօմերյա ծոց (այսինքն Օմանի), իսկ Աֆրիկայի քարտեզում՝ Էօմենայ ծով: Ինչպես տեսնում ենք, միևնույն ատլասի երեք տարրեր քարտեզներում միևնույն աշխարհագրական օբյեկտը անվանված է երեք կերպ:

Տարբեր հայերեն տառագրաբնությամբ են գործածված և գրված Խոսաստանի աշխարհագրական անունները՝

Քաղաք. Արքանցել (առանց «սկ»-ի վերջավորության),  
Քաղաք Աժտերիսան (Հաշտարիսանի փոխարեն),

Քաղաք Ա. Փեթրպուրկ (առանց ե-ի, մի այլ հեղինակի քարտեզում նույնիսկ՝ Պետրոսբուրդ),

Կուսակալութիւն Կատարինասլավայ (Եկատերինոսուլավի նահանգ) և այլն:

Այլ երկրների վերաբերյալ նշում ենք՝

Գաղղիա (Ֆրանսիայի հին անունը),

Տանիմարքա (գերմաներենի Դենեմարկ-ը, Գանիա),

Պելճիա (Փրանսերենի Բելժիկ — Բելգիան),

Փորթոկալ (Փորտուգալիան).

Գետք և նշել, որ գեռ XIX դարի վերջերին Անդրկողվածասի հայկական գպրոցներում այդպես էին սովորեցնում եվրոպական այդ պետությունների անունները:

Ծոց Ֆինտիոյ (այսինքն՝ Ֆիննական ծոց),

Աֆրիկայի քարտեզում՝

Սահրա (Սահարան),

Սուասոն կամ Նիկորիտիա (Սուասոնը),

Գլ. Բարեհուսոյ (Կապլանդ երկրի տեղում),

Տերութիւն Ճէզարիայ (այժմյան Ալժիրի տեղում),

Եթովպիա (գործ է ածված միանգամայն ճիշտ, քանի որ Հարեւ, Հարեշստան վիրավորական անուն է):

Խաղաղ և Ավանայան օվկիանոսների տեղում գրված է՝  
Խաղաղ օվկիանոս Հիւսիսային, Խաղաղ օվկիանոս Հասարակածային,

Ատլանտյան օվկիանոս Հիւսիսային, Ատլանտյան օվկիանոս Հասարակածային,

Գործ է ածված ըստ ժամանակի տվյալների և գործածության:

«Աշխարհացոյց պատկերաց Ատլասում», արտացոլելով XIX դարի կեսին աշխարհի քաղաքական վիճակը, Եվրոպայի քարտեզում, օրինակ, Ռեկրախնայի, Բելոսուսիայի, Վրաստանի տերիտորիաները միացած են Ռուսաստանին, այլ պատկեր էր ներկայացնում, օրինակ՝ Իտալիան, որը չէր կազմում քաղաքական ամբողջություն:

Իտալիայի տերիտորիայում նշված են 10 քաղաքական միավորներ.

Լոմպարտիա և Վենետիկ — (կազմում էին Ավստրիական կայսրության մասը).

Թագավորութիւն Սարաենիոյ — (Սարգինիա կղզին և Պյեմոնտը՝ Տուրին քաղաքով: Սարգինիա պետությունը, միանալով անգլո-ֆրանս-թուրքական սազմաւժերին, մասնակցեց 1855—56 թթ. Ղրիմի պատերազմում ընդդեմ Ռուսաստանի):

Ալիակ և կենեցվոյ (Պապական մարզ, Հռոմ քաղաքով):

Նափոլի (Սիցիլիա կղզու հետ), իսկ նախաշավորում գրված է այլ կերպ՝ Թագավորութիւն Կրկին (այսինքն՝ երկու Սիցիլիայի):

Դքսութիւն Փարմայի:

Դքսութիւն Մոտենայի:

Դքսութիւն Լուքսեմբուրգի:

Մեծ դքսութիւն Թոսքանայի, Ֆիորենցիա — (Ֆլորենցիա)  
քաղաքով:

Իշխանապետութիւն — իշխանութիւն — Մոնաքոյի,

Հասարակապետութիւն (ուսուպուրլիկա) Սան-Մարինոյի:

Հասկանալի է, որ իտալական ժողովուրդը ձգտում էր երկրի քաղաքական ամբողջության (հիշենք հայտնի Գարիբալդին):

«Աշխարհացոյց պատկերաց Ալլասի» նման՝ քարտեզագրական հրատարակության բազմակողմանի և մանրակրկիտ դննությունը կազմանջեր կազմել մի առանձին գիրք, ուստի տվյալ աշխատության մեջ մենք միայն համառոտակի շոշափել ենք այդ հոչակավոր հայ քարտեզագրական ունիկալ հրատարակության սոսկ մի քանի հետաքրքրական առանձնահատկությունները: Մենք նույնիսկ մանրամասն կանդ չառանք ատլասի տեքրաստի՝ նախաշաղկիպի վրա, որովհետև այդ ևս կազմելով առանձին կարեոր խնդիր, պահանջում է մեղանից մի այլ առիթով արտահայտվել:

### Յ. 1850 ԹՎԱԿԱՆԻՆ ՎԻԵՆՆԱՑՈՒՄ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԱՌԱՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ ԳԼՈԲՈՒՄԻ («ԵՐԿՐՈԴՆԴԻ») ՄԱՍԻՆ

1850 թվականին Վիեննայում պատրաստված առաջին հայերեն մեծագիր գլոբուսի զննությունը կատարելուց առաջ լսենք կարծիքներ, որ արտահայտել են ժամանակի հայ պարբերական հրատարակությունները: Ոչ սովորանայ քարտեզագրական հրատարակության նկատմամբ անտառը լինելու համար, լսենք իրենց՝ Վիեննայի Մխիթարյաների հրատարակած «Հանգէս Ամսօրեայ» ամսագրի 1895 թ. № 11-ում Արսեն Այտընյանի գործունեության 50-ամյակի առթիվ զետեղված նրա կենսագրականի հեղինակ Գ. Մենկելյանին:

Անա թե ինչ է գրված առաջին հայերեն գլոբուսի մասին:

Հ. Ա. Այտընյանը «1848-ին արդեն ձեռնարկած էր հայերեն տառերով մեծ երկրագնդի մի շինութեան, որ չորեք գունեան տպագրվեցավ և մաքրութեամբն ու կանոնավորութեամբը զարմանք շարժեց նույնիսկ Վիեննայի Աշխարհագրական Բնկերութեան նախագահին: Այս կարեոր գործին վրա — որ ամենայն հավասարութեամբ կը մըցի՝ նմանօրինակ որկիցէ եվրոպական երկրագնդի կամ աշխարհագունդերու հետ, և որ գովութիւն կալե այցելուներեն, կարծե, որ ի գիտութիւն, մանրամասն տեղեկութիւն տանք»:

Այդ տեղեկությունները հետեւալն են՝

«Գնդին տրամադրիծն է ճիշտ շունչափ. նշանակված են գնդին վրա հայերեն տառերով գրեթե բոլոր երեկելի քաղաքներն ու մինչեւ նաև գյուղաքաղաքները, ծովագնացութեան, շոգեկառաց գծերն, և գրեթե  $1\frac{1}{2}$  կն բարձրութիւն կը ստանա իր գեղեցիկ պատվանդանը. Գունդս ժամանակին երեկելի լրագիրներեն դրվագած է: Դժբախտաբար այսպիսի մեծագործ կազմվածքին պահանջեալ դրամն արգելք եղած է, որ բաղձացված տարածումն գտած չէ, թեպետ և մեծամեծ հաստատութեանց համար՝ մինչև 7—8 շինված է» (Էջ 327—328):

Ա. Այտընյանի մահվան առթիվ «Հանդէս Ամսօրեայ»-ի 1902 թ. № 9, Էջ 278-ում կրկին հիշատակություն ենք գտնում առաջին հայերեն մեծագործ գլորուսի մասին:

«Սքանչելի մարրութեամբ և նըրութեամբ քանդակված մի գործ է դա, — առված է «Հանդէս Ամսօրեայ»-ում, — որի նմանը հայերի մեջ չէ եղած... երկրագունդը մի ահագին գունդ է, որի չափերը միայն պատկառանք են ազդում տեսնողին... Դժբախտաբար, այսպիսի մի ահագին գործ շատ թանգ գնով կարող էր ծախվել, ուստի շատ չը տարածվեց նա... երկրագունդը շատ լավ է պահված և իր ամբողջ կազմվածքով, պղնձե շրջանակներով հիանալի տպավորութիւն է գործում: Ոչ միայն Վիեննայի Միհթարեանները, այլև ամբողջ հայ ազգը կարող են սրածենալ չ. Այտընեանի մատների այս հրաշակերտով»:

1851 թվականին Հ. Այտընյանը պատրաստեց ևս մի մեծ երկրագունդ արարերեն լեզվով, բայց այդ գործը մնաց անկատար:

«Հանդէս Ամսօրեայ»-ի 1902 թվականի համարներից մեկում, հայտարարությունների բաժնում կարգում ենք, որ 1856 թ. Վիեննայի Միհթարյան տպարանում Ա. Այտընյանը 2-րդ անգամ պատրաստել է «Նոր երկրագունդ» հայերեն՝ «ըստ նոր քննութեանց»:

Հայերեն առաջին գլորուսի մասին ջերմ և գովասանական խոսքեր ունեն դրած նաև Լէօն և Գ. Լոռնյանը, որոնք սակայն էական բան չեն ավելացրել Մենեկշյանի արտահայտած կարծիքին:

Հարգանքով վերաբերվելով դեպի հայ քարտեզագրության առաջին մեծ գլորուսի պատրաստման բարդ ու դժվարին աշխատանքին, մենք կրկնակի պարտավորություն ենք զգում մանրակրկիտ, բազմակողմանի, ամենայն բարեխսղճությամբ ծանոթանալ այդ, իրոք որ, մեծամասշտար քարտեզագրական գործին

և նվիրել նրան այս աշխատության մեջ համեմատաբար շատ  
ավելի էջեր:

Գլոբուս պատրաստելու միտքը հղացել են հին հռոյները,  
դեռևս մեր ժամանակագրությունից 5 դար առաջ: Առաջին գլո-  
բուսը, թեկուզ ջատ պարզ բովանդակությամբ, պատրաստել է  
Կրատես Մալոսցին, հույն գիտնականը, մեր ժամանակագրու-  
թյանից 2 դար առաջ: Այնուհետև միջին դարերում, երբ  
Արևմտյան Եվրոպան կաթոլիկ եկեղեցու մտավոր տիրապետու-  
թյան ներքո ապրում էր անկման վիճակ, գիտությունը ժա-  
ռանգում և մշակում են Մերձավոր Արևելքում արտաները,  
որոնք հունական կլասիկ գիտության նվաճումները հաղորդել  
են Եվրոպայի նոր ազգերին: Նոր դարերի սկզբում նյուրնրերդ  
քաղաքում Մարտին Բեհայմը 1492 թվականին պատրաստել  
է մի նոր գլոբուս (վրան Ամերիկա չկար), որով օգտվում է  
Քրիստափոր Կոլումբոսն իր աշխարհանոչակ ճանապարհորդու-  
թյունը ծրագրելիս: Գլոբուսներն այնուհետև պատրաստում էին  
ժամացույցով, կողմնացույցով և այլն: 1889 թ. ֆրանսիացի  
հայտնի աշխարհագետ Էլիզե Ռելյյանի նախաձեռնությամբ պատ-  
րաստվել է Փարիզի համաշխարհային ցուցահանդեսի համար  
12,7 մետր արամագծով (մ. 1:1.000.000, 1 սմ=10 կմ) մեծ  
գլոբուս: Հետագայում 1900 թվականին նույն ցուցահանդեսի  
համար պատրաստում են էլ ավելի հոկայականը՝ 46 մետր արա-  
մագծով:

XVII դարի սկզբին Ռուսաստանում Պետրոս I կայսրի պատ-  
վերով պատրաստել են խոշոր գլուխուս:

Շատ մեծ գլորուս պատրաստված է նաև ՍՍՌ-ում Պե-  
ղեղիայի և Քարտեզագրության Գլխավոր Վարչության (ГУГК-ի)  
կողմից քարտեզագրական գործարանում Սովետական կառավա-  
րության պատվերով:

Մեծ գլորուսները սակավատիրած են, թանկարժեք են,  
սորտատիվ չեն (թեթևաշարժ չեն), ուստի և չեն պատրաստվում  
հաճախակի: Դրանք դառնում են գիտական հիմնարկներում  
ուսումնակիրության եղակի գործիք, կամ թե թանգարաններում  
գիտողության առարկա, սակայն ոչ մասսայական (գլորոցներում,  
ընտանիքներում) գործածության ձեռնարկ:

Վիեննայի Միհթարյանների պատրաստած մեծ գլորուսը,  
որ քննության ենք առնում մեր սույն աշխատության մեջ,  
խիստ արժեքավոր և հետաքրքրական գործ է:

Այդ գլորուսից Սովետական Հայաստանում կա 2 հատ.

մեկը Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիային կից Աշխարհագրական ընկերության գիտական կարինեառում, մյուսը՝ Երևանի պետական համալսարանի աշխարհագրական կարինեառում, դրանք համեմատաբար լավ են պահպանվել: Յլուրի օրինակը, որը կար էջմիածնում, քայլայվել է և փչացել: Թիֆլիսում անցյալում միայն Ներսիսյան դպրոցն է ունեցել այդ գլուխութից\*:

ԳԼՈՒԽՈՒՄԻ ՎԵՐՆԱԿԻՐՔ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԲ

Սովորաբար գործածական փոքր գլորուսների վրա չեղական որևէ վերնագիր, չի հիշատակվում հեղինակը, չեն նշվում հրատարակման վայրն ու թվականը, պայմանական նշանները և այլն: Սակայն Վիեննայի հայերեն մեծ գլորուսն իր ծավալի շնորհիվ, մակերեսի, օվկիանոսների բաց տեղերում ազատ տարածություններ ունի, որտեղ և գրված, նշված են վերոհիշյալ բոլոր տեղեկությունները:

Մեծ գլորուսի վրա, արևելյան երկայնության (Ֆեռոյից) 100—120°-ների և հարավային լայնության 10—40°-ների միջն (Հնդկական օվկիանոսի հարավարևելյան մասում) գրված է լրիվ վերնագիրը, որը բերում ենք ստորև.

### Նոր

Ե Ր Կ Բ Ա Գ Ո Ւ Ա Դ

աշխատասիրութեամբ

Հ. Աղեքս. Վ. Պալնեան

Մրագրեալ

ըստ նոր զննութեանց

Ի. Հ. Արսենէ Այարնեան

Ի Մինիք. Ռւխտէն

Ի խնդրոյ և ծախիւք

Յովհաննու Ամիրայի Տատեանց

ի

Վիեննա

1850

Ինչպես տեսնում ենք վերնագրից, հայերեն տուաջին գլուխութը կրում է նոր երկրագունդ անունը: Մեր ժամանակներում, երբ գլորուսը մասսայականացած գիտական գործիք է դարձել,

\* «Հանդես Ամսօրեայ», 1902 թ., № 9, էջ 288:

տարօրինակ է նրա վրա նշել, որ գլորուս է: Մեծ գլորուսի հեղինակն այդ արել է այն ժամանակ գլորուսների սակավ տարածված լինելու պատճառով, իսկ «Նոր» անուն է տվել, նկատի ունենալով նրա նոր բովանդակությունը, վերջին թարմ տվյալները, համեմատած նախորդ գլորուսների բովանդակության հետ:

Վերնագրից երեսում է, որ գլորուսի պատրաստմանը աշխատակցել է Հ. Ալեքսանդր Վ. Պալնիանը, ծրագրել է, նյութը մշակել, աշխատանքը զեկավարել Արսեն Այտրնիանը, որ և հանգիստանում է գլորուսի հեղինակը: Իսկ Տատյանը այն մեկնասան է, որի ծախքով Վենետիկում 1849 թվականին հրատարակել է նաև սրանից առաջ մեր զննած «Աշխարհացոյց ալատկերաց Ատլասը»:

Գլորուսի վերնագիրը դրված է զանազան մեծության գեղեցիկ (զարդանկարներով) տառերով (շրիֆտներով): Զարդանկարի մեջ սև գույնով աչքի են ընկնում՝ գլորուս, քարտեզ, գիրք, գծագրական թուղթ, կարկին, անկյունաշափ (տրանսպորտիր), քանոն, ձեռքի աստղագիտակ և ծաղկանկար:

Ամբողջ վերնագիրը գլորուսի վրա բռնում է ( $10 \times 13$  սմ) 130 քառ. մմ աստրածություն:

#### ԳԼՈՐՈՒՍԻ ԶԱՓՍԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հայերեն առաջին գլորուսի պատրաստման աշխատանքներն ընդգրկել են հետեւյալ մոմենտները՝ ծրագրի (պլանի) մշակումը, նախնական (անհրաժեշտ) նյութեր հավաքելը, աշխարհագրական աստիճանացանցի խնդիրը, ցամաքների և ծովերի կոնտուրների գծագրությունը, աշխարհագրական օրյեկտների անունները և նրանց տառագարձության խնդիրը (թարգմանելը, գրելը)\*, ոելյեփի գծագրելը, պայմանական նշանների մշակումը, եվրոպական և մասնավորապես ավստրիական քարտեզագրական փորձի օգտագործելը, ամբողջ՝ թե գծագրական և թե տպագրական աշխատանքի ճշեելը, սրբագրելն ու ստուգելը:

Գլորուսի կարկասը (հիմքը), սեփմենտների տպագրությունը կատարված և պատրաստված են Վիեննայի պետական Ռազմական Աշխարհագրական ինստիտուտի քարտեզագրական գործարանում, իսկ տեքստը՝ աշխարհագրական անունները գրված, շարված, տպագրված են Վիեննայի Միսիթարյանների տպարանում:

\* Ա. Վ. Այտրնիանը տիրապետում էր մի շարք օտար լեզուների:

Հիմնայի հայերեն գլոբուսի տրամադիքը 60 սմ է, հասարակածի երկարությունը՝ 194,4 սմ։ Գլոբուսի հիմքի՝ կարկասի վրա ծեփված է մոտ 2 մմ հաստության (և ամուր բաղադրության) գիպս, որը հղված է շատ կանոնավոր կերպով։ Գիպսի վրա փակցված է հասարակածից գեպի հյուսիս 18 սեգմենտ և եղեղի հարավ նույնքան՝ 18 սեգմենտ, 1 շրջանակ փակցված է Հյուսիսային բևեռում, մյուսն էլ Հարավային բևեռում։ Այդպիսով, ընդամենը 38 մասից (թերթից) բազկացած սեգմենտները պատրաստված են քարտեզագրական փայլուն լավորակ թղթի վրա։ Գլոբուսն ունի իր որոշ արմատուրան, նրա վրա՝ շուրջը կա երկու հատ շրջանակ՝ մեկը հորիզոնական (հասարակածի վրա), մյուսը՝ միջօրեականինը՝ մետաղյա է, բաժանված  $90^{\circ}$ -ի մինչև Հյուս, բևեռը և  $90^{\circ}$  մինչև Հար, բևեռը։ Գլոբուսը հենվում է փայտե եռոտանու վրա, որն ունի 66 սմ բարձրություն։

Գլոբուսի հետ տրված են նաև հիշյալ 38 սեգմենտներն առանձին, պատրաստի, տպագրված, բազմագույն՝ գլոբուսը վեասվելու դեպքում նորոգելու համար։

Տեխնիկապես գլոբուսը պատրաստված է շատ լավ, խնամքով։

ԳԼՈԲՈՒՍԻ ՄԱՍՏԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԱՑԱՆՑԸ

Որքան հայտնի է, հայ մամուլում և գրախոսականներում վիեննայի հայերեն գլոբուսը գիտական մանրամասն վերը ծության չի ենթարկվել։

«Երկրագունդը մի ահագին գունդ է, որի չափերը միայն պատկառանք են ազգում տեսնողին» («Հանդ. Ամս.» 1902, № 9):

Այդ գլոբուսի մասշտաբը հասարակածի վրա՝ 1: 20.000.000, այսինքն՝ 1 սմ = 200 կմ-ի։ Բայց իր մասշտաբի սա գործածական գլոբուսների շարքում ամենամեծն է, իսկ թանգարանային մեծ գլոբուսների համեմատ՝ փոքր։

Հասարակածը սկ և սպիտակ գծիկներով բաժանված է 360 աստիճանի։

Հյուսիսային կիսագնդի համար գլխագոր կամ սկզբնական 0 միջօրեական է ընդունված Փարիզի միջօրեականը, իսկ հարավային կիսագնդի համար՝ Ֆեռոյի (կամ ինչպես հեղինակները թարգմանարար անվանել են՝ Երկաթի կղզու) միջօրեականը։ Միջօրեականների ցանցը նույնն է, երկու կարգի չէ. այդ հնարավոր է եղել շնորհիվ այն բանի, որ Փարիզի և Ֆեռոյի մի-

ջօրեականների միջև տարբերությունն ուղիղ  $20^{\circ}$  է: Այդպիսով, Փարիզից հաշված արևելյան երկայնության  $30^{\circ}$ -ին համապատասխանում է Ֆեռոյից հաշված արևելյան երկայնության  $50^{\circ}$ -ը, եամ Փարիզից հաշված  $110^{\circ}$ -ի արևմտյան երկայնությանը համապատասխանում է Ֆեռոյից հաշված արևմտյան  $90^{\circ}$ -ը: Միջօրեականները Փարիզից համարակալված են տասնյակներով՝ 10, 20, 30 մինչև  $180^{\circ}$  գեպի արևելք, նույնքան էլ գեպի արևմուտք, իսկ Ֆեռոյից միջօրեականները տասնյակներով համարակալված են միայն մի ուղղությամբ՝ գեպի արևելք, ընդամենը  $360^{\circ}$ : XIX դարի կեսում Գրինիչի Օ միջօրեականը դեռ համատարած չէր միջազգային պրակտիկայում, իսկ Պուլկովոյի միջօրեականը գործածական էր միայն Ռուսաստանում: Այդ ժամանակ Եվրոպայում գերակշռող էին ֆրանսիական լեզուն, գրականությունը, գիտությունը, ուսութիւնը և գործածականը Փարիզի միջօրեականն էր, որ և կիրառել են Վիեննայի Միխիթարյանները: Սակայն, նրանք գլուխուսի վրա միաժամանակ գործադրել են նաև Ֆեռոյի Օ միջօրեականը, նկատի ունենալով նրա որոշ առավելությունները և գործածակելը աշխարհագրական գիտության կողմից (Ֆեռոյի միջօրեականով արևելյան և արևմտյան կիսագնդերը կիսվում են հաջող կերպով): Թե՛ զլորուսի վրա և թե՛ առանձին սեղմենտների վրա խոշոր տառերով գրված են աշխարհագրական աստիճանացանցի հետեւյալ կարեռը մակադրությունները՝

Աստիճանք երկայնութեան ի Պարիզ քաղաքէ:

Աստիճանք երկայնութեան Երկաթի կղզուց (այսինքն Ֆեռոյից):

Հասարակած:

Հիւսիսային բևեռ:

Հարաւային բևեռ:

Արեադարձ Խեցգետնի:

Արեագարձ Այծեղջեր:

Բևեռային շրջանակ Հիւսիսային:

Բևեռային շրջանակ Հարաւային:

Արևելեան երկայնութիւն:

Արևմեան երկայնութիւն:

Գլորուսի վրա հյուսիսում և հարավում մանը տառերով նշված են մագնիսական բևեռները:

Մագնիսական բևեռ:

Աստիճանացանցը զլորուսի վրա գծված է բարակ գծերով,

իսկ արևադարձները ( $23,5^{\circ}$ -ները) և բևեռային շրջանագծերը ( $66,5^{\circ}$ -ները) գծված են ավելի հաստ գծերով ըստ հարկին:

Զուգահեռականների (աշխ. լայնության) աստիճանները բաժանված են համարակալված են մետաղե շրջանակի վրա տասնյակների կարգով՝  $10, 20, 30, 40$  և այլն մինչև բևեռները  $90^{\circ}$ :

Գլորուսի աստիճանացանցի վրա նշված է էկլիպտիկան, արեգակի անցման տարեկան տեսանելի ուղին երկնակամքարի վրա. այդ ուղին, ինչպես ցույց է տրված գլորուսի վրա, տարվա ընթացքում հատում է երկրի հասարակածը 2 անգամ, գարնանը՝ մարտի  $23$ -ին և աշնանը սեպտեմբերի  $23$ -ին, երբ երկրագնդի վրա լինում է օրահավասարում: Մի տեղ հասնում է Խեցգետնի՝ հյուսիսային արևագարձին, այդ լինում է հունիսի  $22$ -ին, մի անգամ էլ Այծեղջներ՝ հարավային արևագարձին, այսինքն՝ գեկտեմբերի  $22$ -ին: Էկլիպտիկան բաժանված է 12 մասի (12 ամսը՝ վահամապատասխան). յուրաքանչյուր ամսվա հատվածը բաժանված է 30 մասի (ըստ օրերի): Հատման տեղերը նշված են փոքրիկ սև գծիկներով, որոնցից համարակալված են՝  $5, 10, 15, 20, 25, 30$ -ը:

#### ԳԼՈՐՈՒՍԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

(լեզենդան)

Բնդհանրապես գլորուսի վրա պայմանական նշաններ չեն տրվում, գրանք համարվում են ինքն ըստ ինքայն հասկանալի: Սակայն, հայերեն «Նոր Երկրագնդի» վրա, այլ մեծ գլորուսներից մի քանիսի նման, աղատ տարածություններում, օվկիանոսների ընդարձակ բաց մասերում, այն է հյուս. լայնության  $20-40^{\circ}$ -ների և արևմտ. երկայնության (Փարիզից հաշված)  $40-50^{\circ}$ -ների միջև տրված են նշանների բացատրությունները (լեզենդան):

Այդական գրված է հետեւյալը՝

«Մեկնութիւն նշանաց և նշանագրաց»

Նախ նշված են բնակավայրերը՝

Մայրաքաղաք:

Գաւառական մայրաքաղաք:

Նշանաւոր քաղաք:

(Փոքր) քաղաք:

Պարսպաւոր քաղաք:

Բերդ, մամրոց:

Աւելակ:

Սրանք գրված են տառերով, համապատասխան ձևով՝  
մեծ (դլսագիր) և փոքր շրիֆտներով. բնակավայրերի նշանները  
տրված են կարմիր գույնի խոշոր (ու կրկնակի) և փոքր շրջա-  
նակներով (պունսոններով). պարսպավոր քաղաքները և բերդերը  
պարզ աստղանշաններով. ավերակները՝ եռանկյունաձև նշան-  
ներով:

Բնակավայրերը (նրանց շրիֆտներն ու նշանները) այժմ  
ընդունված է տալ ըստ վարչական կարգի և ըստ բնակչության  
թվի, մինչդեռ գլորուսի բնակավայրի վերահիշյալ ստորաբաժա-  
նումները առաջական են, պատահական են:

Ապա պայմանական նշաններում գրված են ուղիները՝

Ճանապարհ քաղաքաց ի քաղաք,

գլխավոր գնացք շոգենաւաց:

Նշանները տրված են բարակ և հոստ կարմիր գծերով. այդ-  
պիսով թե ցամաքային ուղիները (երկաթուղի, խճուղի, քարա-  
վանի ուղի) և թե ծովային ուղիները (նավերի երթեեկությունը)  
տրված են միենույն պայմանական նշանով՝ կարմիր գծերով.  
Դրանց տարրերությունը, հաստ ու բարակ լինելը գլորուսի վրա  
համարյա աննշարելի է. այդ, ինարկե, դրական կողմ չի կարող  
համարվել: Նավերի երթեեկության, ծովային ուղիների (գծերի)  
վրա թվերով նշված են երկարությունները հեռավորություն-  
ները՝ մի նավահանգստից մինչև մյուս նավահանգիստը. ահա  
թե ինչպես է այդ բացատրվում լեզենդայում:

Համարով ծովական մղոնացն 60 մդ.—1°, յորոց 9 մդ.—իրը  
1 ժամ:

Հիդրոգրաֆիայի նշաններից տրված են՝

Կապույտ գույնով—գետերի հոսանքը, հատված երկուգծերով:

Բացարականում գրված է՝

«Ջրվեժ, սահանք գետոց»:

Այնուհետեւ, պայմանական նշաններում հիշատակված են  
աեքսախ բացատրությունները, կրճատումները և շրիֆտների տար-  
բերությունները՝

գաւառ, բաժին

նշանաւոր կողմանք

լ. լք.—լեառն, լերինք

գ. լ.—գետք և լիճք

կ. կղ.—կղղի, կղղեք

ծց — ծոց  
սըն — սարավանդ  
նւհ — նաւահանդիստ  
նեղ — նեղուց  
ցմ. կղ. — ցամաքակղղի  
խմ — խումբ կղղեաց  
հրւնդ — հրուանդան:

Տըլած են աշխարհի (հորիզոնի) չորս դլխավոր կողմերի անվան կրծատումները՝ արև. Արեւիք, արմ. — Արեմուտք, հս. Հիւսիս, հր. Հարաւ:

Կրծատումների չարքում լեռան և լճի համար տրված է միակերպ լ. տառը: Այդ անհարմար է և աննպատակահարմար:

Խմ. խումբ կղղեաց փոխարեն գլորուսի վրա շատ է գործածվել կք (կղղիք), արքիակեղագոս ինչպես և հոգնակի վերջավորություններ, օրինակ՝ Թիգի կք., կամ թե Հեղըրիտք, Շառլուտեանք: Ասիոյ արքիակեղագոս, Եթովպիոյ արքիակեղագոս և այլն:

«Գլուխ» գործածված տերմինը նույն է, ինչ և հրվանդանը. թվում էր թե գլորուսի հեղինակը «գլուխ» գործ է ածել աշխարհամասերի կամ երկրների ծայր հյուսիսային և հարավային, արեւելյան և արեւայան հրվանդանների նկատմամբ. սակայն այդ այդպես չէ, ընդհանրապես գլորուսի վրա գլուխ և հրվանդան, այդ երկու հոմանիշ աշխարհագլական տերմինները, գործ են ածվել շատ պատահական կերպով:

Պայմանական նշանների բացատրության վերջում տրված են նաև քաղաքական (տիրապետության նշանները — պարկածքառանկյունիներով), այդտեղ գրված է՝

«Կալուածք արտաքոյ Եւրոպայ»

Անգղիացւոց	Սպանիացւոց
Գաղղիացւոց	Հոլանդացւոց
Բըլղակալայ	Տանիմաբոյ:

Սակայն թե քառակուսիները լեզենդայում և թե գաղութային կալվածքները գլորուսի վրա չեն ներկված, ինչով բացատրել մոռացության է տրված, թէ տեխնիկական կամ մի այլ պատճառով, պարզ չէ:

Գլորուսի վրա կա նաև մի այլ բացարական-ցուցակ. հս. լայնության  $0 - 10^{\circ}$ -ների և արեւայան (Փարիզից) երկայնության  $100 - 120^{\circ}$ -ների միջն, Խաղաղ օվկիանոսի բաց տարածության տեղում (հյուսիսային կիսագնդում):

Ամերիկայի Միացյալ Նահանգների այդ ժամանակվա 31  
բաժանումները:

Մեքսիկայի 8 նահանգները:

Միջին Ամերիկայի 5 պետությունների անունները նշված  
են համարակալումներով:

Նույն համարները նշված են նաև Ամերիկայի ցամաքի  
վրա: Այդ արված է, նկատի ունենալով գլորուսի (ցամաքի) վրա  
տեղի սպությունը: Սովորաբար նման գործողություն արվում է  
նաև քարտեզների վրա:

ԳԼՈԲՈՒՍԻ ԳՅՎԱԾՔԸ ԵՎ, ՏԵՐԱՍԻ ՇՐԻՖՏՆԵՐԸ

Հայերեն առաջին գլորուսը եղել է ֆիդիկական կամ (Փի-  
դիկուաշխարհագրական)\* և քաղաքական: Գլորուսը բազմագույն  
է, ներկված 5 գույնով՝ սև, կապույտ, կարմիր, կանաչ, դեղին:

Ափերի ուրվագիծը՝ կոնտուրը գծված է նկարչության հի-  
մունքով (լույսն ընկնում է ձախ կողմի վերևի անկյունից),  
հաստ և բարակ գծերով, սեղմագծով, որը այժմ չի արվում:

Հիդրոգրաֆիան տրված է կապույտ գույնով, ցամաքի եղ-  
րերը — ծովագիերը գծված են մուգ կապույտ, այնուհետև ծովը՝ 40  
շարք, գուգանես ալիքածե, աստիճանաբար լայնացող գծերով,  
իսկ օվկիանոսների ընդարձակ տարածությունները թողնված են  
ազատ, բաց, սպիտակ: Լճերը, նայած նրանց մեծության, գծված  
են նույնպես մի քանի շարք ալիքածե գծերով: Մեծ գետերի  
նավարկելի մասերը գծված են 3—4 շարք գծերով: Մեծ գետերի  
վերին հոսանքը և փոքր գետերը գծված են մուգ կապույտ գույ-  
նով: Օվկիանոսներում տեղադրել կապույտ գծիկներով նշված  
են փոքր տարածություններ. դրանցից մեկի մեջ կա երեք խաչ.  
մոտք դրված է «Մանուել Ռուբրիկես խութ», որը նշանակում է  
ստորջրյա վտանգավոր վայր է:

Ցամաքի սելլեֆը, լեռնաշղթաներն ու լեռնագագաթները  
տրված են կանաչ գույնով: ցամաքի մնացած ընդարձակ տարա-  
ծությունները թողնված են սպիտակ: Լեռները և լեռնաշղթաները  
տրված են կետական եղանակով (տուշեական սպոսոբոմ) — կետերով.  
բարձրագիր վայրերը, գագաթները, կատարները, ուզողորդ լան-

\* Այստեղ և ստորև քննության ենք առնում Այտընյանի հեղինակած  
գլորուսի այդ վարիանտը. Հայկական ՍՍԾ Աշխատական ընկերությանը պատկա-  
նող գլորուսը ֆիդիկական է, իսկ երեանի ողետ. համասարանինը քաղաքա-  
կան:

ջերը՝ իսկա կետերով, իսկ ցածրադիր վայրերը, զառիվեր լանջերը՝ նոր կետերով:

Ցամաքի ույլեփը գլոբուսի վրա կատարված է տեխնիկապես հաջող, նուրբ և պատկերավոր. սակայն իր ժամանակաշրջանին հայտնի լեռնագրության տվյալներին նայած՝ գիտականորեն ոչ այնքան ձիշտ. գույնը ավելի նպատակահարմար էր, որ տրված լիներ գարչնագույն:

Դեմոքրաֆիայի նշանները տրված են կարմիր գույնով, մայրագագագները՝ երկու շրջանակով (պունսոնով), երկրորդական կենտրոնները՝ մեկ շրջանակով, մեջը կետ, նշանավոր քաղաքները՝ մեկ շրջանակով, փոքր բնակավայրերը՝ փոքրիկ շրջանակով, բերդագագագները՝ շրջանակի շուրջը՝ բարդ (բազմածայր) աստղով, բերդեր-ամրոցները՝ շրջանակով և քառածայր աստղով, ավելակ-ները՝ փոքրիկ եռանկյուններով:

Տրանսպորտի նշանները տրված են նույնպես կարմիրով, ցամաքային և ծովային ուղինները գծված են կամիր գծերով, ցամաքայինները՝ բարակ միատեսակ գծերով են, որոնք վերաբերում են և՛ երկաթուղիններին և՛ Խճուղիններին և՛ քարավանի ուղիններին, այն էլ գծված են պատահական կերպով: Ծովային (նավերի երթեւելության) ուղինները գծված են քիչ ավելի հաստ, որը վերաբերում է գլխավոր ուղիններին, հեռավորությունները նշված են թվերով (մզոններով):

Քաղաքական ավյալները նշված են մուգ կապոյտ և տեղ-տեղ դեղին գույնով:

Պետությունների սահմանները գծված են մուգ կապոյտ գույնի պունկտիներով և կետերով. արտաքին, պետական սահմանները (օրինակ՝ ԱՄՆ-ի ու Կանադայի և միաժամանակ ԱՄՆ-ի ներքին բաժանումները) տրված են միակերպ, այդ հանգամանքը չի կարելի ընդունելի համարել: Վիեննայի հայկական գլոբուսի վրա միայն մի քանի պետությունների (օրինակ՝ Մեքսիկայի, Բրազիլիայի) սահմանները ներկած են կես սմ լայնության գեղին գույնով: Անհասկանալի է, թե ինչու մի դեպքում գույնավորված է, իսկ մյուս գեպքում ոչ:

Տեքստը, աշխարհագրական անունները և աստիճանացանցը տրված են սև գույնով:

Գլոբուսի վրա սև գույնով գծված է ամբողջ աստիճանացանցը. նաև նույն գույնով գրված են աշխարհագրական անունները (տեքստը): Աշխարհամասերի, երկրների անունները գրված են խոշոր և գեղեցիկ տառերով, մեծ գլխագրերով, զարդանկար-

Ներով, բազմաթիվ այլ անունները՝ մանր տառերով, շեղատառով։ Օվկիանոսների անունները, որ գրված են խոշոր դլխագրերով, միակերպ չեն՝ մերթ զարդանկարված են, մերթ պարզ, մաքուր, առանց զարդանկարների, միագույն չեն՝ մերթ ու գույնով են, մերթ մուգ կապույտ։

Աշխարհագրական անունները գլոբուսի վրա գրված են ոչ թե զուգահեռականների ուղղությանը համապատասխան, ինչպես ընդունված է քարտեզագրության կանոններով, այլ հաճախ ծովափերի գծի ուղղությամբ, օրինակ, Խոլանդիայի շուրջը, Դրիմի թերզու շուրջը, Բիոկայան ծոցի ափերի ուղղությամբ և այլն, որն արվում է տեխնիկական գծվարության գեպքում։

### ՑԱՄԱՔՆԵՐԻ ԵՎ ԾՈՎԵՐԻ ԳԾԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ցամաքների և ծովերի (օվկիանոսների) ափերի գծագրությունն իր ժամանակի տվյալների համաձայն գծված է ընդհանուր առմամբ ճիշտ, սակայն տեխնիկական պատճառով, գծագրման ավելորդ զիգզագների, գալարների (գողդոջուն գծերի) պատճառով, շատ տեղերում ափերն աղավաղվել են, օրինակ՝ եթե վերցնելու լինենք մեզ մոտիկ վայրերը, կաեսնենք, որ Սև ծովի և Կասպից ծովի ափերի գծագրությունը, կամ թե Դրիմի և Կոլա թերզու եղերքը կըում են այդ կարգի թերության նշաններ։ Երբեմն էլ չափազանց պարզեցրել են և խեղաթյուրել կոնտուրները, ինչպես, օրինակ՝ Սևանա, Վանա և Ուրմիո լճերի ափերի գծագրությունն է։

Բևեռները և բևեռային վայրերը, հասկանալի ըլատճառով գուրել են տվյալներից և անուններից։

Արկտիկայում, արդարացիորեն չենք տեսնում վրանգելի կղզին, Ֆրանց Իոսիֆի երկիրը, Հյուսիսային երկիրը, քանի որ գրանք այդ ժամանակ (մինչև XIX դարի կեսը) գեռ չեին հայտնաբերված։ Գծված և նշված է Շպիցբերգենը («Սրբազերկեանք»), Արկտիկան հետազոտող գործիչներից նշված է Բերինգը՝ «Աստ Կորեաւ Պեղինկ (1774)։»

Հյուսիսային բևեռային շրջանի Արկտյան հատվածում Պարլիի երկիրը և Գրենլանդիան կազմում են միացած ցամաք, ուստի և այդ ժամանակվանից ժառանգած Բաֆֆինի ծոց անունը պահպանվում է քարտեզների և գլոբուսների վրա մինչ այսօր, չնայած հետազա հետազոտություններից պարզվել է, որ նա իրոք նեղուց է։

Անտարկտիկայում շատ վայրեր այդ ժամանակ դեռևս

հայտնի չէին, հայտնաբերված և հետազոտված չէին: XIX դարի անգլիացի հոչակավոր ծովագնաց Ջեմս Կուկի ճանապարհորդությունների ու հետազոտությունների մասին տվյալները գեռն գերակշռող են հանդիսանում: Գլոբուսի վրա Ջեմս Կուկի մասին շատ տվյալներ կան: Մանրամասն նշված են նրա ճանապարհորդության ուղիները և ժամանակագրական տեղեկությունները. «Յամի 1774, 30 Յունիսի եհաս Գուգ մինչև 71° 10', հր. լայն»: Նշված են նաև «Աղեքսանդրա կղ. (1821)», «Ա. Պետրոս կղ. (1821)», որ հայտնաբերել են ուղա հայտնի ճանապարհորդ ծովակալներ՝ Ֆ. Բելինստանզենը և Մ. Լազարել, Հիշատակված է նաև անգլիացի խիզախ բնեուախույզ Ջ. Ռոսսը և նրա հայտնագործած վայրերը՝ «Հարաւային Վիգորիա» (Երկիրը) — «զոր էգիտ Ռոսս յամի 1841», նաև «Երերուս լ. հր. — Պերրոր լ. հր.» (այսինքն՝ Երերուս և Տեսոր լեռները, հրարուխներ են):

Անտարկտիկայում հիշատակված են մի քանի այլ հայտնաբերված վայրեր, որոնցից արժե նշել «Կուահամու երկիրը» (Գրեյյամի երկիրը):

Մայր ցամաքները գիտելիս նկատում ենք հետեւյալը. — Աֆրիկայի հարավ-արևելյան կողմերում չեն նշված խոչոր լճերը, քանի որ գետես հայտնի չէին: Դրանք հայտնաբերվել և ուսումնասիրվել են ավելի ուշ, XIX դարի 70-ական թվականներին Լիվինգտոնի և Սահնլիի ջանքերով: Այդտեղ լճերի տեղում գրված են ափրիկական, նեղրական ժողովուրդների անուններ՝ «Մոնձուացիք», Ամուլագացիք, Գալինկացիք»: Աֆրիկայի այդ շրջանում կա մի լիճ, որի անունը գրված է «Մարավի ծովակ»: այդ ծովակի եզրերը գծված են որոշակի, սակայն նրա անմիջական շարունակությունը գետի հյուսիս կրում է Ջեմպը ծովակ անունը, որի ափերը գծված են գծիկներով, անորոշ լինելու պատճառով:

Հարավային Ամերիկայում, օրինակ մենք չենք գտնի Արգենտինան: Նրա տեղում՝ հյուսիսային մասում՝ գրված է՝ «Միաբանեալ տերութիւնք Ռիո-Շե-Լա Բլագա» (Արգենտինայի այն ժամանակա անունը), իսկ հարավային մասում՝ «Բաղադունիս Մակալեան» (այսինքն՝ Մակելանյան Պատագոնիա): Սակայն Հարավային Ամերիկայում նշված են հետեւյալ պետությունները՝ «Բրասիլիա», Պոլիցիա, Բերու, Բարակուայ, Ռեռուկուայ, Կոռումբիա»: Վերջինն այդ ժամանակ իր մեջ էր ընդգրկում՝ վենեցուելան:

Խաղաղականում, նոր Ջելանդիայում հիշատակված են՝ «Իգանամանի կամ Յիւս. կղզի»,

«Դանա Բունամո կամ Յարաւային կղզի» անուններով:

Ավտորալիտյում չի նշված էլլի լիճը, թեպետ և նա հայտնաբերված էր 1840 թվականին:

Վերսիգյալ անունները բերում ենք որպես օրինակներ, նմուշներ:

Ամբողջ գլորուսն այդ տեսակետից ներկայացնում է մեծ հետաքրքրություն, տալիս է հարուստ նյութ աշխարհագրական և քարտեզագրական խորհրդածություններ և եղբակացություններ անելու համար:

ԳԼՈՐԻՍԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ  
ՏԱՐԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուրույն հետաքրքրություն է ներկայացնում գլորուսի տեքստը՝ աշխարհագրական անունների տառագարձությունը: Ինչպես հայտնի է, առանց տեքստի, անունների, քարտեզն ու գլորուսը համարվում են փակ, տեքստը քարտեզի, գլորուսի լեզուն է: Սակայն, կոնտուրը, աշխարհագրական աստիճանացանցը, գույնները նույնպես հանդիսանում են քարտեզների, գլորուսների գորեզ տարրերը, որոնք առանձնակի լեզու ունեն, ընթեռնելի են, կարենը են զանազան քարտեզներ կարդալու և օգտագործելու համար:

Մեծ գգուշությամբ և ահագին գժվարությամբ ամբողջ աշխարհի անունները, իրենց ուժերի չափով, ստուգել, ճշտել, հայերեն թարգմանելու և տառագարձել էին «Համատարած աշխարհացոյց»-ի հեղինակ վանանդեցիները, բայց արեելահայ տառագարձությամբ:

Իսկ հայերեն առաջին գլորուսի աշխարհագրական անունները չ. Ա. Այտընյանը, բնականաբար, տվել է արեմտահայ տառագարձությամբ (ըստ իրեն պ, պ-ն իրեն բ, գ-ն իրեն կ, կ-ն իրեն դ, դ-ն իրեն տ, տ-ն իրեն դ, պահպանելով ամենուրեք այդ փոխարինությունը):

Բերենք մեր շաբաթ այդ և այլ կարգի հետաքրքիր օրինակներ, որոշ խմբավորումներով:

Լատոկա Լ. (լիճ), Մոսկվա, Կոռոնո, Սպաւրորով, Նիժնի-Նովգորոս (այժմյան Գորկի քաղաքը)\*, Մետվետ գ., Եագուցք, Կլեկլո, Լոնտոն, Մատրիտ, Ամստերդամ, Գորսոկա կղ., Պրելաւ, Տրեզան, Գագգեգագ նեղ., Գրիեսդ, Պեյրուդ, Մատակասքար, Գուզոն, Դեքսաս և այլն:

\* Սոորի փակագծերի մեջ նշել ենք արեելահայերի տառագարձությամբ:

Արեմտահայերի համար այդ տառագալը ձյամբ աշխարհ  
հաղթական անուններն ընթեռնելը և արտասանելը դժվարին  
չէ. մինչդեռ արելահայերի համար՝ բավական դժվարը թեռնե-  
լի են:

Գլորուսի տեքստից ժողովուրդների անվանումներից արժե-  
նաել մի քանի օրինակ.

Դունզուզք, Խըրզզք, Էսդիմացիք, ազատ թաթարք և այլն:  
Պետոթյունների և երկրների անուններից նշենք՝ Տա-  
նիմարգիս, Բորդոկալս, Թիպեդ, Ճարոն, Էօմեն (Եմեն), Կուտ-  
յանա (Գվիանա), Կոեկօնլանտ (Գրենլանդիա), Զենճեպար-Զան-  
գեպար (Զանգիբար), Օնտուրաս (Հոնդուրաս) և այլն:

Կան աշխարհագրական անուններ այլաձեած կամ խիստ  
փոփոխված.

Պալլբեկվա (Բալակլավա), Պաղչեսերայ (Բաղչիսարայ), Խա-  
զան (Կազան), Աժգերխան, Շամախս, Գազպեք, Պոլքայտ գ.  
(Բոլշայա գ.), Դիֆերդ, Խըրմ, Պոլժոյ լիճ, Դոպուլք (Տորուլկ),  
Օխոցքայ ծով, Բրակ (Պրագա), Եւոյյան կղ. (Եոյյան կղ-ներ),  
Նեապոլիս, Շգոգհոլմ, Ապեննինեան լք., Մաշգաթ, Շարլողեանք,  
Պուլպայ (Բուլբեյ), Տեօպլին (Դուրլին), Դեհրան, Փիլադելֆիա,  
Բոոդուիդո, Սուլիմարգն, Դարավլուս (Տրիպոլիս Լիբիայում),  
Էւրո (Էրոս), Էտո (Էգոս), Հինգա լիճ (Խանկա լիճ Հեռավոր  
Արևելքում) և այլն:

Ընթերցողներն առանձնապես այդ անունների նկատմամբ  
դժվարությամբ են իմանում թե այդ որ քաղաքներն են, կզզի-  
ները, ծովերը, աշխարհագրական վայրերը:

Աշխարհագրական անուններ կան, որոնց օտարերկրյա տա-  
ռագալձության հետ զուգահեռաբար արված են նաև հայերեն  
թարգմանությամբ. օրինակ՝

Ֆերբո կամ Երկաթի կղ.

Գորւս կամ Ագոավ կղ.

Յորմիկաս կամ Մըջմանց կղ.

Յարէօր կամ Խաշանց կղ.

Յարվերայան կամ Դալարի դլիոյ կք.

(այսինքն՝ Կանաչ հրվանդանի կզզիներ).

Եապլոնոյ Խըեպեդ կամ Խնձորոյ լերինք.

Լիսի կամ Աղւեսուց կք.

Պուլէ կամ Թլիւատութեան կղ.

Տրինիդադ կամ Երըորդութեան կղ.

Ինաքսեսիսլ կամ Անմատոյց կղ.  
Վախուց կամ Զատկաց կղ.  
Երբորդութիւն կամ Բուլմերեան երկիր.  
Թեան շան կամ Երկնից լըք.  
Աղեկանի կամ Կապոյտ լերինք.  
Իլլըրը կամ Խնդրոյ արք. և այլն:

Կան աշխարհագրական օրյեկտներ, որ հայերեն գլորուսի  
վրա տրված են կրկնակի և տարրեր անուններով, օրինակ՝

Ծով Գամչատկա կամ Պերինկի ծով.  
Գուեն Լուն կամ Խուլխում.  
Էօմենի ծով կամ Արարական խորշ.  
Խնդռու կամ Սինտ.  
Կարոլինեան կք. կամ Նոր Փիլիպպեանք.  
Ազորեանք կք. կամ Դելսեյրան.  
Լա Մանշ կամ Անդրիացոց անցք.  
Պահամա կամ Լուգուեանք կք.  
Ավստրալիա կամ Նոր Հոլանդիա.  
Ֆանտիմեն կամ Պասմանիա.  
Բարուսիա\* կամ Նոր Կուինեա.  
Քուք կամ Մանճա արք:

Այդ երեսւյթը տեղի ունի աշխարհագրական օրյեկտի ան-  
վան անցողիկ ժամանակաշրջանում, երբ մի անունը, հինը վե-  
րանալու վրա է, իսկ նորը գեռ տրափեցիա չունի, քաղա-  
քացիական իրավունք չի ստացել, սովորաբար աշխատում են  
քարտեզագրության կանոնների ու պլակտիկայի հիման վրա  
խուսափել կրկնակի անունների գործածությունից, քարտեզը,  
գլորուսը չձանըարեննելու համար: Արդյոք հնարապոր կլիներ  
բոլոր քարտեզների վրա հետեւալ աշխարհագրական մեկ օրյեկտի  
մասին տալ նրա բոլոր չորս տարրեր անունն էլ՝ օրինակ,

Խնդռնեղիա  
Մալայան արշիպելագոս  
Մեծ Զոնդյան կղ-ներ  
Հոլանդական Հնդկաստան:

Սովորաբար այդ չորս անուններից տալիս են մեկը՝ քա-  
ղաքական քարտեզների համար և ին վարիանտը, իսկ Փիզի-

\* Պապուանիա՝ պապուասների երկիրը:

կական քարտեզներում երբեմն 2-րդ կամ 3-րդ վարիանտը, նախակինում գործ է ածվել 4-րդ վարիանտը:

Աշխարհագրական անուններ կան, որ արված են միայն օտարերրյա տառապարձությամբ, առանց հայերեն թարգմանության. օրինակ՝

Թեյնիր լ., Կալեբակս կք. (Գալապագոս կղ-ներ), Նոր Ֆունտալանտ, Վիսուգ լ., Սևերս-Վոստչի գլ., Գոգենոյ կղ., Ակուլաս գլ. և այլն:

Կա հակասական տառապարձություն: Օրինակ, գրված են՝

Ալեքսանդրիա և Ագեքսանդր,

Աֆանիսթան } և Հնգկաստան,  
Տաղիստան } և Հունագիա,

Հունդ և Բուքայ նեղ.,

Փիզագելփիա (քաղ.) և Փիզագելփիա (կղ.),

Չեղասդ և Նոր-Չերգասդ,

Կրատումսերից՝ Հո, և հիւս., Հը, և հըս., լ. (լիճ) նաև լ. (լիս), կղ. նաև կ. կղզի և այլն:

Այգպիսի օրինակները և խախտումները անընդունելի են քարտեզների և գլոբուսների տեքստերում:

Հատուկ ուշագրության արժանի են աշխարհագրական հետևյալ անունները՝

Ատլանտեան Հիւսիսային օվկիանոս.

Ատլանտեան Հարավային օվկիանոս.

Ամերիկա Ռուսաց (այժմյան Ալյասկան, որը 1741 թվականից մինչև 1868 թ. պատկանել է Ռուսաստանին).

Արևելյան ծով կամ Բալգիկ ծով («Արևելյան» — թարգմանված է գերմանական Ost see անունից).

Առնուգկալէ (այժմյան Նովոռոսիյսկի տեղում).

Մեսեալ ծով (Ղրիմի թ-կղզու մոտ, այժմյան Սիլաշը),

Կ-ք ի ներքոյ հողմոյ.

Հիւսիսային Ասիական ծով (Կարայի ծովն է).

Դարգու (նախկին Պետրովսկ, այժմյան Մալաչ-Կալա քաղաքի տեղում).

Հաւանեա (Կուբա կղզու Հավանեա կենտրոնը).

Արևմտյան Հնդիկ (Վեստ-Ինդիա).

Անծանոթ լեռնագաշտ ամայի (Արարիայում).

Բորդոմաւթ (Պորտուգալիա).

Հինգուքիութիւն:

Հյուսիսային Ամերիկայի արևմտյան ափին գրված է փակագծում (գաղթ Ռուս.) Ռուսական գաղութ\*.

Ալյասկայի հյուսիսային ափին գրված է «Հսդիմացւոց ծով» (այսինքն՝ ծովափ) և այլն:

Աշխարհագրական միջազգային սրբազնության, որոնց անվան կից տրված են պատմական տեղեկություններ (ճանապարհորդությունների), հետախույզների, աշխարհագետների անուններ և թվականներ).

Ս. Հեղինէ կղ., որ գտին Լուսիտանիացիք (1301).

Ք. Կոլումբոսի 1492 թ. 1-ին ճանապարհորդութիւնը դեպի Ամերիկա (ուղին նշված է սև բարակ գծիկներով).

Սպիցպերկանք — Պարենց յամի 1596.

Պերինկայ նեղ. (1740).

Սառամունիք կղ. — Սառամանեաց դլ. (Գուգ 1773).

Յամի 1774, 30 Յունուարի էնաս Գուգ մինչև  $71^{\circ}$  10 հր. լայն.

Պերինկայ կղ.— Աստ կորեալ Պերինկ (1774).

Հաւայիեան կղք, Օվակինի կղ.— ուր սպանուած Գուգ (1779).

Էնդերպեան երկիր — զոր էգիտ Պիստոյե (1831).

Ատելիա — զոր էտես Տիւրպիյլ (1840) և այլն:

Աշխարհագրական անուններ կան, որ տրված են միայն թարգմանաբար առանց օտարերկրյա անվան հիշատակության: Օրինակ՝

Օրիորդաց լ., Պատանիկեաց լ., Զեան Լերինք, Զկանց ծոց, Աւեսեաց նեղուց, Հրաշշունչ լու., Պղնձի կղ., Անձկութեան ն. հ., Սուլը հոգու արքիալեղագոս, ո. Եղիայի լ., Ամայի ափունք, Գերեաց ծովակի, Ապառաժ և Փայլուն լերինք, Արջային լեռնագաշտ, Նաւորդոց կղք և այլն:

Կան նաև տարօրինակ տառագարձության նմուշներ՝

Ալեքսանգրովսկա, Ալաշտ, Դրիստան Տ. Ագունա (յոյժ Բարձր), Կուտթատապ, Սաղալիա (այսինքն՝ Սախալին) և այլն:

Գլորուսի վրա կան նաև վրիպակներ.

Ելանիա գլ.—պետք է լինի Ժելանիա (հրվ. Նոր Երկրի, Նոր Զեմլյայի համարելում).

\* Ալյասկան ցարական Ռուսաստանը վաճառեց ՀԱՄՆ-ներին 7 200 000 դոլարով (այն ժամանակ 11 միլ. ռուբլի ռոկով):

Կետ ձկան կղ. պետք է լինի Կետ կենդանու կղ.

Ադրիական ծ. » » Ադրիական ծ.

Բոլի » » Բոթի (Փոթի).

Խուզայիս » » Քութայիս.

Կաւկասի — շարունակությունը չկա.

Քերկետենա երկիր (որում Տիգուեցն անունն էր Գուգ 1719)։

Արտաշատ — նշանը բնակավայրի է, պետք է լիներ ավելակի նշան.

Անի — անունը գրված է, իսկ ավերակի նշանը չկա  
և այլն։

1849 թ. Ա.Տ.Ա.ՍԻ ԵՎ. 1850 թ. Գ.Ա.ԲՈՒՄԻՄ ՊԱՏՐԱՍԵԼՈՒ ԵՎ.

ԼՈՒՅՑ ԸՆԾԱՑԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԵ

1849 թվականին «Աշխարհացոյց պատկերաց Առլասու» տպագրվել է Վենետիկում, իսկ 1850 թվականին «Նոր Երկրագունդը» պատրաստվել է Վենետիկում։ Հիմնական աշխատանքները կատարվել են գրանց նախորդ տարիներում, առլասին՝ 1848-ին, իսկ գլուխուսինը՝ 1849 թվականին։ Վենետիկը — իտալական ծովային քաղաք է, որը ենթարկվում էր այդ ժամանակ Ավստրիային; իսկ Վիեննան՝ Ավստրիական կայսրության մայրաքաղաքն էր։ Այդ երկու քաղաքներում էլ ապրում և աշխատում էին Միսիթարյանները։ Ժամանակաշրջանը պատկերացնելու համար անհրաժեշտ է համառոտակի վերհիշել թե ինչ էր իրենից ներկայացնում Ավստրիան, ինչ իրադարձություններ են կատարվել Ավստրիայում XIX դարի կեսերին, ինչ մթնոլորտ էր տիրում տնտեսական, հասարակական, քաղաքական կյանքում։

Վերոհիշյալ դարի 30 և 40-ական թվականներին Ավստրիայում սկսում է զարգանալ գործարանային արդյունաբերությունը, աճում է բուրժուազիայի դերը, առաջանում է բանվոր դասկարգը։ Ավստրիան այդ ժամանակվա Եվրոպայի մեծ պետություններից մեկն էր, որտեղ, սակայն, գերիշխող դասակարգը փեռագալական ազնվականությունն էր, որի ցայտուն ներկայացուցիչը տիրահոչակ և հետազեմ Մետերնիխն էր։ Միապետական Հարսուրդյան Ավստրիան այն ժամանակվա Ռուսաստանի հետ գլխավորում էր եվրոպական ուսակցիան։ Ավստրիայի բանվոր դասակարգն ու ճորտ գյուղացիությունը, բազմադի ժողովուրդները (ուղագոններ՝ չեխեր, սլովակներ, լեհեր, խորվաթներ, սլովեններ, նաև իտալացիներ և հունգարներ) մինչ այդ ապրում

էին դժնդակ տարիներ: 1848 թվականին Ֆրանսիայից փետրվարյան ռեոլյուցիայի ալիքները հասնում են մինչև Ավստրիա և լուրջ հարված են հասցնում ավստրիական ազնվականությանն ու արսոլյուտիզմին: 1848 թվականի մարտի 13-ին Վիեննայում բռնկվում է ռեոլյուցիան, բուրժուազիան անցնում է ռեոլյուցիայի գլուխ, շարժվում են բանվորները, ճորտ գյուղացիները և ճընշված ազգությունները: Դասակարգային հակասություններին ու պայքարին միախառնվում են ազգային հակամարտություններն ու ընդհարումները: Ռեոլյուցիան վերջ է դնում Մետերնիխի բռնակալական տիրապետությանը, տատանվում է Հարսքուրդների գահը: Սարսափած կայսրը արքունիքի հետ Վիեննայից փախչում է Ինսբրուկ (գավառական քաղաք ավստրիական Տիրոլում): «Կարկատանների» կայսրությունը սկսում է ճարճատել ձնշված ժողովուրդները ֆեդերալիստական և նույնիսկ անջատողական ձգտումներ են ցուցաբերում, դրան հակառակ է լինում ավստրիական տիրող դասակարգը: Ռեակցիան հավաքում է իր ուժերը, բուրժուազիան, որ վախեցած էր ռեոլյուցիայից, անցնում է ռեակցիայի կողմը, գյուղացիությունը, որ ազատագրվել էր ճորտատիրության մնացորդներից, թողնում է ռեոլյուցիայի շարքերը: Պրագայում և Վիեննայում զորավար Վիեննայից բռնի ուժով ձնշում է ռեոլյուցիոն շարժումը:

Ռեոլյուցիան թեղետ և պարտվում է, սակայն մարդկային միաքը ազատվում է ռեակցիայի կաշկանդումներից: Այդ իրադարձություններն, անշուշտ, իրենց ազգեցությունն են ունենում նաև հայ Մխիթարյանների վրա, որոնք ազրում էին (թեղետ և փակ կյանքով) և աշխատում Ավստրիայի բազմահազար բնակչությամբ մայրաքաղաք Վիեննայում և առաջնակարգ առեւրական նավահանգիստ Վիեննետիկում:

Այդ տեսակետից կարևոր ենք համարում համառոտ տեղեւկությունները տալ մայրաքաղաք Վիեննայի մասին:

Վիեննան գտնվում է Եվրոպայի տրանզիտային կարևոր ուղիների հանգույցում՝ արևմուտքից գեպի հարավ և արեելք ընթանում է ջրային ուղին — Դանուբ գետով, իսկ հյուսիսից հարավ — Բալթիկ և Հյուսիսային ծովերի ափերից գեպի Միջերկրականի ավազանը՝ Վենետիկ նավահանգիստը: Վիեննան, որ հիմնված է մեր թվարկության առաջին գարում, իսկ VIII դարում Ostmark-ի կենտրոնն էր, 1276 թվականից ավստրիական Հարսքուրդ կայսերական տան մայրաքաղաքը, — 1840 թվականին համարվում էր Եվրոպայի խոշոր քաղաքներից մեկը և ուներ 357 000 բնակիչ: Այդ

ժամանակ Վիեննայում կային աղքային մեծ գրադարան (հարուստ ձեռագրերով), Գիտությունների ակադեմիա, որը հիմնվել է 1847 թվականին և մի շաբթ գիտական հիմնարկները: Վիեննայում զարդացած էր տպագրական և տունձնապես քարտեզագրական գործը: Խաղմա-աշխարհագրական (հետագայում քարտեզագրական) ինստիտուտը մեծ աղեցցություն է ունեցել քարտեզագրության զարդացման վրա:

1848 թ. ռեօլյուցիայի աղեցության տակ Վիեննայի Մխիթարյաններից երիտասարդ Ա. Այտընյանը անկաշկանդ և ավելի ապատ գիտում է գիտական խնդիրների ուսումնասիրության: 1850 թվականին Ա. Այտընյանի ղեկավարությամբ և անմիջական մասնակցությամբ, Ա. Պալճյանի աշխատակցությամբ\* պատրաստած զլորուսը աշխարհագրական գիտության և քարտեզագրության բնագավառում հանդիսանում է առաջադիմական աշխատառություններից մեկը: Նման կարգի արժեքավոր գործ է նաև Վիեննետիկի 1849 թվականի «Աշխարհացոյց պատկերաց Առարկա»:

Մեկ տարի է բաժանում իրարից այդ քարտեզագրական քույր հրատարակություններին: Վիեննայի Մխիթարյանները գտնվում էին ավելի նպաստավոր պայմաններում, քանի որ պետական քարտեզագրական ինստիտուտը դանվում էր Վիեննայում, իսկ Վիեննետիկյան Մխիթարյանները ստիպված էին քարտեզների փորագրությունները կատարել իրենցից բավական հեռու: Փարիզում: Բնագանքարաբես վիմագրողներն ու փորագրողները եղել են օտարազգիներ, ինչպես Հենրի Սյուուն և այլք, որոնք որքան էլ լավ իմանային հայերենը, այնուհանդերձ կատարում էին սխալներ, տեղի տալիս վրիպակների: Ամենախիստ հսկողության բովով անցնող քարտեզներում նույնիսկ սպլիտում են վրիպակները: Թերեւս գրանով հասկանալի լինեն մի շաբթանցառությունները, որ հայտնարերել ենք զննության հետևանքով, 1849 թվականի ատլասում և 1850 թվականի գլորուսում: 1848—1850-ական թվականներին ինքը Արքեն Այտընյանը հազիվ 23—24 տարեկան երիտասարդ էր, որ գեռ չուներ մեծ փորձ: Հետագայում նա խիստ հմտացավ գիտության մեջ և տիրապետեց 10-ից ավելի օտար լեզուների:

Զնայած պարզված տեքստային թերություններին, թե ատլասը և թե՛ զլորուսը իրենց մեծ չափերով և տեխնիկական զբա-

\* Ա. Պալճյանի մասին «Հանդէս Ամսօքէայի» էջերում չի հշատակված:

կան հատկություններով հայ քարտեզագրության մեջ գրավում են արժանավոր տեղ:

#### 4. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՅԼ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՀՐԱՑԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համբառոտակի քննենք նաև մի քանի հայ քարտեզագրական այլ նմուշներ:

1860 ԹՎԱԿԱՆԻ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ ՀՐԱՑԱՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆ ԱՏԼԱՏԸ

Լրիվ անունն է՝ Առլաս կամ «Աշխարհացոյց տախտակը»,

ի պետո ազգային գպրոցաց.

հօրինեալ և ծրագրեալ Ա. Ավագեան

Մխիթարեան ուխտից

Բ. հրատարակութիւն

Վիեննա 1860 թ.:

Առլասը պարունակում է 21 տախտակ-քարտեզ:

Ավարիսային վերաբերող քարտեզներում ավարիսական պետությունը բաժանվում էր 21 կուսակալությունների: Բայ այդ բաժանման՝ 21-րդը վենետիկն է:

19-րդ տախտակը Հայաստանն է: Հայաստանի տերիտորիայով գունավոր գծված է երեք պետությունների՝ Խուսաստանի, Թուրքիայի և Պարսկաստանի սահմանները: Թուրքիայի մասում Արևմտյան Հայաստանի սահմանները նշված են գունավոր լայն գծով և ընդգրկում են այն ժամանակվա էրզրումի, վանի, Բիթլիսի ընդգրծակ վիլայեթները:

Աշխարհագրական երկայնությունը գծված է Փարիզից:

Այդ առլասից նշենք տառադարձական մի քանի առանձնահատկություններ (փակագծերում նշում ենք մեր դիտողությունները):

Եվրոպայի Թուսիայի քարտեզում կան՝  
Կումրի.

Տելիշին (Դիլիջանն է):

Օսմանյան պետության Ասիայի քարտեզում գրված է՝  
Կյումրի.

Ծով Սևանայ.

Մասիս կամ Արարատ լ.

Հայաստանի քարտեզում գրված է՝

Արարատ կամ Մասիս լ.

Աքեղելի լ. (գնւցե Ախաղելներ լ.).

Աքուլին (Ագուլիսն է).

Մեյմեն լ. (Մայմելիս լ.).

Բոլոր քարտեզներում գրված է կըզիրում:

Պարսկաստանի մայրաքաղաքը գրված է Թեհերան (ռուսերեն  
Տեղերան-ին նմանօրինակ) և այլն:

1862 թվականին Վենետիկում ՀՅԱՏԱՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆ ԱՏԼԱՏԸ

Ատլասի լրիվ անունն է՝ «Աշխարհացոյց տախտակը»,  
բաղկացած է 12 տախտակից, տպագրված է Փարիզում:

Քարտեզների մի մասը փորագրել է Հ. Սյուսոն, մյուս մա-

սը՝ Յ. Դ. Լալլ:

1-ին տախտակը «Համատարած աշխարհացոյց»-ն է՝ կիսա-

գնդերով: Նշում ենք մի քանի յուրահատուկ անվանումներ:

Ալեսակա.

Քամչաթքա:

Ճիշտ է Կասպից ծովի գծագրությունը:

Գրված են՝

Մեծ օվկիանոս գիշերահավասարի:

Օվկիանոս Սառուցեալ Արջային.

Բեռն Հիւսիսային Արջային.

Ամերիկայ Ռուսաց:

«Ամերիկայ Ռուսաց» քարտեզում գույները վառ են, բայց  
լավ չեն համընկել սահմաններին և ափերին:

2-րդ տախտակը «Աշխարհագունդ մակարդակը»: Աշխարհը  
գծված է Մերկատորի գլանային պլոյեկցիայով:

3-րդ տախտակը Եվրոպան է: Զեն նշված Մոլդավիան  
և Սերբիան:

4-րդ տախտակը «Աշխարհածանօթ առ նախնեօք»:

Այս տախտակում միջօրեականը գծված է երկու կերպ՝

«Միջօրեայ Փարիզոյ» և «Միջօրեայ Արարատեան լեռին»:

5-րդ տախտակը Գաղղիան. է (Ֆրանսիա), «բաժանել  
ի նահանգն» (այսինքն՝ դեպարտամենտների):

9-րդ տախտակը Երկիր Ավետեացն է (Պաղեստին), «բաժան-

նեալ ըստ ԺԲ (12) ցեղին Երկիր հսրաելի»:

12-րդը Հայաստանն է, «ըստ նախնի աշխարհագրաց»:  
Հայաստանը բաժանված է 15 նահանգների: Հիշատակում ենք մի

քանի անուններ և նշաններ.

Ծովակ Գեղամայ,

Ծով Բզնունեաց,

Ծով Կապուտան,

Լերինք Տորոսի,

Շամիրամակերտ (Վանն է),

Երեանի անունը և նշանը — շատ գոռքը է նշված,

Դուինը նշված է Դաբալագյազի արևելյան մասում և այլն:

\* \* \*

գ) Մեծ հետաքրքրություն է ներկայացնում 1901 թ. Վենետիկում շքեղ կազմով, գունավոր քարտեզներով, քաղաքների տեսարաններով, բազմաթիվ մանրամասն թվական տեղեկություններով, աղյուսակներով հրատարակած Հ. Ս. Էփրիկյանի Գրպանի առաջը: Այդ առաջարկ քննությունը տալու ենք մի այլ անգամ:

ՔԱՐՏԵԶ ԹՈՒԲՔԻԱՅԻ

Արևմտահայերը՝ թե Վիեննայում և թե Կ. Պոլսում մի քանի անգամ հրատարակել են Թուրքիայի քարտեզը, նպատակ ունենալով նրա սահմաններում ցույց տալ Հայաստանը:

Կ. Պոլսում հրատարակված է քարտեզ, որի լրիվ անունն է՝ «Հնդարձակ քարտեզ Օսմանեան պետութեան»: Մասշատքը 1 : 2,500,000, չափսը՝ 18 սմ × 112 սմ.:

Հրատարակության թիվը չի նշված, նկատի ունենալով, որ լույս է ընծայվել միաժամանակ Բալկանյան պետությունների քարտեզի հետ, հավանաբար, Բալկանյան պատերազմից հետո (համաձայն քաղաքական սահմանների), պետք է հրատարակության տարին ընդունել 1913 թվականը:

Կից տրված է Արարիայի քարտեզը:

Քարտեզը ամբողջությամբ գունավոր է, ծալովի, ամուր ստվարաթղթի կազմի մեջ:

Նշում ենք մի քանի թերություններ:

Տպագրությունը թերի է, Անդրկովկասի գծագրում նկատելի են տեղաշարժեր և ակնհայտնի անձտություններ:

Երեանի նշանը կա, իսկ անունը ոչ. փոխարենը գրված է վաղաշարաթ և ավելի արևելք:

Նոր Բայազետը Սևանա լճի ափին է:

Աշտարակը նշված է Հրազդանի ափին, Ախտայի տեղում:

Արտաշատը տեղադրված է մի փոքր գետի ափին, որը թափվում է Սևանա լիճը:

Լենինականից Երևան երկաթուղու դիմքը անցնում է Արագած լեռան տեղով:

Արագած լեռը նշված է իր տեղակրությունից հյուսիս:

Լենինականից Թիֆլիս երկաթուղին անցնում է Լոռիով—այժմյան Ստեփանավանի մոտով:

Շուշին տեղագրված է Խանքենդից (այժմյան Ստեփանակերտից) ոչ թե դեպի հարավ՝ 8—10 կմ, այլ դեպի արևելք՝ 80—90 կմ, Միլի տափաստանում:

Բարդա գյուղը (հին Պարտավը) նշված է Բաքու-Թիֆլիս երկաթուղու վրա:

Բաքուն նշված է Կասպից ծովի ափից հեռու:

Նշենք մի քանի անունների, տառագարձություններ.

Աղեքսանտրոբուլ—Կումրի,

Տաղե,

Քալապաղ,

Վանտոսպ (Վանը):

Քարտեզը թերություններ է պարունակում նաև Թուրքիայի կարեռը կենտրոնների նկատմամբ:

Կ. Պոլսի և Իսկիւտարի՝ անունները կան, իսկ նշանները և աեղերը չեն նշված:

Իզմիրը նշանակված է ծովափից հեռու:

Այնուամենայնիվ քարտեզը տալիս է Օսմանյան պետության տարածության ընդհանուր պատկերը: Լեռները նշված են դեղին գույնի շարիխներով, իսկ վիլայեթների սահմանները գունավոր են:

ՈՈՒՍԱԿԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԱՅ

ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Հին ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐՑԵԶԻ ՎԵՐԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ա. Խուդաբաշյանի „Обозрение Армении“ աշխատության մեջ, որը լույս է տեսել Պատերքուրգում 1859 թվականին, գրքին կցված է երկու քարտեզ՝

ա) Քարտեզ Հին Հայաստանի,

բ) Քարտեզ Հայաստանի և նրան հարակից այլ երկրների:

Թե՛ աշխատությունը և թե՛ քարտեզները հրատարակած են ոռւսերեն, քարտեզները տպագրված են 1858 թվականին: Քարտեզների հեղինակը Ա. Խուդաբաշյանն է, կազմողը (գծագրողը)՝ շտաբս կապիտան Շտրաուսը:

Առաջինը՝ Հին կտոր Պատմական Հայաստանի քարտեզն ունի երկու մասշտաբ, թվային՝ 1 : 410.000 և գծային՝ մեկ մատչաչափը = 105 վերատի:

Ենոները գծված են սև շարիխներով, պատմական սահմանները գունավոր, անքստը՝ (անունները) նույնպես սև է: Նշված են Հայաստանի (Մեծ Հայքի) 15 նահանգները:

Կոնտուրների գծագրության մեջ նկատելի են հետեւյալ առանձնահատկությունները:

Սեանա լճի նեղ մասը (այսինքն՝ Փոքր Սևանը) ձգված է ոչ թե դեպի հյուսիս-արևմուտք, այլ դեպի հյուսիս:

Վանա լճի հյուսիս-արևելյան մասը խիստ մեծացված է: Ալաթամար կղզին նշված է լճի համարյա մեջտեղում:

Ուրմիա լիճը խիստ տարածված է դեպի հարավ:

Տայքը դուրս է մնացել Հայաստանի սահմաններից:

Արցախի, Ուտիքի և (Փոքր) Սյունիքի տեղադրությունները խախտված են:

Ուշագրավ է հետեւյալը. «Էդեսիա» քաղաքից հարավ նշված է Հայկական Միջագետք, իսկ Եփրատից արևմուտք, Միջերկրական ծովի ուղղությամբ՝ նշված է «Հայկական Սիրիա»:

Գրված են թե՛ փոքր Հայքը և թե՛ Կիլիկիան:

Հետաքրքրական է մի քանի աշխարհագրական անունների ուսուերեն տառագրածությունը:

Լճերի անուններ՝

озеро Пэнунийское, озеро Кегамское, озеро Капутан.

Գետերից՝

река Ерасх.

Քաղաքներից նշում ենք՝

Երևан, Вагаршабад (նշված է Երևանից հյուսիս-արևմուտք), Дувин (սխալմամբ Արփա գետի ձախ ափին), Ջուգա, Нахчеван, Канзак, Тигранакерд, Тавреж, Шамирамакерт или ван (վերջինը փոքրատառ), Сагамас (հավանաբար Սալմաս), Перери (այսինքն՝ Բերկրին), Пайперт.

Ծովերից՝

Море Каспийское или Ирканское.

Նախկին Ռուսաստանում հայ գործի ջանքերով տպագրած Պատմական Հայաստանը առաջին քարտեզներից մեկն է այդ: Հեղինակը նպատակ է ունեցել ծանոթացնել ուսու հասարակությանը, նաև Հայաստանից դուրս և հեռու ապրող հայերին Հին Հա-

յաստանի աշխարհագլության հետ համապատասխան քարտեզի միջոցով:

Անհրաժեշտ է հիշատակել, որ, բացի վերը մատնանշված առանձնահատկություններից, մնացած աշխարհագրական տվյալները քարտեզում ընդհանուր առմամբ կատարված են ճիշտ:

Քարտեզը ժամանակին կատարել է իր գրական գերը, թերևս, այսօր էլ ներկայացնում է հետաքրքրություն, առավել հայերեն լեզվին չտիրապետողների համար:

## 2. ՆՈՐ ԲԱՅԱՀԵՑԻ ԳԱՎԱՌԻ ՔԱՐՏԵԶԻ ՎԵՐԱԿՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Քարտեզի լրիվ անունը հետևյալն է՝ «Երևանի նահանգի Նոր-Բայազետ գավառ կամ Գեղարքունիք»:

Մասշտաբը գծային է՝ 1 մատնաչափը = 5 վերստի: Տեքստը հայերեն է, քարտեզը երկգույն է, լեռները գարչնագույն շարիխաներով, իսկ փիղիկո-աշխարհագրական մյուս օրյեկտները (գետերը, լճերը և այլն), նաև բնակավայրերի նշանները և ամբողջ տեքստը (անունները) գրված են սև գույնով:

Միջօրեականը գծված է մեռոյից:

Քարտեզը, բացի մասշտաբից, չունի ոչ մի այլ բացատրական, կամ պայմանական նշանների մեկնաբանում: Բնակավայրերի նշանների կամ անունների մոտ կան թվեր, որոնք ցույց են տալիս թե այդտեղ որքան տուն (այսինքն ընտանիք) հայ կա:

Քարտեզը կազմել է Ե. Լալայանը, գծագրել է Պ. Մարիմյանը, հրատարակել է Թիֆլիսում 1908 թվականին: Հրատարակություն Հայկական Ազգագրական Բնկերության: Քարտեզի վրա, շրջանակից դուրս՝ չի նշված ոչ տիրտը, ոչ էլ գինը:

Քարտեզի տեքստի՝ աշխարհագրական անունների գննությունից պարզվում է հետևյալը.

Լեռների անունները տրված են թուրքական (ճիշտ կամ թերի) տառադարձությամբ: Օրինակ, Գեղամա լեռնազդթայի գագաթներից՝ Կղըլ-գաղ, Ալս-գաղ, Ինակ-գաղ, Նույնիսկ հայկական նոմենկլատուրային տերմին քարը՝ թյուրքական արտասանությամբ՝ Այրի-կար:

Լճերի անունները տրված են թուրքերեն՝ Գեղամա լեռնաշղթայի բարձրագիր լանջերին գտնվող Ղանլի-գեռը, Թողմաղան գեոր, իսկ Սևանա լճի անունը տրված է հայերեն՝ Սևանա լիճ կամ Թուրքերեն Գոգչա և հին հայերեն՝ Գեղամա ծով:

Գետերի անունները և նոմենկլատուրային տերմինները նույնպես տրված են ոչհայկական տառագարձությամբ. օրինակ՝ Բալըզայ, Թարսաչայ, Մարմարաչայ, բացառություն են՝ Զանդի գ., Դիլի գ.: Երբեմն գրված են երկու անուն՝ թուրքական և հայկական. օրինակ, Նախկին ՅԱՀՐԻԴԱ գետերի միացումից առաջացած գետն անվանված է Ատիաման կամ Կոթագետ:

Քարտեզում ժամանակակից գալառների անունների հետ, օրինակ՝ Երևանի գալառի, Էջմիածնի գալառի, Ալեքսանդրապոլի գալառի (նշված է Կիրովականի տեղում), տրված են նաև մի շարք պատմական անուններ:

Վարաժնունիք (Ներկայիս Ծաղկաձոր) փակագծում նշված է՝ «Ար. Նիդ», պետք է հասկանալ Արևելյան Նիդ, քանի որ Արևմտյան «Նիդը» Ապարանի տեղում է:

Գեղարքունիք (գրված է Գեղամա լեռնաշղթայի արևելյան լանջերի ամբողջ երկարությամբ՝ հյուսիսից հարավ):

Ծարայ երկիր — Արտից գալառ (Մասրիկի գաշտում, այժմյան Բասարգեչարի շրջանում):

Ծմակ գալառ (որտեղ նոր Բայազետի շրջանն է այժմ):

Կոթ (այժմյան Մարտունու շրջանի տեղում):

Սոթք (Այժմյան Զոդի տեղում, Սկանա լճի ավազանի հարավարևելյան կողմում):

Մաղաղ գալ (Գեղամա լեռնաշղթայի արևմտյան լանջերին, այժմյան Կոտայքի շրջանի արևելյան մասում):

Նշենք մի քանի այլ հանգամանքներ:

Սկանա վ. (վանք)-ը նշված է, բայց կղզին չի նշված:

Ցամաքարերդ (գրված է միայն գյուղը, բայց թերակղզին չի գրված):

Դարալագյաղ — (գրված է միայն այժմյան Ազիզբեկովի շրջանի տեղում):

Շարուրը — (սխալմամբ այժմյան Միկոյանի շրջանի տեղում) և այլն:

Քարտեզը խոշորամաշտար է, ոեգիոնալ աշխարհագրության արգասիք: Ազգագրական հանգամանքն արտահայտված է պատմական գալառների հայերեն անունները նշելով: XIX դարի սկզբների նոր Բայազետի գալառի բնակավայրերի հայքնակչության ծխերը տրված են թվական նիշերով: Քարտեզը ծանօթացնում է Հայաստանի կարևոր մասերից մեկի՝ Սկանա լճի ավազանի հետ:

### 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԵԶԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Լրիվ վերնագիրն է «Հայաստան և հարեւան երկրներ»: Կազմված է ըստ Լինչի և Օսվալդի նույնալիսի ոռուսերեն քարտեզի. խմբագրել է Ա. Արեգյանը. լույս է տեսել մոտավորապես 1915 թվականին:

Մասշտաբը — թվայինը՝  $1 : 1.000.000$ , գծայինը՝ երկու կարգի՝ ա) անգլիական  $15,78$  մղոնը՝  $1$  դյույմի, բ) ոռուսական  $23,8$  վերստը՝  $1$  դյույմի, մեծությունը՝  $74$  սմ  $\times 97$  սմ.:

Գունավոր, երեք գույնի: Լեռները՝ բաց դարչնագույն, ծովերը՝ լճերը՝ բաց կապույտ, մնացած բոլոր օբյեկտները (գետերը, սահմանները, ուղիները, բնակավայրերը, տեքստը — անունները, վերնագիրը, շրջանակը) սև:

Քարտեզի հայերեն հրատարակությունը ավելի գունատ է, քան լինչի և Օսվալդի քարտեզը:

Քարտեզի ցածի կողմում, շրջանակից գուրս գծված է երկու քարտեզ՝ Կիլիկիայի և Փոքր Հայքի, սակայն առանց լեռնադրության գունավորման: Նաև տրված է երկու աղյուսակ՝ համառոտ վիճակագիր Անդրկովկասի և համառոտ վիճակագիր Տ.-Հայաստանի (այսինքն Արևմտյան Հայաստանի):

Բարձրությունները նշված են ոտնաչափերով:

Ամբողջ տեքստը — հայերեն է, բայց ցածի մասում, շրջանակից գուրս գրված է ոռուսերեն՝ «Թիֆլիս, Կովկասիան ոազմատոպոգրաֆիկ բաժնի վիմագրատուն, Ներսիսեան դպրոց»:

Իր ժամանակի աշխարհագրական անուններից բացի, մասնակի կերպով տրված են նաև նահանգների, բնակավայրերի, լեռների, գետերի պատմական անուններ:

Այդ քարտեզում նկատում ենք հետեւյալ առանձնահատկությունները:

Քարտեզը չունի պայմանական նշաններ, Հայաստանի սահմանները գծված չեն, չի իմացվում, թե որն է Հայաստանը և ո՞ր տերիտորիաներն են հարեւան երկրները: Թույլ են նշմարվում Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի պետական սահմանները: Հյուսիսից և արևելքից գրված են հարեւան երկրների անունները՝ Լազիստան, Խմերեթիա, Արևելեան Վրաստան (Քարթալինիա), Շիրվան, Ատրպատական: Խոկ արևելութից և հարավից չեն գրված հարեւան երկրների անունները:

Պատմական Հայաստանի անունները քիչ են նշված թե՛ Արևմտյան մասում և թե՛ Արևելյան մասում: Արևելյան Հայաս-

տանում նշված են միայն Տայքը և Վանանդը (Կարս), իսկ Այլարատը, Սյունիքը, Գուգարքը և մյուսները չեն նշված: Արեմբայան Հայաստանում նշված են միայն Բարձր Հայքը և Վասպուրականը, իսկ Տուրուբերանը, Աղձնիքը և Թյուսները չեն նշված:

Լճերի անունները տրված են լրիվ, թե՛ նորը և թե՛ պատմականը: Օրինակ, Սեանա լիճ (Գեղամա ծով), Վանա լիճ (Բգնունյաց կամ Տոսպա ծով), Ուրմիա լիճ (Կապուտան ծով):

Գետերի անունները նշված են ավելի անկանոն:

Ախուրյան (Արևելյան Արփաչայ), Փակագծում պետք է լիներ (Արևմտյան Արփաչայ), Փամբակ գետի անունը չի գրված: Լոռվա գլխավոր գետը՝ Չորագետը անվանված է Զիլդա և Կամենկա: Դեբեդը՝ Բորչալու, իսկ Փակագծերում գրված են՝ Չորագետ, Դեբեդ: Ճիրկի: Ճիշտ են գրված՝ Աղստե, Գառնո գ., Հրազդան, Երասխ, Զահուկ, սակայն մի քանի գետերի անուններ գրվուն են նաև թուրքական արտասանությամբ՝ Թարսաչայ (Գետիկն է), Վեղիչայ (Վեդին է), Արևելյան Արփաչայ (Արփան է), Ալինջաչայ (Երնջակն է):

Նույնը լեռնաշղթաների և լեռների նկատմամբ երկու կերպ՝ Գեղարքունիք և Շահադաղ, Հայկական Պար և Զալլըրան:

Նման երկույթ կարելի է նկատել նաև Արևմտյան Հայաստանի մասում:

Ֆիզիկո-աշխարհագրական մասը ընդօրինակված է Լինչից և Օսվարդից, իսկ անունների հայերեն տառադարձությունը կտարված է անքննադատ կերպով:

Թեև քարտեզը չի կրում հրատարակման տարեթիվ, սակայն ենթագրելի է, որ տպագրվել է 1915 թվականին, առաջին իմպերիալիստական պատերազմի ժամանակ:

Այդ քարտեզը պարունակում է լեռների, գետերի, բնակավայրերի շատ անուններ, տալիս է բավականաչափ նյութ ճանաչելու Հայաստանը և հարևան երկրները:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԱՅ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### 1. ՍՈՎԵՏԱՀԱՅ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏԵԶԸ

Քարտեզը կրում է «Հայաստանի ՍԽՀ վարչական ստորաբառանման սխեմա» վերնագիրը:

Գծագրված է ըստ 1922 թվականի գյուղատնտեսական ցուցակագրման տվյալների:

Հրատարակված է Հայաստանի ՍԽՀ Կենտրոնական վիճակագրական վարչության կողմից:

Մասշտաբը՝ հին չափերով՝ է՝ 1 մատնաչափում ընդունված է 20 վերստ. աշխարհագրական աստիճանացանցը՝ 30'~ով, երկայնությունը՝ հաշված է Պուլկովյացից:

Կազմված է երկու լեզվով՝ հայերեն և մասնակի կերպով ոռուսերեն: Վերնագիրը, մասշտաբը և պայմանական նշանները երկու լեզուներով են. քարտեզի տեքստը, լճերի, բնակավայրերի, հարեւան երկբների անունները միայն հայերեն են. զավառական և տեղամասային կենտրոնների անունները՝ միայն ռուսերեն են: Հայկական անունների ուղղագրությունը կատարված է առաջին բարեփոխման կանոններով՝ ըստ Մ. Աբեղյանի:

Քարտեզը գունավոր է, բազմագույն:

Հիդրոգրաֆիան՝ լճերը, գետերը կապույտ են:

Վարչականը՝ գավառների և տեղամասերի սահմանները՝ կարմիր են:

Գավառների և տեղամասերի տարածությունը ու նրանց միացումները՝ գեղին, կապույտ, կանաչ գույներով են:

Տեքստը՝ անունները, վերնագիրը, նաև աշխարհագրական աստիճանացանցը և շրջանակը ու են:

Պայմանական նշաններում՝

Ուղիները նույնպես տրված են երեք նշանով՝ երկաթուղին, խճուղիները և սայլուղիներինը՝ մեկ գույնով. սահմանները տըր-

ված են երեք նշանով՝ ըստ պետական, գավառային և տեղամասային սահմանների: Գծված են երկու գույնով,

Հիբրոգրաֆիան՝ գետերը մեկ նշանով, մեկ գույնով:

Բնակավայրերը՝ երկու նշանով (ըստ գավառների և տեղամասների կենտրոնների), մեկ գույնով:

Վարչական փոքր միավորները՝ տեղամասերը քարտեզում և ցուցակում համարակալված են, ընդամենը թվով 44: ՀԽԽ տերիտորիան վարչականորեն բաժնված է 10 գավառի՝ Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի, Լոռի-Փամբակի, Ղարաբիլիսայի, Դիլիջանի, Նոր Բայազետի, Դարալագյաղի, Զանգեզուրի, Մեղրու գավառների:

Քարտեզի չափով 33 սմ×37 սմ է:

Կտավի վրա է, օդերով է, գինը՝ 20 կոպ.:

Ստուգված տվյալների համաձայն տպագրված է 1923 թվականին Երևանում, Հայպետհրատի վիմագրատանը, 3.000 օրինակով: Կազմակերպողները եղել են՝ Ա. Գ. Տեր-Հովսեփյանը և Նազարեթյանը, իսկ վիմագրողը՝ Գ. Շահբաղյանը:

Քարտեզը տպագրված է պարզ և բովանդակությամբ բարդ չէ (ծանրաբեռնված չէ): Ունի որոշ թերություններ և վրիսպահներ: Այսպես, օրինակ, հիդրոգրաֆիայի օբյեկտներում ճիշտ չէ գծված Ախուրյան գետի ակունքը, իսկ Երաքս գետը Մեղրու շրջանում, որպես սահմանային գետ, բաց է թողնված, Սևանա լճում չի նշված Սևանա կղզին: Վարչական օբյեկտներից Ամասիայի տեղամասը չունի իր համարը (6), ապա նշված չեն 1-ին, 2-րդ, 31 և 32 տեղամասերի սահմանները, համարակալման մեջ չկա որոշ կարգ: Ուղիների նկատմամբ, չնայած պայմանական երեք նշաններին, քարտեզում գծված են միայն երկաթուղիները: Անունների տառադարձության մեջ չի պահպանված միակերպությունը, օրինակ, գրված են Յերևան, Ելենովիկ, Կարմիր գիւղ, Բոյուք Վեդի, գրված է հին ձեռով Տաճկաստան: Գույների գործադրման նկատմամբ պետք է ասել հետեւյալը, այն գեպքում, երբ քարտեզում ջրային տարածությունը՝ (տվյալ գեպքում Սևանը) ներկված է կապույտ գույնով, չպետք է ցամաքի տարածությունները, օրինակ, Ալեքսանդրապոլի գավառը գունավորել կապույտով:

Առասարակ որոշ թերություններից զերծ չէ և ոչ մի քարտեզագրական հրատարակություն, լինի այն հայերեն, ուսւերեն կամ օտար լեզուներով, հետեւապես հասկանալի է, երբ քարտեզագրական գործը պարունակում է վրիպակներ և թերություններ:

Այդ քարտեզի հրատարակությունը առաջինն է ոչ միայն Առ-

զետական Հայաստանում, այլև ամբողջ Հայաստանի տերիտորիան յում: Այդ քարտեզը առաջինն է, որ տպագրվել է Հայաստանում հայերեն, հայկական վիմագրատանը, հայ վիմագրողի և կազմող ների կողմից: Որպես Հայաստանի քարտեզագրական հրատարակության առաջնագույն գործ՝ արժեքավոր է և նշանավոր:

## 2. ԱՌԵՑԱՀԱՅ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՏԼԱՏԸ

Առաջին սովետահայ աշխարհագրական տալասը լույս է ընծայվել 1928 թվականին Հայկական ՍԽՀ Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի Սոցիալական դաստիարակության գլուխավոր վարչության կողմից, որպես աշխատանքային գպրոցի ձեռնարկ: Բաղկացած է 15 գունատիպ քարտեզներից, վիճակագրական տեղեկություններով: Հրատարակել է Պետհրատը:

Ծրագիրը, տեքստը, խմբագրությունը կատարվել է Երևանում, իսկ վիմագրական աշխատանքները Թիֆլիսում: Կազմել է Հ. Էլիբեկյանը, փորագրել է Ի. Ա. Լելիտը: Աշխարհագրական տալասի ընդհանուր չափսը 35 սմ × 26 սմ է:

Առաջին էջում տրված է բովանդակությունը: Այնուհետեւ 6 էջի վրա տպված են վիճակագրական տեղեկություններ երկրագնդի տերիտորիայի և ազգաբնակության մասին: Վիճակագրական աղյուսակը բաժանված է 7 սյունյակի, որտեղ նշված են երկրների անուններ, վիճակագրության թվականը կամ հաշվետարին, տարածությունը հազ. քառ. կիլոմետրերով, բնակչության թիվը միլիոններով, խտությունը՝ 1 քառ. կիլոմետրի վրա ապրող բնակչության թիվը, գլխավոր քաղաքը և նրա բնակչության թիվը հազարներով. նշված է կառավարության ձևը: Գծի տակին տրված է մոտ երեք տասնյակ ծանոթություն:

Աշխարհագրական տալասը պարունակում է հետեւյալ հիմնական քարտեզները՝

1. Կիսագնդերի, 2. Անդրկովկասի, 3. Համաշխարհային քաղաքական, 4. Խ. Հայաստանի, 5. ԽՍՀՄ ֆիզիկական, 6. ԽՍՀՄ քաղաքական, 7. ԽՍՀՄ քարտոգրամների, 8. Ասիայի ֆիզիկական, 9. Ասիայի քաղաքական, 10. Ելբուպայի ֆիզիկական, 11. Ելբուպայի քաղաքական, 12. Հյուսիսային Ամերիկայի, 13. Հարավային Ամերիկայի, 14. Աֆրիկայի, 15. Ավստրալիայի:

Դրանց կից նույն քարտեզների հետ կապակցված տրված են փոքր, մասնագիտական քարտեզներ:

Ատլասն ունի գրավիչ տեսք, քարտեզագրական-գծագրական աշխատանքը կատարված է խնամքով, գույները ցայտուն են և

վառ, ատլասում տոկա են դպրոցականների համար անհրաժեշտ քարտեզներ՝ աշխարհը, աշխարհամասերը, ՍՍՌՄ-ը, Անդրկովկասը և Հայաստանը:

Կատարված է մանրակրկիտ և գժվարին գործ, սակայն այդ ատլասը նույնպես զերծ չէ թերի առանձնահատկություններից:

Ամեն մի քարտեզի վերաբերյալ բերում ենք մեկ կամ 2 օրինակ:

Կիսագնդերի քարտեզում — դրված է Պերս ծ. (պետք է լինի Պարս. ծ., այսինքն՝ Պարսից ծոց):

Աշխարհի քաղաքական քարտեզում — Սիամ պետության անունը նշված է Բիրմայի տեղում:

Անդրկովկասի քաղաքական փոքր քարտեզում Ռիոն գետի հոսանքը ճիշտ չէ գծված:

Անդրկովկասի Փիզիկական քարտեզում իջևանը (գյուղ) նշանակված է և գրված խոշոր, մինչդեռ Լինինականը փոքր:

ԽՍՀՄ Փիզիկական քարտեզում ներքին, վարչական սահմանները չեն տարբերվում արտաքին, պետական քաղաքական սահմաններից:

ԽՍՀՄ կլիմայական քարտեզում կան նշաններ (գծեր և խաչեր), որ չեն բացատրված:

Ասիայի Փիզիկական քարտեզում նշված է Ար. Թուրք — հազիվ թե դպրոցականը հասկանա, որ այդ նշանակում է Արևելյան Թուրքեատան։ Ապա Սիրիան Թուրքիայից չի բաժանված։

Ասիայի քաղաքական քարտեզում մի շաբթ արաբական պետությունների սահմանները չեն գծված։

Ասիայի ազգությունների խտության քարտեզում — 1—10 մարդ խտություն ունեցող վայրերը ավելի մուգ են ներկված, քան 10—50 մարդ խտություն ունեցողները։

Ասիայի տնտեսական քարտեզում — բընձի ցանքսերի և հանքերի պայմանական գույնը նույնն է (կարմիր):

Եվրոպայի Փիզիկական քարտեզում Ռուսական մեծ կամ Արևելակրոպական հարթության անունը չի նշված, ապա ԽՍՀՄ-ն ավելի մանը տառերով է գրված, քան ՌՍՖԽՀ։

«Եվրոպայի արտադրությունները» քարտեզում երկաթի և գինու պայմանական գույները գծվարությամբ են տարբերվում։

Աֆրիկայի Փիզիկական քարտեզում վերին և ստորին գվինեայի անունները գրված են Ալանտյան օվկիանոսում։

Հայաստանի քարտեզում կարելի է նշել մի քանի օրինակ։

Իրանական (պարսկական) Զուլֆան նշված է, իսկ Անդրբ-  
կովկասյանը, սովետականը ոչ:

Թուրքիայի և Իրանի (Պարսկաստանի) սահմանները չեն  
նշված:

Գրված է Զանանբադ, պետք է լիներ Զանանար (Գողթանի  
Ցղնա գյուղն է):

Կարճեանի տեղադրությունը ճիշտ չէ:

Լեռնանցքներից Զինգիլը նշված է. իսկ Սպիտակը և մյուս-  
ները չեն նշված և այլն:

Ատլասի սկզբում գետեղված ցուցակում նկատել ենք ան-  
ձշտություններ. նշում ենք մի քանիսը:

Վենգրիա — պետք է լիներ Հունգարիա:

Թուրքիայի նկատմամբ նշված է երկու մայրաքաղաք՝  
Պոլիսը և Անդրբան:

Բահրեյնի կղզիները ցուցակում կան, իսկ քարտեղում ոչ  
և այլն:

### 3. ՍՈՎԵՏԱՀԱՅ ԱՌԱՋԻՆ ԳԼՈԲՈՒԼԸ

Տրամադիծը 25 սմ է, թեք առանցքով: Ֆիզիկական է, բազ-  
մագույն, հայերեն:

Բարձրությունը պատվանդանով 30 սմ, պատրաստված է  
երեսնում և Լենինգրադում:

Լույս է ընծայված ՔԲԴԿ, Լենինգրադի քարտեղագրական  
գործարանում 1934 թ.:

Խմբագրել է Հ. Ստեփանյանը, տեքստը գրել է վիմագրող  
Ե. Դանչոն: Պատվեր ՀՍԽՀ Լուսավորության ժողովը բականական կոմի-  
սարիատի:

Տիրաժը՝ 3.000, գինը՝ 9 ռուբլի:

Գլոբուսի լայնության աստիճանները տրված են տասնյակ-  
ներով, նշված են գլասավոր [0] և 180 միջօրեականի վրա:

Երկայնության աստիճանները գծված են 15-ականներով,  
նշված են հասարակածի վրա: Բացի այդ, թվերով նշանակված  
են 5-ական աստիճանները և վոքրիկ գծիկներով ամեն մի աս-  
տիճանը:

Հատված գծիկներով նշված են Հյուսիսային ու Հարավային  
արևադարձերը և Հյուսիսային ու Հարավային բևեռային շրջա-  
նագերը:

Օվկիանոսների և ծովերի խորությունները ներկված են բաց կապույտից մուգ կապույտ, նշանած են նաև թվերով՝ 200 մ, 2000 մ, 4000 մ, իսկ առավել խորը տեղերը՝ ավելի մուգ:

Ցամաքի մասերը ներկված են տարրեր գույներով: Ցածրավայրերը, հարթությունները՝ կանաչ, իսկ ավելի բարձր վայրերը՝ դեղին, լեռնային վայրերը՝ դարչնագույն, լեռնաշղթաները գծված են շտրիխներով:

Ծովափերը, լճերի ափերը, գետերը, ամբողջ աստիճանացանցը նշանած են կապույտ գծով:

Բնակվայրերի նշանները և տեքստը սև է:

Ենթարկելով անալիզի առաջին սովետահայ գլուխուրը, որպես այդ գլուխուրի խմբագիր, ինքնաքննադատության կարգով պետք է նշենք նկատված հետեւյալ առանձնահատկություններն ու թերությունները:

Թե՛ ծովերի կապույտը և թե՛ ցամաքի գույները որոշ չափով մոռայլ են:

Օվկիանոսների և ծովերի ոչ-խորը մասերը, այսինքն, մինչև 200 մ խորության տեղերը ներկված են շատ բաց երկնագույնով, համարյա սպիտակ, որի հետեւնքով ծովերի այդ մասերը շատ հեշտ խառնվում են ցամաքի մասերի հետ:

Փարիզի նշանը մայրաքաղաքի չէ:

Անկարան պետք է լինի հուլիսին 40°-ի մոտ, սակայն նշանած է քիչ հորավի:

Վերին Գվինեա և Սաուրին Գվինեա գրված է Աֆրիկայի արևմտյան ափերի մոտ, ոչ թե ցամաքի մասում, այլ ծովի մասում:

Սարգասի ծովի անունը չի գրված Ատլանտյան օվկիանոսում:

Փոքր, ձեռագիր տառերով գրված աշխարհագրական անունները նույր չեն, երբեմն անհաջող են:

Գլուխուրը թեթևաշարժ է, մատչելի դասավանդման համար, չնայած իր ոչ մեծ չափերին, պարունակում է աշխարհագրական և քարտեզագրական շատ նյութ: Աշխարհագրական անունների հայերեն տառագարձությունն ու թարգմանությունը համարյա չունի պակասություններ: Այդ գլուխուրում ճիշտ են տրված Շանգհայ և Քարուլ քաղաքների, Նաոողնայա և անունները, որոնք հետագայում սխալմամբ դարձվել են Շանհայ, Կարուլ, Նարունայա և այլն:

Դպրոցական ձեռնարկի է 5-րդ դասարանի համար:

Պարունակում է աշխարհագրական 49 ուրվագծային խընդիրներ, մեկ գույնի (սև) քարտեզներով: Տեքստը ընդամենը 41 էջ է, հայերեն:

Ծավալը՝ 20 սմ×30 սմ է, տիրաժը՝ 8000 օրինակ:

Կազմել է Հ. Դրիգորյանը:

Հրատարակել է Երևանում՝ 1932 թվականին, Հայպետհրատի տպարանում, ՀՍԽՀ Լուսմողկոմատի հավանությամբ:

Սովետական Հայաստանում հրատարակված աշխարհագրական աշխատանքային տետրերի շարքում երկրորդն է: Նման հրատարակությունները նորություն էին հայ իրականության մեջ, որ լույս են տեսել Սովետական իշխանության ժամանակ:

Սա միջնակարգ դպրոցներում աշխարհագրության դասավանդման մեթոդական օճանդակ աշխատանքային ձեռնարկներից մեկն է:

Նյութը հավաքված և դասավորված է ուսցիոնալ կերպով: Լեզուն մատչելի է և սահուն:

Աշխարհագրական հարցերը և խնդիրները ձեռակերպված են ընդհանրապես հաջող կերպով:

Աշխարհագրական տետրը հետաքրքրություն է առաջացնում աշխարհագրության նկատմամբ:

Բաժիններ և սխեմաներ կան, որ նվիրված են ամբողջ Անդրկովկասին, Անդրկովկասյան ոեսպուրիկաններին, մասնավորապես, Հայկական ՍՍՌ-ին:

Աշխարհագրական տետրի վերաբերյալ նշում ենք նկատված մի քանի առանձնահատկություններ:

Գծագրությունների և սխեմաների  $\frac{1}{3}$ -ը ոռւսերեն է:

№№ 11, 12, 13, 14, 15, 16, 19-ը աշխարհի քարտեզներն են Մերկատորի պլոյեկցիայով, № 27-ը Անդրկովկասի սխեմատիկ քարտեզն է, № 40-ը Սևանա լճի խորությունների ուրվագծային քարտեզը:

Սև քարտեզների տպագրությունը այնքան էլ պարզ չէ կատարված: Հեշտ չէ այն յուրացնել, առավել դպրոցական աշակերտների համար:

Սևանա լճի, ավելի ճիշտը Փոքը Սևանի խորությունների նշումները ոչ նպատակահարմար ձևով են, մասամբ խախտված են:

Գծադրություններից մի քանիսը՝ ՀՀ 33, 34-ը զետեղված են տետրում, պատահաբարար, գլխիվայր:

Կլիմայական քարտեզում գրադացիան խախտված է:

Երևանի գավառի քարտեզում չկա Սևանա լճի անունը, իսկ գավառային տեղամասերի անունները ճշտված չեն:

Պայմանական նշանների բաժնում նշանները գասավորված են անկանոն՝ երկաթ, ապա աղ, այնուհետեւ պղինձ և այլն:

Անգրկովկասի տնտեսական քարտեզում նոր Բայազետի շրջակայքում սխալմամբ նշված է բամբակի նշանը:

Զիւն նշանը և խաղողի նշանը ունեն նմանութուն, դժվար է տարբերել:

Տեքստում պատահում են տերմիններ և գարձվածքներ, որոնք աշխարհագրական ճիշտ լեզվով չեն ձևակերպված. օրինակ, «Քնչ է ստացվում Հայաստանում» պետք է լինի՝ «Քնչ է ներմուծվում Հայաստան»:

Գծադրությունները ու սխեմանները մասամբ ընդօրինակված են Իվանովի գասագրքից, մասամբ էլ 1926 թվականի Աշխարհագրական տետրից:

### 5. ՀԱՅԿԱԿԱՆ ՍԽՀ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԸ

Մասշտաբը՝ 1 : 300.000, մեկ սանտիմետրում 3 կիլոմետր: Քարտեզի մեծությունը 107 սմ × 125 սմ է, երկու թերթի վրա:

Քարտեզը գունավոր է, բազմագույն:

ՀՍՍՌ մակերեսութքը տրված է գիպսոմետրիայով, 10 գրադացիայով՝ բաց կանաչից մինչև մուգ գարշնագույն: Զրային տարածությունը, Սևանա լճի խորությունները՝ կապույտ գույնի 4 երանգավորումներով, խորը տեղերը՝ ավելի մուգ:

Քարտեզի տեքստը հայերեն է:

Կազմված և ձևակորված է Թբիլիսիում, 1938 թվականին, ՍՍՌՄ Գեղեցիայի և Քարտեզագրության Գլխավոր Վարչության քարտեզագրական գործարանում:

Խմբագիրներ են դոցենտ Ս. Փ. Ցիակայան և քարտեզագիր Ռ. Ն. Մուրագովան, տեխնիկական խմբագիրն է Ս. Ս. Ռուգենկոն:

Տիրածը 10.000 օրինակ է, գինը՝ 7 ոռորդի:

Քարտեզը ուսումնական է, ՀՍՍՌ միջնակարգ դպրոցների համար:

Բնակավայրերի անունները գրված են ըստ ՀՍԽՀ կենտրոնագրի 1936 թ. նոր սահմանումների:

Ուսումնական նպատակով առաջին անգամն է օդագործական ված 1 : 300.000 խոշոր մասշտաբը: Քարտեզի չափսը միջին չափսի է, դյուրաշարժ է և հարմար դպրոցական պարագմունքների համար:

Գունավոր ձևավորումը բարվական ցայտուն է, պատկերավոր, մատչելի և հեռվից հեշտ դիտելի:

Աշխարհագրական անունները գրված են խոշոր և պարզ:

Սակայն քարտեզի մեր մանրակրկիտ գննությունը տվել է հետեւյալ արդյունքը: Դիտողությունները նշում ենք, խմբավորելով ըստ օրյեկտների և խնդիրների:

Ֆիզիկո-աշխարհագրական տվյալներ:

Ճիշտ չեն գծված և գունավորված Փոքր Սևանի իզորադները:

Քարտեզը խոշոր է, հնարավոր էր նշել մի քանի փոքր, բայց հայտնի լճեր՝ Այզըր լիճը Արարատյան գաշտում, Քարի լիճը Արագածի բարձրագիր լանջերին, Ակնա լիճը Գեղամա լեռներում:

Արագածի սառցագաշտերի ուղղությունը ճիշտ չէ:

Փամբակի, Պապաքարի լեռնաշղթաների անունները չեն համբնկնում լեռնաշղթաներին:

Օգտակար հանածոններից չեն նշված՝ դրանիւր, մարմարը, պեմզան և այլն:

Գեմոգրաֆիական տվյալներ:

Քարտեզը մեծամասշտար է, ուստի կարելի էր այնպես նշել, որ Ուզունլար և Շահալի (այժմ Վահագնի) գյուղերի նշանները երկաթգծին կպած չլինեին, իսկ Համամլուն (այժմ Սպիտակ)  $\frac{1}{2}$  սմ, այսինքն, 1,5 կիլոմետր հեռու չգտնվեր երկաթուղուց:

Վաղարշապատը գրված է ավելի խոշոր շրիֆտով, քան նոր Բայազետը, մինչդեռ այդ երկուսն ել՝ ըստ բնակչության թվի մի կարգի քաղաքներ են:

Տնտեսական տվյալներ:

Նշում ենք միայն տրանսպորտը, քանի որ այլ կարգի տընտեսական նշաններ չկան:

Երեան—Սևան խճուղին իր սկզբնական մասում Երեանի մոտ գծված է սխալ:

Լեռնանցքներից մի քանիսը չեն նշված քարտեզում կազմողների կողմից ընդունված պայմանական նշանով, օրինակ, Սպիտակի, Սևանի (նախկին Սևելյոնովկայի), Հայոցձորի (տուաջվա Սելիմի) լեռնանցքերը:

Քարտեղում չեն նշված երկաթուղային ճյուղերից Արթիկ-Մահմուղջուղը (այժմ Պեմզաշենը), Անի—Անիպեմզան:

Նավամատուցյաներ չեն նշված նորասուս և Շորժա նավահանգիստների մոտ:

Զեավորման բնույթի թերություններ:

Օդտակար հանածոների նշանները տարօրինակ են, աչքաթող են արված ընդունված միակերպ նշանները:

Քարտեղը բազմագույն է, ուստի կարելի էր հիդրոգրաֆիայի, օրինակ, գետերի և տրանսպորտի նշանները նշել տարբեր գույներով՝ քարտեղի դյուրին ընթեռնելիության և օգտագործման նպատակով:

Պայմանական նշաններում քաղաքները և գյուղերը տրված են անջատ, մինչդեռ ընդունված է միացնել «Բնակավայրեր» վերնագրի տակ:

Տեքստի շրիփտները դիմերենցված չեն, ընդունված ձևերը պահպանված չեն, երբեմն, նույնիսկ, տարօրինակ են:

## 6. ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

Գծվածքը կրում է կարճ վերնագիր՝ Երևան, գրված խո-  
շոր տառերով:

Մասշտաբը, թվայինը՝ 1 : 20.000, գծայինը՝ 1 սմ = 200 մ:

Հյուսիսը ցույց է տրված հատուկ նշանով (ոչ սլաքով):

Հատակագիծը բազմագույն է:

Գույներն օգտագործված են հետեւյալ կերպ՝

հիդրոգրաֆիան՝ գետերը, լճերը կապույտ:

Երևանի շրջակայքի մակերեսույթը՝ բաց դարչնագույն է, բարձրության զուգահեռականներով:

Այգիները՝ տեղադրության նշաններով կանաչ:

Եենքերն ու թաղամասերը՝ մուգ գարշնագույն:

Սակավաթիվ երկնարկանի շենքեր, որոնք կառուցված են եղել մինչև Սովետական իշխանության հաստատվելը՝ սկզ:

Սովետական ժամանակվա կառուցված բազմաթիվ և բազմահարկ շենքերը՝ կարմիր:

Երկաթուղին՝ սկզ, շախմատային բաժանումներով:

Տրամվայի գիծը՝ կարմիր:

Խճուղիները՝ երկու գծով, սկզ:

Գծվածքի շրջանակը և տեքստը՝ սկզ:

Հատակագծի ձախ, ցածի անկյունում տրված է անանուն

փոքր քարտեղը: Պետք է ունենար վերնագիր՝ Երևանը և նրա շըրշակալու:

Այդ փոքր քարտեղում նկատում ենք՝

Բնակավայրերը նշված են կարմիր շրջանակով (պունսոնով):

Ուղիները՝ ու գույնով:

Հատակագծի տեքստը և բացատրականը՝ ոռուերեն է:

Դրված են Երևանի ույոնների և արվարձանների անունները, ինչպես և գետերի, լճակների և փոքր քարտեղի բնակավայրերի անունները:

Աշխատանքը կատարել է Օ. Սարգսյանը:

Հրատարակությունը ՀՍԽՀ Տուրիստական վարչությանն է:

Տպագրված է Երևանում, Հայպետհրատի վիմագրատանը:

Տիրաժը 8000 օրինակ:

Հրատարակության թիվը չկա: Պետք է լինի 1938 կամ 1939 թվականը:

Երևան քաղաքի տպագրված հատակագծերի շարքում, այդ հատակագիծն, ըստ իս, ամենախոշորն է:

Գույները վառ են, հաջող և տպագորիչ:

Մինչովետական և սովետական ժամանակաշրջանում կառուցումների հակադրությունն ակնառու է:

Հաջող են գծագրված Հրազդանի ձորը, Գետառը՝ Ավանի ձորում:

Հատակագծում ցույց են տրված Երևան քաղաքի ընդարձակվելը և շրջակա սարահարթերի անտառապատումը:

\* \* \*

Սակայն, Երևան քաղաքի այդ հատակագիծն ունի որոշ առանձնահատկություններ, որոնք պարզել ենք ուսումնասիրության հետևանքով:

Այդ նշում ենք ոչ թե այժմյան Երևանի համեմատությամբ, որը շատ խիստ ընդարձակվել է և զարգացել, այլ հրատարակած հատակագծի պարունակությունից ենելով:

Բարձրության զուգահեռականները չունեն թվեր, հայտնի չեն նրանց հատման չափն ու տարրերությունը:

Գետառը և Թոխմախանի (այժմ Կոմսոմոլի) ջրանցքը չունեն վերջավորություն (գետաբերան), ընդհատվում են Օքոնիշիձեյի պողոտայի տրամվայի գծի (կամ ըջակի) տակ:

Հատակագծում Երևանի տերիտորիան և թաղերը անշատված են (բաժանված են) գծիկներով: Այդ մասին չկա բացա-

տրություն։ Կարելի է հասկանած, որ այդ՝ Երևանի քաղաքային ռայոնների սահմաններն են։

Արտաշատի (Ղամարլուի) խճուղին Երևանից հարավ աչքաթող է արված։

Գույները մասնակի կերպով տեղաշարժվել են։

Հատակագծում հյուսիսային կողմը ուղղված է դեպի վերև աջ անկյունը։ Այդ արված է Երևանի տեղադրությունից դրաված, սակայն անհիմն կերպով։

Փոքր քարտեզում Երևանից դեպի հյուսիս կա բնակավայրի մի նշան, ըստ երեսութիւն եղվարդն է։ Նաև Երևան—Սևան և Երևան—Գառնի խճուղիները նշված են երկու զուգահեռ սև գծերով, իսկ Երևան—Աշտարակ, Երևան—Վաղարշապատ խճուղիները մեկ սև գծով (երեք մոռացությամբ)։

Կան անունների տառագարձության թերություններ։ Դըրված են Գեղատ, Թոխմախ լիժ, Նովայա Կիսի, Նորակավիտ և այլն։

### 7. ՀԱՅԿԱԿԱՆ ՍԽՀ ԲԱՐՁՐԱՔԱՆԴԱԿ ՔԱՐՏԵԶԸ

Հորիզոնական մասշտաբը՝ 1 : 500.000։

Ուղղաձիգ և հորիզոնական մասշտաբների հարաբերականը՝ 1 : 8։

Քարտեզը բաղմագույն է, յուղաներկ, շրջանակով։

Ռելեֆը պատրաստված է հատուկ պապյեմաշերից, որը դյուրաբեկ չէ։

Պատրաստված են օրինակներ և հայերեն և ռուսերեն տեքստերով։

Փորձնական մակետը քննության է ենթարկվել ՀՍԽՀ Լուսառողկոմատի Աշխատավորների կողմից, առաջարկված հանձնաժողովների կողմից, առողերիս գրողի գեկուցման հիման վրա։

Քարտեզը պատրաստվել է Թբիլիսիում, 1938—39 թթ.։

Կազմողը և աշխատանքների ղեկավարն է եղել ինժեներ Վ. Ա. Տուգուլովը։

Պատվիրել է ՀՍԽՀ Լուսավորության ժողովրդական կոմիսարիատը։

Պապյեմաշեն, որից պատրաստված է բարձրաքանդակ քարտեզը, հաջող է, ամուր և թեթե։

Հորիզոնական մասշտաբն ու չափությունը հարմար է, քարտեզը դյուրաշարժ է, գլուխական կարիքներին համապատասխան է։

Անելյեփի գունավորումն ընդհանուր առմամբ կենդանի, գրավիչ է:

Այդ բարձրաքանդակ քարտեզի առանձնահատկությունները հետևյալներն են:

Քարտեզի հորիզոնական և ուղղաձիգ մասշտարի  $1:8$  հարաբերականը խիստ է: Զանգեզուրում, օրինակ, փոքր հովիտներ ու ձորեր չկան, այլ կիրճեր են: Մասշտարների  $1:5$  հարաբերականը պակասավոր է լինում: Հայաստանի լեռները դառնում են միջին բարձրության և ցածր: Ամենահարժար հարաբերականը Հայաստանի  $500.000$  մասշտարի բարձրաքանդակ քարտեզների նկատմամբ պետք է համարել  $1:7$ , կամ  $1:6$ :

ՀՍՍՌ մակերեսույթի զանազան մասերի գունավորումը՝ կանաչ, դեղին, դարչնագույն, մանիշակագույն որոշ վայրերում պատահական է: Ակզրունքը չի պահպանված:

Գետերի հոսանքը խիստ սխեմատիկ է, մասամբ նույնիոկ աղավաղված: Այդ արգարացի է օրինակ Հրազդանի, Քասախի, Փամբակի նկատմամբ:

Սևանա լճի ափերի գծագրությունը, խորությունների գունավորումը խախտված է և ճիշտ չէ:

Աշխարհագրական անունների ոռուերեն և հայերեն տառադարձությունը թերի է:

Տասնյակ օրինակ տիրաժով, ձեռքի աշխատանքով պատրաստելուց՝ բարձրաքանդակ քարտեզի հաջորդ օրինակները դարձել են մեխանիկական բնույթի: Դրա հետեւանքով պատրաստված օրինակները խիստ շեղվել են փորձնական ստուգված մակետից, ինչպես և կազմողին Հայաստանում արված առաջադրանքներից:

#### 8. ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԵԶԸ

Քարտեզը խոշորամասշտար է: Թվայինը՝  $1:200.000$ , գծայինը՝  $1 \text{ սմ} = 2 \text{ կմ}$ :

Քարտեզը կազմված է Երևանում: Հրատարակված է Լենինգրադի Քարտեզագրական գործարանում 1932 թվականին, երկու լեզվով, առանձին՝ հայերեն և ռուսերեն, յուրաքանչյուրը  $10.000$  օրինակ:

Քարտեզը բազմագույն է, 4 թերթի վրա:

Խորհրդային Հայաստանի հրատարակված քարտեզների շարքում առաջին մեծամասշտար, Փիզիկական և տնտեսական տվյալներով քարտեզն է:

Կազմել է Հողագործության ժողովրդական կոմիսարիատի

աշխատակից Խ. Ավդալը գյանը, գծագրել է վիմագրող Ա. Մինասյանը:

Քարտեզը գծված և տպագրված է տեխնիկապես լավ և նուրբ:

Կատարված է խոշոր աշխատանք: Օգտագործված են Խորհրդային Հայաստանի մասին 1932 թվականին հայտնի տեղեկությունները: Մշակված և նշված են Հողագործության ժողովրդական կոմիսարիատի վերջին թարմ տվյալները:

Սակայն, քարտեզում տեղ են գտել որոշ անձտություններ, քարտեզագրության գիտության և քարտեզագրական արվեստի տեսակետից տարակուսելի երեսույթներ:

Քարտեզում բաց դարչնագույնով ցույց են տրված լեռները: Սակայն վերկից այդ ոելյեֆը ներկված է Հայկական ոեսպուրիկայի գյուղատնտեսության վերաբերյալ տվյալներով, այն է՝ հողատեսքերը՝ ցանքերը, արոտները, այգիները, անտառները. դրա շնորհիվ նսեմացել է ոելյեֆը՝ երկրի ֆիզիկուաշխարհագրական կարեօր առանձնահատկությունը: Պետք է նշել, որ Նախիջևանի ԱԽՀ-ում ոելյեֆը ավելի ցայտուն է դուրս եկել, քան Խորհրդային Հայաստանում, այն պատճառով, որ Նախիջևանի տերիտորիան չի ծածկված գյուղատնտեսական տվյալների գույներով:

Քարտեզում ոելյեֆի հետ միաժամանակ նշված են բարձրության հորիզոնականները կարմիր գծերով. սակայն քանի որ նույն կարմիր գծիկներով նշված են ուղիները՝ խճուղին և կառուցվող երկաթուղիները, ուստի հորիզոնականների գծերը խառնվում են հիշած ուղիների հետ, որից տեղակեզ տառեկը են հորիզոնականները:

Քարտեզը կազմված է 1932 թվականին, 2-րդ հնգամյակի սկզբին, Խորհրդային Հայաստանի 12-ամյակին, երբ ոեսպուրլիկայում բավական զարգացել էր ինդուստրիան: Մինչդեռ երկրի ընդարձակ տարածությունները ներկված են հողատեսքերի համատարած ներկերով: Իսկ արդյունաբերական փոքր նշանները դժվար նկատելի են ցըլված են: Ուստի, ոեսպուրլիկան հանդես է բերված, լավագույն դեպքում, որպես ագրարային-ինդուստրիալ:

Քարտեզը խոշորամասշտար է: Մինչդեռ շրջանների սահմանները նշված են մեղմ սև նշանով, որը գծվար նկատելի է, կազմողները, հավանաբար, նկատի ունենալով շրջանների սահմանների հաճախակի փոփոխությունները, չեն կամեցել, որ վարչական տեսակետից քարտեզը շատ շուտով հնանալ: Մինչդեռ

երևույթներն ընդհանուրապես գիտում ենք ուսունական-շրջանային մասշտաբով: Թե ո՞ր շրջանը ո՞ր չափով զարգացած է, կամ ի՞նչ չում ետ է մնում, ի՞նչի կարիք ունի և ի՞նչին պետք է զարկ տալ: Այնինչ նույնիսկ միլիոնանոց մասշտաբի և դեռ ե՛լ ավելի փոքրամասշտաբ քարտեզներում նշում են վարչական շրջանների սահմանները:

Պայմանական նշանները գիտականորեն չեն մշակված: Օրինակ, այնպիսի օբյեկտի վերաբերյալ, ինչպես արդյունարերական գործարանների տեղաբաշխումն է: Գործարանները նշված են տարբեր ստորաբաժանումներով՝ 1) Քիմիական արդյունարերություն, 2) Թեթև արդյունարերություն, 3) Գործարաններ և ֆաբրիկաներ և 4) Պետական խոշոր ձեռնարկություններ, մի հանգամանք, որը չի կարող արդարացվել գիտական տեսակետից:

Զնայած անտեսական նշանների որոշ չափով ընդունված միակերպությանը, միատեսակությանը (նման փորձեր կատարվել են այն ժամանակ հրատարակված թե Большая և թե Малая Советская Энциклопедия-ների հատորներում), աչքաթող են արված այդ փորձերը:

Տնտեսական նշաններից նշում ենք մի քանի առանձնահատկություններ: Օճախի գործարանի նշանը այն է, ինչ ընդունված է երկաթի համար: Կոնսերվի գործարանը ցույց է տրված մրգի նշանով: Մետաքսի գործարանները՝ բնակավայրերի նշանով: Գինու նկուղները՝ լեռնագագաթների նշանով: Յիանամիդի փորձարանը՝ անսահմանության նշանով: Հղկվող քարը՝ տեքստիլ արդյունարերության երկու նշանով (որով, առասարակ, ցույց են տալիս քանակական հանգամանքը) և այլն:

Բացի այդ, քարտեզում նկատել ենք փաստական վրիպումներ, որոնք վերաբերում են մասնակի կերպով բնակավայրերի, երկաթուղային կայանների, լեռնագագաթների տեղադրություններին:

Զնայած այդ բոլորին, քարտեզը մեծագիր է, տպավորությունը ուժեղ, կատարված աշխատանքը շատ խոշոր:

Քարտեզը լույս տեսած առաջին տարիներին կատարել է իր դրական գերը: Սակայն, չայլական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի տնտեսական արագ զարգացման շնորհիվ, այդ քարտեզը հաջորդ հնգամյակներում արդեն կորցրել էր իր թարմությունը և ստացել պատմական նշանակություն:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՎՍ ՀԱՅ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓՈՒՄԸ

Սովետական ժամանակվա հայ քարտեզագրական հրատարակություններն աչքի են ընկնում մի շարք գրական հատկություններով:

Սովետահայ քարտեզագրությունը իր սկզբունքներով ու նպատակներով հանդիսանում է սովետական ոռուսկան քարտեզագրության հարազատ ծնունդը:

30 տարվա ընթացքում քարտեզագրական հրատարակությունները գերազանցում են նախորդ երկու դարում հրատարակվածներին:

Բազմաթիրած են ոչ միայն քարտեզները, այլ նույնիսկ գլոբուսներն ու ատլասները մասսայական են և էժանադին:

Նպատակագրումը լայն կրթական է, կուլտուր-լաւագործականն է: Այդ է պատճառը, որ հրատարակությունների զգալի տուկոսը կատարված է ՀՍՍՌ Լուսավորության մինիստրության պատվերով:

Տեսակներով ու բնույթով բազմազան են, համարյա բավարարում են քարտեզագրական բազմապիսի պահանջները:

Աչքի են ընկնում մասնագիտական (այդ թվում անտեսական) քարտեզները\*, առավել հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում մշակված զանազան քարտեզները:

Դիմավորն է, որ կուեկտիվ աշխատանքի արդյունք են:

Բովանդակությամբ նոր են և թարմ, ժամանակի ոգուն համապատասխան:

Աշխարհագրական անունների տառագարձական հարցերը լուծվել և լուծվում են կազմակերպված ձեռվ, գիտական հիմունքներով:

Բուն հայաստանում ձեռք է բերվել քարտեզագրական խոշոր փորձ:

Սովետական ժամանակաշրջանի հայ տպագիր քարտեզագրական հրատարակությունների ցանկի նույնիսկ թեթևակի դիտումը համոզում է, որ հրատարակությունների տեսակետից մի քանիսը, օրինակ, ուսումնական, դպրոցական կարիքների համար լույս բնծայած գլոբուսները, աալասները, աշխարհամասերի և ՍՍՌՄ քարտեզները, աշխարհագրական տետրերը, նաև

\* Տնաեսական քարտեզների մասին մեք կողմից գրված է ոռուսերեն՝ մի այլ աշխատություն:

Հայկական ՍՍԾ Փիզիկական, վարչական, բարձրագանգակ քարտեղները, նույնիսկ դիտական աշխատանքների համար հրատարակված ՀՍԾԻ հատուկ քարտեղները ունեցել են 2-րդ, առավել 3-րդ ու ավելի հրատարակություններ:

Հասկանալի է, որ կազմողները, խմբագիրները աշխատել են, որպեսզի նախորդ հրատարակության թերությունները չկրկնվեն հաջորդ ապագրություններում: Բայց, իհարկե, ինչպես նշել ենք, նորից զերծ չեն եղել որոշ թերություններից, որոնք ուղղվել են հաջորդ հրատարակություններում:

Սովետահայ առաջին՝ Հայկական ՍՍԾ քարտեղի թերություններից զերծ են նոր հրատարակությունները, բայց սրանք էլ իրենց հերթին պարունակում են երկրորդ կարգի և ավելի սակագիւղ պակասություններ:

Սովետահայ առաջին առլասի պակասություններն ուղղված են 2-րդ հրատարակություններմ, որում, սակայն տեղ են գտել ուրիշ վրիպումներ:

Սովետահայ առաջին գլոբուսի մասամբ գունատ ու մուայլ գույնները երկրորդ հրատարակության մեջ փոխարինված են վառ և ցայտուն գույններով: Տեքստի ձեռագրի տառերի խախտումները ուղղված են ապագիր տառերի գործադրությամբ: Սակայն, սովետահայ երկրորդ գլոբուսն էլ զերծ չէ ուրիշ, մասնակի և երկրորդական պակասություններից:

Աշխարհագրական տետրի երկրորդ հրատարակության մեջ նախորդի գլխիվայր քարտեղներն ուղղված են, ոուներեն տեքստով քարտեղները փոխարինվել են հայերեն տեքստով: Բայց վարժաթյունների, նաև արտահայտությունների ձևակերպումների մեջ գենես պատահում են սայթաքումներ:

ՀՍԾ բարձրագանգակ քարտեղի հորիզոնական և ուղղաձիգ մասշտարի 1 : 8 փոխարերականը ուղղված է հետագայում պատրաստված 100,000 մասշտարի ՀՍԾ բարձրագանգակ քարտեղում: Մելչիչյան գարձել է իրական և ակնառու: Սակայն հարմար, թեթե, դյուրաշարժ պապյեմաշեյի փոխարեն գործածված գիպսը դյուրաբեկ է: Բացի այդ, 9 հատ մեծ քարից (գիպսից) պատրաստված բարձրագանգակ քարտեղը գժվարշարժական է: Դպրոցական ձեռնարկից այն գարձել է թանգարանային սուարկա:

Մենք զեռ չենք խոսում վարչական, քաղաքական քարտեղների մասին, որոնց սահմանները փոփոխվում են, մանավանդ տնտեսական քարտեղների վերաբերյալ, որոնց անտեսական

նշումները խիստ փոփոխական են, իսկ բովանդակությունը շատ շուտով հնանում է ուսուցչի տնտեսական տրադ գարդացման շնորհիվ:

Ինչպես տեսնում ենք, գոյություն չունի ոչ մի հատ իդեալական քարտեզգրական հրատարակություն, ոչ միայն հայերեն, այլև ուսերեն և օտար լեզուներով։ Եթե նույնիսկ այսօր այս կամ այն գլոբուսը, ատլասը, քարտեզը լավ է, ճիշտ է, բավարարում է մեզ, գուր է գալիս, ապա որոշ ժամանակից հետո այն՝ հնանալու է և պետք է դադարի ճիշտ, բավարար լինելուց։ այն ստանում է պատմական նշանակություն։ (Համեմատարար ավելի կայուն և մնայուն են ֆիզիկական քարտեզները):

Եվ այդ միանգամայն հասկանալի է։ Կյանքն ընթանում է առաջ, փոփոխվում, դարձանում է, առաջադրում է նոր պահանջներ։

IV ԱԱԱ

ԱՆՎԵՏԱՀԱՅ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ինչպես տպագիր քարտեզագրությունն առհասարակ, այնպես էլ հայ տպագիր քարտեզագրությունը կուլտուրական հասարակական կյանքի արդարությունը է:

XVIII դարում ամբողջ Հայաստանը շարունակում էր տառապել թուրք-պարսկական լծի տակ, տնտեսապես և կուլտուրապես հետամնաց Հայաստանում միայն էջմիածնումն էր 1771 թվականից աշխատում մի փոքր տպարան: Այն ժամանակվասարդարի Երևանը հազիվ ուներ 10.000 բնակիչ:

XIX դարի առաջին քառորդից հետո Արևելյան Հայաստանում, ուսւների օգնությամբ պարսիկների տիրապետությունից ազատագրվելուց հետո, հնարավորություն է ստեղծվում ընդարձակել հայկական տպարանների ցանցը: Տպարաններ են հիմնվել՝ 1828 թ. Շուշիում, այնուհետև 1876 թ. Երևանում և Աղեքսանդրապուր (այժմ Լենինական), 1890 թ. Նոր Բայազետում:

XIX դարի վերջերում Երևանը Ռուսաստանի նահանգական քաղաքներից մեկն էր և ուներ ավելի քան եռապատիկ բնակչություն խանական Երևանի համեմատությամբ: Սակայն, Հայաստանի և մասնավորապես Երևանի տպարանները տպագրում էին սակավատիրած օրաթերթեր, գրքեր, գրենական պարագաներ:

Քարտեզագրական հրատարակությունների մասին խոսք անգամ չէր կարող լինել, քանի որ նույնիսկ XX դարի սկզբներին հայերի հայրենիքում չկային ոչ բազա, ոչ էլ կադրեր:

Միայն սովետական ժամանակաշրջանի Երևանը, գտնալով Հայկական ՍՍՌ մայրաքաղաք, բազմապատկելով բնակչությունը տասնապատիկ թվով, հարստանալով մտավորական ուժերով, հիմնադրելով վիմագրատուն և ցինկոդրաֆիկական արհեստանոցներ, հնարավորություն է ստացել ձեռնարկելու լայն չափերով քարտեզագրական հրատարակություններ:

Սովետական Հայաստանը և նրա մայրաքաղաք Երևանը ունեն կազմակերպող և ղեկավարող հիմնարկներ, նախաձեռնող, կազմող, խմբագրող գիտական ուժեր, գծագրողների, քարտեզագրողների, վիմագրողների որոշ կադրեր:

Ինչպես գիտության, գրականության, արվեստի, հայ գրքի տպագրության բնագավառներում Երևանը հանդիսանում է հայ ժողովրդի կուլտուրական կենտրոնը, այնպես էլ հայ քարտեզագրության բնագավառում Երևանը զարձել է առաջնակարգ կենտրոն:

Հայ ժողովրդի հնաւց արտահայտած սերը գեղի աշխարհագրությունն ու քարտեզագրությունը զարգանալու պայմաններ է ձեռք բերել Սովետական իշխանության օրոք:

Երևանից բացի, չկա երկրագնդի վրա մի քաղաք, որը այժմ նրանից ավելի տաք հայ քարտեզագրական պրոդուկցիա:

Երևանն ունի բոլոր գիտական, տեխնիկական, կուլտուրական տվյալները շարունակելու և լինելու հայ զարգացող տպագիր քարտեզագրության կենտրոնը:

## ՀԱՅԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՔԱՐՑԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԾԱՑԱԾ ԱԲԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սովետահայ քարտեզագրությունն իր սկզբունքներով ու մեթոդներով, նպատակներով ու խնդիրներով, հանդիսանալով սովետական ոռւսական քարտեզագրության հարազատ ծնունդը, զարգանում է ձեռվ ազգային, բովանդակությամբ սոցիալիստական ուղիներով:

Իր գոյության առաջին օրերից, ժողովրդական տնտեսության զարգացման հնդամյակների ընթացքում սովետա-ոռւսական քարտեզագրությունն ունեցել է ահագին հաջողություններ: Սոցիալիստական շինարարությունը նոր պահանջներ է առաջադրել մեր քարտեզագրությանը: Սովետա-ոռւսական քարտեզագրության բնագավառում կատարված են հիմնական գեղեցիական աշխատանքներ, կազմված են խոշորամասշտաբ պլանչետներ, լայնորեն կիրառվում են այէրոհանութի մեթոդներ, նոր պրոյեկցիաներ և այլն:

Ներկայումս, անկասկած, մենք առաջվանից շատ ավելի և ճշտորեն գիտենք մեծ Հայրենիքը՝ Սովետական Միությունը և նրա մասը կազմող Սովետական Հայաստանը: Երկրի գեղուգիական առանձնահատկությունները, գեոմորֆոլոգիական տվյալները, օգտակար հանածոները, կլիմայական պայմանները,

ջրահէներգետիկ ուսուլաները, հողային ծածկույթը, բուսական հարստությունը, կենդանական աշխարհը, բնական դոախները, ֆիզիկո-աշխարհագրական շրջանները, բնակչության և վարչաքաղական ցուցանիշները իրենց բազմակողմանի արտահայտությունն են գտել ՍՍՌՄ զանազան քարտեզագրական հրատաքակություններում:

ՍՍՌՄ ուսումնա-գպրոցական քարտեզները հրատարակվում են տասն յակ միլիոնավոր օրինակներով:

Բացի այդ, սովետական քարտեզագրությունը՝ հավատարիմ լինելով լինինյան ազգային քաղաքականությանը, քարտեզագրական հրատարակությունները լույս է ընծայել 55 լեզուներով: Դրանց թվում նաև հայերեն լեզվով:

Սովետահայ քարտեզագրությունը՝ մեր նոր գարաշրջանում, կոմունիզմի կառուցման ժամանակներում, բնության վերափոխության մեծ նպատակներին ծառայելու համար իր առաջ ձառցած է տեսնում մի շարք գործնական խնդիրներ:

Սովետահայ քարտեզագրությունը պետք է լուծի՝

ա) Երեանում գիտահետազոտական հիմնարկների պատրաստած Հայկական ՍՍՌ մի շարք մասնագիտական քարտեզների տպագրության հարցը:

բ) Համապատասխան գիտական ուժերի համախմբումը և ուսցիունալ օգտագործումը:

գ) ՍՍՌՄ կենտրոններում ցրված հայ քարտեզագրական կադրերի մասնակցությունը Երեանում կատարվող աշխատանքներին:

դ) Երեանում գիտականորեն սարքավորված քարտեզագրական մեծ լարուառորիս (աշխատանոց) կազմակերպելը:

ե) Սովետահայ քարտեզագրական պրոդուկցիայի (որակի) բարելավումը:

զ) Սովետական Հայաստանի մնացած աշխարհագրական օրյեկտների անունների ճշտման գործի շարունակելը Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի աշխարհագրական հանձնաժողովում: և ուսուպուրիկայի վարչական օրյեկտների անունների ճշտման գործը՝ Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահության տառապարձական հանձնաժողովում:

Սովետահայ քարտեզագրության այդ մի քանի գլխավոր շռչափած խնդիրները լուսարանելու նպատակով պետք է նկատի ունենալ հետեւյալ հանգամանքները.

Քարտեզագրությունը մեզանում սերտորեն կապվում է

երկրի բնական հարստությունների ուսումնասիրության, արտադրողական ուժերի հետազոտման, ժողովրդի կուլտուրական գործացման խնդիրների հետ:

Սովետական ժամանակաշրջանի ցուցակում նշված հայ քարտեզագրական հրատարակությունները գեռիս չեն տալիս լրիվ և իրական պատճերը այն խոշոր չափի տեղագրական աշխատանքների մասին, որոնք ծավալվել են Սովետական Հայաստանում ուսուցությայի գիտական ուժերի կողմից:

Առաջին հերթին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի գիտական հիմնարկները, ապա նաև Սովետական Հայաստանի, գլխավորապես մայրաքաղաք Երևանի այլ գիտական հաստատությունները մշակել են պատրաստել են մի շարք կարևոր քարտեզներ, որոնք սպասում են տպագրության, այն է՝ Հայկական ՍՍՌ 500.000-նոց մասշտարի — գեղողիական, տեկտոնիկ, գենոմորֆոլոգիական, հոդագիտական, բուսաբանության, կենդանական աշխարհի, ֆիզիկո-աշխարհագրական շրջանացման բազմագույն քարտեզները: Սովետական Հայաստանի 200.000-նոց մասշտարի տնտեսական քարտեզը:

1.000.000-նոց մասշտարի՝ մթնոլորտային տեղումների, որսի կենդանիների քարտեզները և այլն:

Երևան քաղաքի և նրա արվարձանների միացյալ հատակադիմություն:

Չոր արևադարձային նոր բույսերի ու կուլտուրաների մշակումը ՀՍՍՌ-ում, անտառապատման աշխատանքները ՀՍՍՌ-ում, ելեկտրիֆիկացումը և ոռոգման ցանցը ՀՍՍՌ-ում, Հայկական ՍՍՌ սեյսմիկ ուսումնասիրությունը, ալպինիստական, տուրիստական մարշրուտային քարտեզները:

ՀՍՍՌ գիտական ուսումնասիրվածության աստիճանը ժողովրդական անտեսության վերաբերյալ (ո՞ր ճյուղը և վարչական ո՞ր շրջանը, ո՞ր չափով և այլն):

Հիշյալ քարտեզագրական աշխատությունները սպասում են տպագրության:

Այդ թվարկումը վկայում է, որ մի շարք մասնագետներ, բնականաբար ձգուում են քարտեզի վերածել իրենց գիտական աշխատությունները, կամ թե կամենում են քարտեզներով լուսաբանել, ցուցաբերել իրենց մշակած գիտական նյութը: Սակայն, այդ գործում հանդիպում են քարտեզագրական որոշ դժվարությունների, չեն պահպանում քարտեզագրության անհրաժեշտ կառունները:

Անվիճելի է, որ քարտեղն առհասարակ, իսկ մասնագիտական քարտեղն առավել, գիտական աշխատանքի արդասիք է, գիտական՝ գործ է:

Եթե քարտեղի նյութը, բովանդակությունը նկարագրենք, պարզաբանենք՝ կստանանք գիտական աշխատության նյութը, ինչպես տեսնում ենք վերը թվարկումից, միանդամայն հնարավոր է արտահայտել քարտեղի միջոցով։ Այդ տեսակետից համարյա չկա գիտական բնագավառ, որի արդյունքները հնարավոր չլիներ վերածել քարտեղագրական արտահայտության։

Մրանից բխում է այն, որ զանազան մասնագետների և աշխարհագետ-քարտեղագետների համասեղ գործակցությունն անհրաժեշտ է գործի օգտակարության համար։ Կազմողների, խմբագրողների միացյալ գործունեությունը առաջնակարգ պայման է լավորակ գիտական քարտեղագրական արտադրանք տալու համար։

Ինչպես տեսնում ենք այս աշխատության № 4 հավելվածում՝ ՀՍԾից դուրս, Թբիլիսիում, այլև ՍՍՌՄ ավելի հեռավոր կենտրոններում՝ Լենինգրադում, Մարտովում, Շուստովում, Տաշքենդում աշխատում են քարտեղագրության որակյալ հայ կադրեր, որոնց կարելի է մասնակից դարձնել Երևանում կատարվող աշխատանքներին։ Նրանցից բացի, ՍՍՌՄ կենտրոններից պետք է հրավիրել աջակցելու քարտեղագրության տպագրական պրոցեսին լավատեղյակ մասնագետներ։

Սովետահայ քարտեղագրության հետագա զարգացման համար անհրաժեշտ կադրեր կան։ Նրանց անհրաժեշտ է մասնակից դարձնել, խմբավորել՝ գծագրող, քարտեղագրիր, վիմագրող, փորագրող, լուսանկարող, արտագծող, որբագրող, հաշվող և այլն պրոֆեսիաների։

Հայտնի է, որ Երևանում մի շարք գիտական և պետական հիմնարկներում, օրինակ, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գեոլոգիական ինստիտուտում, ՀՍՍՌ Գյուղատրնտեսության մինիստրությունում, Հայկական Գեոլոգիական վարչությունում և մի շարք այլ հաստատություններում գոյություն ունեն մասնակի քարտեղագրական աշխատանոցներ՝ ոչ համաշափ միջոցներով, պարագաներով, ու կադրերով։

Մինչդեռ Հայկական ՍՍՌ մայրաքաղաքը պետք է ունենախոչը մասշաբարի, կանոնավոր սարքավորված, տեխնիկական պի-

տույքներով ապահով, տարրերունակ կադրերով լրիվ օժտված քարեզմագրական լաբորատորիա՝ բարդ ու գժվարին պահանջները կատարելու համար:

Վերը մեր կողմից թվարկված ՀՍՍՌ քարտեզներից շատերը լավագույն գեղքում մնում են տվյալ հիմնարկի սահմանափակ թվով աշխատակիցների օգտագործման արդասիք: Այդ քարտեզների մի մասը ցուցագրվել է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի կամ Կուլտուրայի տան ցուցահանդեսներում ընդհանուրի գիտողության համար:

Այդ քարտեզների բազմատիրած հրատարակությունը կարևոր է երկրի տնտեսական, կուլտուրական զարգացման համար:

Դրանց հրատարակման զյուավոր գժվարություններից մեկը հեռավոր վայրերում լույս ընծայելն է:

Հայ քարտեզագրական հրատարակությունների մեր կատարած անալիզը ցույց տվեց, թե որքան պակասություններ են պարունակում նրանք: Գիտողություններ ունենք ոչ միայն մեր զննածների մասին, այլ նաև մյուսների, նկատմամբ, որոնց անալիզը մենք կատարել ենք, բայց տեղի սղության պատճառով չենք գետեզում այս աշխատության մեջ:

Եթե կազմողի, տպագրողի, խմբագրողի աշխերի առաջ այնուհանդերձ կամքից հակառակ սպրդում են վրիպակներ, ապա սխալների քանակը կրկնապատկվում է հեռավոր վայրերում տըպագրության գեղքում: Հեռավոր վայրերում տպագրված հայքարտեզագրական հրատարակությունների սխալները բխել են հաճախ նրանից, որ փորագրողները, վիմագրողները, գծագրողները, քարտեզագրեաները չեն իմացել հայերեն լեզուն, կամ որոշ չափով իմանալով, հեշտությամբ շփոթել են հայերեն նման տառերը Ն և Զ, Ս և Ո, Բ և Յ, Ձ և Ց, ա և ո և այլն:

Այդ բոլոր գիտողությունները, ինչպես և Երևանում կազմված տպագրության սպասող բազմաթիվ մասնագիտական քարտեզները, մի շարք մասնագետների և աշխարհագետների առկայությունը և քարտեզագրական կադրերի համախմբման հնարավորությունը, քարտեզագրական կենտրոնական խոշոր գծագրանոցաբորարիա կազմակերպելու կարիքը, հեռավոր վայրերում ՀՍՍՌ քարտեզներ տպագրելու գժվարությունները՝ անհետաձգելի անհրաժեշտություն են զարձնում առայժմ հիմնել երևանում քարտեզագրական խոշոր արհեստանոց:

Այդ մասին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նախագահությունը 1949 թվականի իր արձանագրություն-

Ների մեջ ունի համապատասխան որոշում, որը, սակայն, չի իրականացվել:

Սովետական Հայաստանում կա բազա քարտեզագրական խոշոր արհեստանոց հիմնելու համար: Մինչ այդ հարկավոր է օգտագործել՝

1. Հայպեհրատի վիմագրատունը, որտեղ 1938 թվականին տասնչորս գույնով տպագրվել է ՀՍՍՌ տնտեսական գիպատմենորիկ քարտեզը՝ իսկ ներկայումս ունի նաև օֆսեթ մեքենա:

2. Հայպեհրատի ցինկոգրաֆիան:

3. Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ցինկոգրաֆիան ու տպարանը, որտեղ հաջող կերպով պատրաստում են տպագրում են գույնալոր (մի քանի գույնի) իլյուստրացիաները:

Այդ կատարելու դեպքում հնարավոր կինքի բարելավել և բարձրացնել սովետահայ քարտեզագրական հրատարակությունների որակը:

Քետք է նշել, որ սովետական քարտեզագրական հրատարակությունները շատ դեպքերում՝ տեսակի, բնույթի, բովանագակության, տեքստի, տիրաժի հարցերում գերազանցել են օտարերկրյա հրատարակություններին. սակայն որակի հարցում (թուղթ, գույն, փայլ, գեղարվեստական կողմ) գեռես լրիվ չափով չեն գերազանցել նրանց: ՍՍՌՄ քարտեզագրությունը Ծովային Ալլասի 1 և II հատորների սուսերեն հրատարակության մեջ գեղազանցել է նաև այդ գծով:

Քարտեզագիտությունը (картоведение) գիտություն է, իսկ քարտեզագրությունը (картография) և գիտություն է և արվեստ. այդտեղ գիտական ճշգության հետ պահանջվում է նաև գեղարվեստական կատարում:

Սովետահայ քարտեզագրության վերջին կարևոր խնդիրներից մեկն էլ տեքստի հարցն է՝ աշխարհագրական անուններն են: Այդ հարցը ստորաբաժանվում է 2 մասի՝

1) Զանազան քարտեզների (Աշխարհ, աշխարհամասեր, ՍՍՌՄ, կովկաս, ՀՍՍՌ և այլն) աշխարհագրական անունների հայերեն տառագարձության և թարգմանելու հարցը:

2) Հայկական ՍՍՌ քարտեզների աշխարհագրական անունների սուսերեն տառագարձությունը:

Ինչպես պարզվել է՝ Խուսաստանում և օտար երկրներում մինչովետական ժամանակաշրջանում լույս տեսած հայ քարտեզագրական հրատարակությունների մեր կատարած վերլուծու-

թյունից, աշխարհագրական անունների հայերեն տառադարձությունը կատարվել է անքննազմա կերպով:

Սովետական ժամանակաշրջանում, Հայկական ՍՍՌ-ում այդ հարցերի լուծման գծով մասնակի փորձեր արել են մի շաբահաստատություններ՝ նախկին Հայկական Խորհրդային Հանրագիտարանը, ՀՍՍՌ Հուսավորության ժողովրդական կոմիսարիատը (հանձին Աշխարհագրական հանձնաժողովի՝ դպրոցական քարտեղների համար), ՀՍՍՌ Աշխարհագրական ընկերությունը (Աշխարհագրական ցուցակ ձևանարկելիս), ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Տնտեսագիտության ինստիտուտը (ՀՍՍՌ առլասը կազմելու կապակցությամբ և այլն):

ՀՍՍՌ տեղանունները ըստ իրենց բնույթի երկու կարգի են՝

1) Ֆիզիկո-աշխարհագրական օբյեկտների (լեռների, գետերի, լճերի և այլն) անուններ, որոնցից գլխավորները՝ 430 անուն ճշտել է ՀՍՍՌ ԳԱ Աշխարհագրական հանձնաժողովը, հավանություն է ստացել ՀՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության կողմից: ՀՍՍՌ աշխարհագրական անուններից հանված են թուրքական դադ, չայ, սու, գյուլ արտահայտությունները և փոխարինվել են հայկական լեռ, սար, գետ, ջուր, լիճ նույնականացնելու հայտագրության մեջ:

2) Վարչական օբյեկտների (բնակավայրեր, երկաթուղարքին կայաններ, շրջաններ) անունները ճշտվել են հաստատվել են ՀՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության կողմից:

Մեզ մոտ գտնվում են գիտնականներ, որոնք աչքաթող են անում աշխարհագրական անունների ճշտման այդ երկու կարգը:

Նկատի ունենալով, որ նախկին թուրքական բռնակալ տիրապետությունից գեռնս ժառանգություն են մնացել Փիզիկո-աշխարհագրական մանր օբյեկտների բավականաչափ օտարության հարցում, իսկ բնակավայրերից մի քանի հարյուր անհարազատ անուններ, անհրաժեշտ է, որպեսզի թե ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Աշխարհագրական հանձնաժողովը և թե ՀՍՍՌ Գերագույն Սովետի Տառագրածական հանձնաժողովը շարունակեն իրենց բազմօգուտ աշխատանքները՝ ՀՍՍՌ տեղանունների ճշտման սկսած կարեոր գործն ավարտելու՝ Սոցիալիստական Հայաստանը ձևով ազգային դարձնելու նաև քարտեզագրության մեջ:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1. Տ Ո Ւ Յ Ա Կ

ՔԱՂԱՔՆԵՐԻ ԵՎ ԵՐԿՐՆԵՐԻ, ՈՐՏԵԴ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՀՈՅ  
ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(այբբենական կարգով)

ա) ՕՏԱՐԵՐԿՐՋԱ ԱՊԵՏՈՒՐՋՈՒՅՆԵՐՈՒՄ

1. Ամստեղքամ (Հոլանդիա)
2. Բաղել (Շվեյցարիա)
3. Բեռլին (Գերմանիա)
4. Գաճիբեկ (Եղեգանաս)
5. Ճնհ (Շվեյցարիա)
6. Կ. Պոլիս (Թուրքիա)
7. Վենետիկ (Իտալիա)
8. Վիեննա (Ավստրիա)
9. Փարիզ (Ֆրանսիա)

բ) ՄԻԱՎԵՏՄԱԿԱՆ ԾՐՈՒԱՍՏԱԲՈՒՄ

1. Բաքու

2. Թիֆլիս

3. Մոսկվա

4. Պետերբուրգ

5. Սովետական Միությունում

6. Գոնի Ռուսով

7. Երևան

8. Թբիլիսի

9. Լենինգրադ

5. Խարկով

6. Մինսկ

7. Մոսկվա

8. Ռիգա

## 2. Յ Ո Ւ Յ Ա. Կ

ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ՈՒՆԵՑԵԼ  
ԵՆ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԵՐ

(այբբենական կարգով)

ա) Մինչսովետական ժամանակաշրջանում

1. Գողթանի վանանդեցիների խումբը Ամստերդամում
2. Հայկական Ազգագրական ընկերությունը Թիֆլիսում
3. Հայկական Ազգային պատվիրակությունը Փարիզում
4. Հայկական Բարեգործական ընկերությունը Թիֆլիսում
5. Հայկական Կոլտուրական Միությունը Բաքվում
6. Հայկական Եկեղեցին Էջմիածնում
7. Հայկական Ուսանողական Միությունը Արևմտյան Եվրոպայում (Ժնև)
8. Միկթարյանների Միաբանությունը Վենետիկում
9. Միկթարյանների Միաբանությունը Վիեննայում

բ) Սովետական ժամանակաշրջանում

1. Երեանի Քաղաքային Սովետ
2. Հայաստանի Կոմունիստական ռազմակայի հենարոնական Կոմիտե
3. Հայաստանի Կոմունիստական պարտիայի երևանի Կոմիտե
4. Հայկական ՍՍՌ Առողջապահության մինիստրություն
5. Հայկական ՍՍՌ Գերազույն Սովետ
6. Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիային կից Աշխարհագրական ընկերություն
7. Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիային կից Աշխարհագրական թիստուտ
8. Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Բուսաբանական ինստիտուտ
9. Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
10. Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ինստիտուտ
11. Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտ
12. Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Տնտեսագիտական ինստիտուտ
13. Հայկական ՍՍՌ Գյուղատնտեսության մինիստրություն
14. Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրություն

15. Հայկական ՍՍԾ Խճուղիների վարչություն  
16. Հայկական ՍՍԾ Կենտրոնական վիճակագրական վարչություն  
17. Հայկական ՍՍԾ Հիգրոմետեորոպլոդիական վարչություն  
18. Հայկական ՍՍԾ Մինիստրըների Սովետ  
19. Հայկական ՍՍԾ Պետական Հաստարակչություն  
20. Հայկական ՍՍԾ Պետհրատի վիճակբառուն  
21. Հայկական ՍՍԾ Պետալլան  
22. Հայկական ՍՍԾ Տուրիստական վարչություն  
23. Հայկական Նախկին Խորհրդային Հանրագիտարան  
24. Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտ (Երևանում)  
25. Մոլոտովի անվան պետական համալսարան Երևանում  
26. Աւանի կոմիտե (Երևանում)

Յ. Յ Ա Յ Ա Կ

Հեղինակների, ԿԱԶՄՈՂՆԵՐԻ, ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ, ԽՈՐՃՐԴԱՏՈՒՆԵՐԻ,  
ՆԱԽԱԶԵՌՆՈՂՆԵՐԻ, ՀՐԱՏԱՐԱԿԻՁՆԵՐԻ

(այլբենական կարգով)

Արեդյան Ա.	Թումանյան Հովհ. (բանաստ.)
Ադամյան Ն.	Խնձիճյան Դ.
Ալավերդյան Գ.	Լալայան Ե.
Ալիշան Դ.	Լայստեր Ա. Ֆ.
Այտընյան Ա.	Լեօ
Ավագյան Ա.	Լիսիցյան Ստ.
Ավալեզյան Ա.	Խանզադյան Զ.
Ավգալեկյան Ա.	Խատիսյան Կ.
Բարյան Լ.	Խուդաբաշյան Ա.
Բաղզասարյան Ան.	Կամսարական Ա.
Բամմաջյան Կ.	Կարսպետյան Հովհ.
Բերբերյան Ա.	Կարսպետյան Մ.
Բժշկյան Մին.	Կիրեկ Ն.
Բիխով	Կոմարովսկի Վ. Գ.
Գարբիելյան Ա.	Կոջոյան Հակոբ.
Գալուսյան Բ.	Կոչեղովսկի Մ.
Գևորգ Մեսորք	Կորկուտյան Զ.
Գյողակյան Հ.	Կուղնեցով Ս. Ա.
Գրիգորյան Գաբր.	Հակոբյան Հովհ.
Գրիգորյան Հ.	Հարությունյան Ալ.
Գրիգորյան Օ.	Հովհաննիսյան Հայր.
Գրոսգել Ա. Ա.	Համբարյան Պ.
Գավիզով Վ.	Հափաղարյան Կ.
Երեմյան Ս. Տ.	Հովկասով Ա.
Եվանդուլյան Ա.	Ճուղուրյան Ա.
Զաքարյան (Էղբնից)	Մալինովսկի (ինժ.)
Էլիրեկյան Հ.	Մաղաքյան Հար.
Էփրիկյան Հ. Ա.	Մանանցյան Հ.
Թախտաջյան Ա.	Մանիսաճյան Հ.
Թամանյան Ալ.	Մունթյան Գ.
Թուլմաս Կլ.	Նաղարեթյան Կ.
(Գողթանից)	Ներսիսյան Ա.

Նուլիջանյան Ղուկաս վա-  
նանդեցի (Գողթանից)  
Շահմուրադյան Ա.  
Շահմուրադյան Կ.  
Շահմուրադյան Ա.  
Շելուդյակովա (ինժ.)  
Զարչան Բ.  
Զիթյան Ա.  
Պավլով Մ. Զ.  
Պատկանյան Բ.  
Պաֆնովյան Կ. Ն.  
Պիտերճյան Ա.  
Զավախիչիլիլի Ա. Ն.  
Մարգոսյան Նելլ  
Մենգերովա Մ. Ե.  
Սկուբինա Պ.  
Մակարյան Հովհաննես  
Վարդանյան Գ.  
Տատյան Հ.  
Տեր-Գրիգորյան Ա.  
Տեր-Հակոբյան Ա.  
Տեր-Հովհաննելիյան Ա.  
Տեր-Մարտիրոսյան Գ.  
Տրետյակովա Վ.  
Տրոիցկի Ն. Ա.  
Տուգուլով Վ.  
Տիմակյան Ա.  
Քալանջյան Բ.  
Քոչարյան Ա.  
Քոչիստովյան Բ.  
Ֆոն Մայորթեր Հ.

4. Ց Ա Ւ Ց Ա Կ

ՔԱՐՏԵԶԱԳԻՐՆԵՐԻ, ԳՄԱԳՐՈՂՆԵՐԻ, ՎԻՄԱԳՐՈՂՆԵՐԻ,  
ՓԱՐԱԳՐՈՂՆԵՐԻ

(ՊՅԲԲԵՆԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ)

- |                            |                                 |
|----------------------------|---------------------------------|
| Աղամյան Ա. (Երկան)         | Մինսոյան Ա. (Երկան)             |
| Ահարոնյան Ա. (Երկան)       | Միզոյյան Վ. (Թիֆլիս)            |
| Արշատյան Գ. (Երկան)        | Միջարջյան Բ. (Երկան)            |
| Արշատյան Ռ. (Երկան)        | Միկթարյան Ա. (Երկան)            |
| Ավարեղեղյան Մ. (Երկան)     | Մուրագովա Ռ. (Թիֆլիս)           |
| Ավետիսյան Ա. (Երկան)       | Մուսայելյան Ա. (Երկան)          |
| Գասպարյան (Երկան)          | Նահապետյան Ծ. (Երկան)           |
| Գրիգորյան Մ. (Երկան)       | Նորբչանյան Միքայել Վանան-       |
| Գրիգորյան (Երկան)          | դեցի, Գողթանից (Ամստերդամ)      |
| Գործակալյան Հ. (Երկան)     | Շահրազյան Գ. (Թիվիսի, Երկան)    |
| Դանչոն Ե. (Երկան)          | Շահմուրազյան Ա. (Երկան)         |
| Դավթյան Ա. (Լենինգրադ)     | Շահմուրազյան Կ. (Բաքու—         |
| Դյուստերփիկ (Թիֆլիս)       | Եամիրյանցներ (Վենետիկ)          |
| Դոխիկյան Օ. (Երկան)        | Շիշմանյան (Երկան)               |
| Երկարյան Ա. (Թիֆլիս)       | Շխոներեկ Աղբականուս (Ամստերդամ) |
| Իսահակյան (Լենինգրադ, Թիվ- | Շխոներեկ Պետրոս (Ամստերդամ)     |
| լիսի)                      | Շտրանս Ա. (Թիֆլիս)              |
| Լեզիտ (Թիֆլիս)             | Չայգեցյան Վ. (Վենետիկ)          |
| Խարիսնկայա (Մոսկավա)       | Չիմինյան Վ. (Երկան)             |
| Կամսարական Ա. (Երկան)      | Չիմոնուկ Աղբականուս (Ամստերդամ) |
| Կարապետյան Մն. (Երկան)     | Չիմոնուկ Պետրոս (Ամստերդամ)     |
| Հախնազարյան Հ. (Երկան)     | Շարանս Ա. (Թիվիսի)              |
| Հավհաննիսյան Լ. (Երկան)    | Չգան Մ.                         |
| Հաւկորյան (Տաշքենդ)        | Չայգեցյան (Թիվիսի)              |
| Հովհաննիսյան Մատթևոս Վա-   | Պալճյան (Վենետիկ)               |
| նանգեցի Գողթանից (Ամստեր-  | Սաթլիչան Ա. (Երկան)             |
| դամ)                       | Սարկոսյան Ա. (Երկան)            |
| Ղալամով (Թիվիսի)           | Սարկոսյան Պ. (Թիվիսի)           |
| Ճենտերեճյան Ա. (Վենետիկ)   | Սուլմանինով (Երկան)             |
| Մարիամյան Վ. (Թիվիսի)      | Սյունուկ (Փարիզ)                |
| Մանկելյան Մ. (Երկան)       | Վ. Ե.                           |
| Մելիքյան Սորի (Երկան)      | Վալաբյան (Մաստառվ)              |
|                            | Ոսկանյան Ա. (Երկան)             |
|                            | Փափազյան Յ. (Պուլիս)            |
|                            | Քյուչուկյան Մ. (Երկան)          |
|                            | Օքանեսյան Ա. (Թիվիսի)           |

## Օգտագործված գրականություն

### ՄԱՐՔՍԻ ԶՄԻՒ ԿԱՍՏԻԿՆԵՐ

- В. И. Ленин., Указания к составлению географического атласа и экономических карт, II., 1921 (*տե՛ս „БСАМ“*, т. I).  
К. Маркс, Капитал, т. III.  
Ф. Энгельс, Диалектика природы.

### ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Г. Абих, Геология Армянского нагорья; часть Западная, изд. КОРГО, 1889.  
Г. Абих, Геология Армянского нагорья; часть Восточная, изд. КОРГО, 1902.  
Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПБ, 1908.  
Алагез (Арагац), сборник, изд. Академии наук СССР.  
Հ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890:  
Հ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893:  
Հ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885:  
Հ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1895:  
Հ. Ալիշան, Քաղաքական աշխարհագրություն:  
Անտիկ Շիրակ պատմություն և տունար, Երևան, 1940:  
Армянская география VII века, изд. К. П. Патканова, СПБ, 1877.  
Л. Аусвейт, Как открывали земной шар, М.—Л., 1939.  
Բագրեմիք, Ամազոն, Վենետիկ, 1927:  
Н. Н. Баранский, Вопросы экономической картографии, М., 1939—40.  
Бараш, Состояние топографической изученности территории СССР, 1933.  
Л. С. Берг, Очерк истории русской географической науки, М.—Л., 1929.  
Библиография картографической литературы и карт, М., 1939.  
Большая Советская Энциклопедия 2-е изд., статьи: Глобус, Земной шар,  
Земля, Землеведение, Географические науки, Географические  
карты, Картография, Армянская ССР и др. М., 1950—1953.  
Большая Энциклопедия, изд. „Просвещение“, статьи: Глобус, География,  
Картография, Карты, 1905.

- М. С. Боднарский, Очерки по истории русского землеведения, 1947.
- В. Я. Брюсов, Летопись историч. судеб армянского народа, М., 1918.
- Н. М. Быковский, Картография; историч. очерк, М.—Л.. 1923.
- Вахушти, География Грузии, на груз. языке, изд. Тбил. госуд. унив. Тбилиси, 1941.
- Н. И. Виноградов, Карты и атласы, М.—Л., 1941.
- В. В. Витковский, Картография, 1907
- В. В. Витковский, Топография, 1928.
- Вопросы географии и картографии, изд. БСАМ, М., 1935 (сборник статей: Мотылева, Шокальского и др.).
- Вопросы географии, Картография, вып. 11, М., 1949.
- Географические наименования Армянской ССР, на арм. и русск. языках, Ереван, 1951.
- Геодезия — Справочное руководство, т. VI, Картография, М.—Л., 1939.
- Геологическая служба Армянской ССР за 25 лет, М.—Л., 1945.
- А. В. Граур, Математическая картография, Л., 1933.
- А. А. Григорьев, Армения, Новый энциклопедический словарь Брокгауза и Ефроня, СПБ, 1913.
- А. О. Гукасов, Основные черты строения Армянского нагорья, изд. КОРГО, Тифлис, 1901.
- Двадцать лет советской геодезии и картографии, в двух томах, М., 1939.
- Հայաստանի պատմութեան, Օրշաբութիւն, Երևան, 1939:
- Т. Зондерван, Географическая карта, ее история, составление, воспроизведение, перевод под ред. Ю. М. Шокальского, 1909.
- Դ ն ա բ հ ե ն, Ա լ ա բ ր հ ա գ ր ութիւն չորից մասնաց աշխարհի, 1803—1805:
- Инструкция ГУГК СССР о подготовке к изданию топографической карты, в м. 1:200,000, М., 1933.
- Инструкция ГУГК СССР о составлении и издании административно-хозяйственной карты района, М., 1937.
- История Армянского народа, т. I, Ереван, 1951.
- С. В. Калесник, Основы общего землеведения, М.—Л., 2-е изд., 1955.
- О. Т. Карапетян Геологический очерк ССР Армении, Ереван, 1928.
- Л. Ц. Климентов, План и карта, 1924.
- Я. Г. Князев, Краткое описание фотомеханических способовrepidukции карт. 1930.
- Г. Крамер, Вселенная и человечество, т. I, СПБ, 1904.
- Ф. Н. Крассовский, Высшая геодезия, ч. II, 1932.
- Ф. Н. Крассовский, Новые картографические проекции, 1922.
- Թ. Հ ա բ ր յ ա ն, Հ ա յ ա ս տ ա նի պ ա տ մ ա կ ա ն ա շ խ ա ր հ ա գ ր ություն, հ. I, II, III, Երևան 1951—1954:
- Հ ա ն դ է ս ա մ ո օ ր կ ա շ յ, Ա լ ա բ ի ր, Վ ի կ ն ա շ, 1928:
- М. Лалемян, Карта всего света в милл., масштабе, 1911.
- В. Лебедев, География в России Петровского времени, 1950.
- В. Лебедев, География в России XVII века, 1949.
- Գ. Լ ե ն յ ա ն, Հ ա յ գ ր ը և ա պ ա գ ր ության ա ր վ ե ս տ ը, Երևան, 1946:

- Լ ե օ ,** Հայ տպագրութեան պատմութիւնը, Թիֆլիս, 1901:
- Լ ե օ ,** Հայոց պատմութիւն, Երևան, 1946—47:
- Լ ե օ ,** Առջայիշան կապիտալ, Երևան, 1934:
- Х. Ф. Б. Линч, Армения, ч. I и ч. II, Тифлис, 1910.
- Г. Н. Лиодт. Картоведение, М., 1935.
- Ս . Լ ի ս ի յ ա ն ,** ՀՍՍՌ Փեղիկան աշխարհագրություն, Երևան, 1940:
- Малая Советская Энциклопедия, изд. II, статьи: глобус, география, карты и т. д., М., 1934—1936.
- Հ . Մ ա ն ա կ յ ա ն ,** Պատմական-աշխարհագրական հետազոտություններ, Երևան, 1945:
- Н. Я. Марр. Кавказский культурный мир и Армения, Тифлис, 1915.
- Э. Мартони, Основы физической географии, ч. I, М.—Л., 1939.
- Матенадараи в его ценнейших уникумах, Ереван, 1939.
- Михайлов, О проекциях на секущем конусе, сохраняющих размеры по меридианам, Отчет Моск. О-ва астрономов, 1911—1912.
- Մ ո վ ս կ ս Խ ո ր ե ն ա ց ի ,** Պատմութիւն Հայոց, Տփիփի, 1913:
- Ст. Назарянц, Обозрение истории гайканской письменности в новейшие времена, Казань, 1846.
- М. Неймайер, История Земли, 1898.
- Ф. Освальд, К истории тектонического развития Армянского нагорья, Тифлис, 1916.
- К. Патканов, Библиографический очерк армянской исторической литературы, СПБ, 1879.
- К. Н. Пафенгольц, Геология Малого Кавказа и прилегающих частей, Հայերեն թարգմանություն, Երևան, 1946:
- А. Пенк, О составлении и издании карты всей земной поверхности в милл. масштабе, 1911.
- Постановление партии и правительства по вопросам географии и карт, М., 1934.
- Преображенский, Русские карты и атласы. М., 1953.
- Э. Реклю. Земля, СПБ, 1901.
- Э. Реклю, Человек и Земля, СПБ, 1906—1909.
- Э. Реклю, Всеобщая география, Земля и Люди, СПБ, 1887.
- К. А. Салищев, Основы картоведения. М., 1940.
- К. А. Салищев, Технические приемы составления топографических и географических карт, 1933.
- Севан—Бассейн озера, сборники, изд. АН СССР, 1929—1933.
- В. Сиверс, Всемирная география в 7 томах, СПБ, 1905.
- М. И. Силищенский, Историческое введение к атласу, М., 1929.
- Ս բ ե կ ո ն Լ ե հ ս ց ի ,** Աւդեգրութիւններ, Վենետիկ, 1936:
- М. Д. Соловьев, Картографические проекции, М.—Л., 1937.
- П. И. Суворов, Литография, 1927.
- М. А. Тиссо, Изображение одной поверхности на другой и составление географич. карт, 1839.
- Тихомиров, Главные даты в истории географической науки, М., 1926.

Указатель географических наименований БСАМ'а и проекций БСАМ.  
М., 1940.

Указатель географических названий Морского Атласа, 1952 г.

Н. Урмазев, Проекции карт масштаба 1:1.000.000 и 1:500.000, 1935.

Физическая география Армянской ССР, пособие, Ереван, 1948.

Физическая география Армянской ССР, учебник для средних школ на арм. яз., Ереван, 1951 и 1954.

Մ. Մ. Խաչատրյան, Քարտեզագրական պրոյեկցիաներ, Երևան, 1946:

Մ. Մ. Խաչատրյան, Քարտեզագրություն, Երևան, 1949:

Ходорович, Записки по картографии, 1935.

Худабашев, Обозрение Армении, 1855.

Н. Я. Цнигер, О наивыгоднейших видах конических проекций, Изв. АН СССР, 1926, № 17.

Ю. М. Шокальский, Из истории географии, М., 1926.

Ю. М. Шокальский и А. А. Тилло, Исчисление поверхности Азиатской России, 1905.

Энциклопедия немецкая

Հ. Ս. Էֆրեմյան, Բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1903—1905:

Ющенко, Картография, 1940.

## Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Յ Յ Ո Ւ Ն

Էջ

Երաժշտություն . . . . .

5

### I Մաս

Ընդհանուր դիտողություններ հայ քարտեզագրական նրատարակությունների մասին . . . . .

7

### II Մաս

Ցուցակ հայ քարտեզագրական նրատարակությունների 1695— 1955 թթ. . . . .	39
1. Մինչովետական ժամանակաշրջան. տպագրված օտարերկրյա պետություններում . . . . .	43
2. Մինչովետական ժամանակաշրջան. տպագրված ցարական Թուսաստանում . . . . .	47
3. Սովետական ժամանակաշրջան . . . . .	50

### III Մաս

Հայ քարտեզագրական նրատարակությունների վերլուծությունը . . . . .

65

Հայ քարտեզագրական մի քանի բնորոշ հրատարակությունների վերլուծությունը . . . . .

67

1. 1695 թ. Ամստերդամում հրատարակված առաջին հայերեն տպագիր քարտեզի՝ «Համատարած Աշխարհացոյց»-ի համառոտ զննությունը . . . . .	69
2. 1849 թ. Վենետիկում հրատարակված հայերեն մեծագիր աշխարհագրական ատլասի՝ «Աստղա Աշխարհացոյց Պատկերաց»-ի մասին . . . . .	77
3. 1850 թ. Վենետիկում պատրաստված առաջին հայերեն գլուխութիւն («Երկրագնդից») մասին . . . . .	85

4. Օտարերկրյա հայկական մի քանի այլ քարտեզագրական հրատարակությունների մասին . . . . .	107
Ոռուսական միապետության ժամանակաշրջանի հայ քարտեզագրական մի քանի հրատարակությունների մասին . . . . .	110
Սովետական ժամանակաշրջանի հայ քարտեզագրական հրատարակու- թյունների մի քանի նմուշների մասին . . . . .	116
Սովետական ժամանակվա հայ քարտեզագրական հրատարակություն- ների համառոտ ամփոփումը . . . . .	131
<b>IV Ա Ա</b>	
Սովետահայ քարտեզագրության արդի խնդիրները . . . . .	135
1. Երկանը սովետական ժամանակաշրջանի հայկական կուլ- տուրական կենտրոն . . . . .	137
2. Հայկական սովետական քարտեզագրության առաջ ծառացած արգի խնդիրները . . . . .	138
Հազ կ է լ զ ա ծ ն ե թ . . . . .	145
Օ զ ա ա զ ո թ ծ զ ա ծ զ ր ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն . . . . .	153

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍԻ ԱՏԵՓԱՆՑԱՆ

«Հայ քարտեզագրական հրատարակությունները  
260 տարում» (1695—1955)



Պատ. խմբագիր Ս. Տ. ԵՐԵՄՅԱՆ  
Հրատ. խմբագիր Ա. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ  
Նկարչական ձեավորումը Հ. Կ. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆԻ  
Տեիր. խմբագիր Լ. Ա. ԱԶԻԶԵԿՅԱՆ  
Վերսուուդող որբագրիչ Ա. Հ. ԱԼԱՆՅԱՆ

Վֆ 06590	Խչի 364	Հրատ. 1350	Պատվեր 482	Տիրաժ 1500
Հանձնված է արտագրության 22/XII 1956 թ., սոսուագրված է տպագրության 15/VI 1957 թ., թուղթ 60×92 <sup>1</sup> / <sub>16</sub> : Հրատ. 7,6 մամուլ, տպագրական 10 մա- մուլ + 1 ներդիր:			Գինը կազմով 5 ռ.	

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչության տպարան, Երևան, Աբովյան 124:

Վ Բ Ի Պ Ա Կ Ե Տ Բ Ռ

Էջ	Տար	Տողած է	Գիտք է լինել
49	21 վերհեց	Ժ. 1:1.000,	Ժ. 1:1.000.000,
54	7 յածից	25 սմ: Տըամագծով,	25 սմ տըամագծով,
120	17 յածից	սղատվանդանով 30 սմ,	սղատվանդանով 50 սմ,

ԳՐԱԴ 5 Ռ.

12165